Azg Ազգ

8 ՓԵՏՐՈՒԱՐ 2005 ԵՐԵՔՇԱԲԹԻ 21(3187)

Գրադարան

Սթիվեն Մանը չի կարեւորում ԵՄԽՎ ղարաբաղյան բանաձեւը

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Սթիվեն Մանը չի կարեւորում Ղարաբաղի մասին ԵՄԽՎ հունվարի 25-ին ընդունված բանաձեւը: Այն, ինչպես հայտնի է, պատրաստել էին բրիտանացի խորհրդարանականներ Թերի Դեւիսն ու Դեյվիդ Աթկինսոնը: Ավելի վաղ Բաքվում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Հարնիշը ԵՄԽՎ բանաձեւը որակել էր «դեկլարատիվ»:

ԵԱՀԿ փաստահավաք առաքելությանը ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքներում ուղեկցում էին նաեւ Մինսկի խմբի համանախագահները: Մեր հարցին, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ ԵՄԽՎ բանաձեւը ղարաբաղյան կարգավորման վրա, Սթիվեն Մանը կրկնեց, որ այն կրում է դեկլարատիվ բնույթ: Մանի ասելով, ցանկացած բանաձեւ՝ լինի ԵՄԽՎ-ինը, թե այլ կազմակերպության ընդունած, կարեւոր չէ: Կարեւորն այն է՝ Ղարաբաղի հարցում լուծում կա՞, թե՞ ոչ, ասաց ամերիկացի համանախագահը:

Թ. Հ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Ընդդիմադիր փոխրամասնությունը շտապում է ավանդների հարցը լուծել

Մեծամասնությունն «անհանդուրժող է դինոզավրերի նման»

ԿԱԲԻԼԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Երեկ մեկնարկեց խորհրդարանի երրորդ գումարման 5-րդ նստաշրջանի առաջին նոստը: 131 պատգամավորներից 29-ը հարկ չէին համարել իրենց ներկայությամբ պատվելու գարնանային նստաշրջանի առաջին օրը: Իսկ պատգամավորական կազմի նորույթը հունվարի 24-ից մանդատ նվաճած, Վազգեն Խաչիկյանի «փոխանորդ» Արմեն Ազոյանն էր:

Մյուս կարեւոր առանձնահատկությունը, որ երեկվա նիստը շահեկանորեն առանձնացնում էր նախորդ տարվանից, ընդդիմության բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչների շոայլ մասնակցությունն էր: Իրենց խոստման համաձայն նրանք եկել էին ներկա գտնվելու ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի կարեւոր հարցի քննարկմանը, ինչպիսին է «Հայխնայբանկում ավանդադրված խնայողությունների վերականգնման եւ մարման մասին» Վ. Դալլաֆյանի հեղինակած օրենքի նախագիծը:

Տես էջ 2

«Մարդասպանը պետք է սպանա ամենախիստ պատիժը»

Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի խորհուրդը երեկ հրավիրած նիստում դատապարտել է մեկ տարի առաջ, փետրվարի 19-ին Բուդապեշտում տեղի ունեցած Գուրգեն Մարգարյանի դաժան սպանությունը՝ Հունգարիայի իշխանություններից եւ Բուդապեշտի դատարանից պահանջելով ամենախիստ պատիժը սահմանել մարդասպանի՝ Ադրբեջանի զինված ուժերի ավագ լեյտենանտ Ռամիլ Սաֆարովի նկատմամբ. «Սարսռտ ազդող այդ հանցագործությունը, որ եղկելի է ուզած երկրի քաղաքացու համար, պատշաճական Բաքուն լիիրավորեն փորձում է ներկայացնել որպես «ազգային սխրանք», իսկ մարդասպանին՝ որպես «ազգային հերոսի», դրանով փաստելով, թե որքան է այլասերվել Ադրբեջանի հասարակությունը»:

Ֆակուլտետի դասախոսական կազմը համոզմունք է հայտնել, որ այդ ոճրագործությունը հետեւանք է այն քաղաքականության, որ շարունակում են վարել Ադրբեջանի ղեկավարները՝ զանգվածային լրատվամիջոցների միջոցով ամենօրյա քարոզչությամբ ժողովրդի գիտակցության մեջ ձեւավորելով թշնամի հայի կերպարը:

ԱՆԿԱՐԱ

Կոնդոլիզա Ռայսը՝ Հայոց ցեղասպանության մասին

ԱՄՆ-ը մեծ հույսեր ունի, որ Թուրքիային եւ Հայաստանին կհաջողվի հարթել գոյություն ունեցող տարաձայնությունները, հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը: Ինչպես հաղորդում է «Մեդիամաքս» գործակալությունը, ԱՄՆ պետքարտուղարն ասել է այս մասին Անկարայում, պատասխանելով հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ուղղությամբ ԱՄՆ ձեռնարկելիք քայլերի մասին հարցին:

«Մենք գիտենք շատ բարդ պատմության մասին եւ ճանաչում ենք այդ պատմությունը: Սակայն այսօր մենք շատ առաջ ենք գնացել՝ դեպի ապագա: Մենք կոչ ենք անելու կողմերին ուշիներ փնտրել իրենց դիրքորոշումների մերձեցման համար՝ ժողովրդավարական, տնտեսական զարգացման եւ կայունության հասնելու անհրաժեշտության գիտակցման հիման վրա», հայտարարել է Կոնդոլիզա Ռայսը:

Իսրայելի եւ Պաղեստինի անվտանգությունը կապահովի ամերիկացի գեներալը

«Պաղեստինցիների եւ իսրայելցիների համար եկել է հույսի ու լավ կյանքի ժամանակը», ասաց Մ. Նահանգների պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը երեկ Պաղեստինի ղեկավար Մահմուդ Աբբասի հետ տված մամլո ասուլիսի ժամանակ: Մերձավոր Արեւելք կատարած այցի ընթացքում նա հանդիպեց Իսրայելի եւ Պաղեստինի ղեկավարների հետ, փորձելով նոր թափ հաղորդել այդ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու Մ. Նահանգների երկարամյա ջանքերին:

Կոնդոլիզա Ռայսը խիստ արդյունավետ է համարել հատկապես Մահմուդ Աբբասի հետ հանդիպումը: Երկուստեք հույս են հայտնել, որ Եգիպտոսում կայանալիք հանդիպումը, որին մասնակցելու է նաեւ Հորդանանի թագավոր Աբդալլան, կպսակվի հաջողությամբ:

Ռայսը հայտնել է, որ Իսրայելի եւ Պաղեստինի անվտանգությունն ապահովելու նպատակով Մ. Նահանգները գեներալ-լեյտենանտ Վիլյամ Ուտրդին հաստատել է համակարգողի պաշտոնում: Իսկ գարնանը 2 երկրների ղեկավարները նախագահ Բուշի հետ կհանդիպեն Սպիտակ տանը:

Նախորդ օրը պետքարտուղարը հանդիպել էր Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի հետ, վերսին հիշեցնելով, որ խաղաղության հաստատման համար Իսրայելը պետք է կատարի իր պարտավորությունները:

Վերլուծաբանների գնահատմամբ, Ռայսի այցը տեղի է ունենում այս տարածաշրջանի համար անհամեմատ բարենպաստ շրջանում: Նրա այցից առաջ Կոնգրեսը որոշում կայացրեց Պաղեստինին 350 մլն դոլար հատկացնելու մասին, առաջիկա 3 ամիսներին կտրվի 40 մլն դոլար՝ պաղեստինյան տարածքներում տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելու համար:

Ռ. Պ.

Տոլյատիում սպանվել է Ռաֆայել Շահմուրադյանը

ՌԴ-ի Տոլյատի քաղաքում չպարզված հանգամանքներում անցած շաբաթ սպանվել է հայ գործարար, «Արմենիա-Լադա» ընկերության նախագահ Ռաֆայել Արենի Շահմուրադյանը, ծնված 1952 թ.-ին: «**Ազգի**» ընթերցողներին հիշեցնենք, որ դեռ 2004 թ. մայիսին Ռաֆայել Շահմուրադյանի նկատմամբ մահափորձ էր կատարվել Երեւանում: Մեքենայի վրա, որի ղեկին նստած էր եղել գործարարը, արձակվել էր կրակահերթ, որից էլ Շահմուրադյանը հրաշքով փրկվել էր՝ սպանալով վնասվածք:

«Մեդիամաքս» գործակալությանը տված հեռախոսային հարցազրույցում ՌԴ-ի Սամարայի մարզի ներքին գործերի վարչության մամլո ծառայության ղեկավար Ալեքսեյ Կրովինը հայտնել է, որ փետրվարի 6-ին, ժամը 14.45-ին Տոլյատի քաղաքի Կոմսոմոլի շրջանի Մագիստրալնայա փողոցի ճամփեզրին հայտնաբերվել է գանգուղեղային վնասվածքով 1952 թ. ծնված տղամարդու դիակ: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ եւ տարվում է հետաքննություն: Հետաքննության շահերը վկայակոչելով, Ալեքսեյ Կրովինը ձեռնպահ է մնացել սպանվածի տվյալները հաղորդելուց, նշում է «Մեդիամաքսը»:

Նշենք նաեւ, որ «Արմենիա-Լադա» ընկերությունը ռուսաստանյան «Վազ» եւ «Գազ» մարդատար ավտոմեքենաների խոշորագույն ներմուծողն է Հայաստանում: Շահմուրադյանին պատկանող կառույցները Հայաստան են ներմուծում նաեւ «Պեժո», «Ռենո» եւ «Նիսսան» ավտոմեքենաներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ

Ժվանիայի մահը Սաակաշվիլու իշխանության ավարտի սկի՞զբ

Վրաստանի վարչապետի մահվան մանրամասները չեն պարզվում

Փետրվարի 5-ին տեղի ունեցավ Վրաստանի վարչապետ Զուրաբ Ժվանիայի հուղարկավորությունը: Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին Ժվանիայի կորուստը կյանքի ճնշություն որակեց իր երկրի համար: Հետաքրքրական է, որ Վրաստանի նախագահը վարչապետի մահն անիմաստ է համարել՝ միեւնույն ժամանակ նշելով, որ Ժվանիայի կյանքը լի էր իմաստով: Ժվանիայի մահն անիմաստ են որակել շատերը, այդ թվում՝ տարբեր մակարդակի պաշտոնյաներն ու փորձագետները:

Սաակաշվիլու մահախոսականի մնացած տեքստը խիստ համահունչ էր իր տրամադրություններին եւ բարձրագոչ արտահայտություններին:

Կառավարության եւ Վրաստանի քաղաքական էլիտայի անունից Նինո Բուրջանաձեն իր հերթին նշել է, որ իրենք կաշխատեն եւ կշարունակեն Ժվանիայի գործը:

Երկրի վարչապետի թափուր պաշտոնի համար, ըստ Վրաստանի սահմանադրության, մինչեւ փետրվարի 10-ը երկրի նախագահը պետք է խորհրդարանին թեկնածություն առաջարկի, իսկ այդ թեկնածուն էլ 10 օրում պիտի ձեւավորի կառավարությունը: Առայժմ տարբեր գնահատականների համաձայն, պարզ չէ, թե Վրաստանի կառավարության անդամներից ով կմնա իր պաշտոնին: Քաղաքագետներն ու փորձագետները առանձնահատուկ կադրային փոփոխություններ չեն ակնկալում: Հաշվի առնելով, որ վարչապետի պաշտոնը Վրաստանում ըստ էության ձեւավորվեց Ժվանիա-Սաակաշվիլի համագործակցության արդյունքում, մասնագետները հնարավոր են համարում նաեւ վարչապետի պաշտոնի պարզեցումը:

Տես էջ 5

ԱԶԳ

Տեղեկատվություն

Մեծ պահքի ժամանակ ուրիշի փոխարեն կոճակ մի սեղմիր, մեղք է

Երեկ գարնանային նստաշրջանի հետ սկսվեց նաեւ մեծ պահքը: Մարմինն ու առողջությունը մաքրելու հետ մարդիկ նաեւ հոգեւոր կատարսիսի 48-օրյա փորձություն պիտի անցնեն: Այսինքն, մինչեւ մարտի 27-ը չծխեն, չխմեն, չստեն, չխաբեն, չքամբասեն, մի խոսքով, հրաժարվեն բոլոր վատ սովորություններից ու արատներից: Պատգամավորների դեպքում, թերեւ, կարելի է ավելացնել նաեւ ուժամանակ հաջողությամբ «գրանցվում» էին եւս 10-12 պատգամավորներ:

Մենք փորձեցինք, այնուամենայնիվ, տեղեկանալ, թե մեր պատգամավորների մեջ կան այնպիսիները, ովքեր որոշել են «մաքրագործվել» հոգով ու մարմնով:

Պարզվեց, որ հանրապետականներից պահք են պահում Արարատ Մալխասյանն ու Մանվել Ղազարյանը: Արեգ Ղուկասյանը ինքն ինքնիսյանի հավաստմամբ, ողջ ֆրակցիայի փոխարեն է պատ պահում՝ իր վրա վերցնելով նրանց բոլոր մեղքերը, եւ ոչ միայն այս տարի, այլեւ արդեն 1 տասնամյակ:

Ընդդիմությունից պատ են պահում Վիկտոր Դալլաքյանը, Նարոլեոն Ազիզյանը՝ («Օրինաց երկրից»), անկախ պատգամավոր Մանուկ Գասպարյանը: Նարոլեոն Ազիզյանը մաղթեց (նա Արմեն Ռուսամյանի նման հավատավոր պատ պահող է), որ պատ պահեն անհոգի պատգամավորները:

Ժողովրդական պատգամավորներ էլ պատ պահողներ կան, բայց նրանց անունները ֆրակցիայի ղեկավար Կարեն Կարապետյանը չհայտնեց, որովհետեւ անուններ տալը նույնպես... մեղք համարեց:

Կ. Դ.



ուրիշի փոխարեն կոճակ սեղմելու մեղքից հրաժարվելը, որ վատ օրինագծերի առաջացման հիմնական պատճառն է:

Եթե մեր պատգամավորները աստվածավախ լինեին ու գոնե ժամանակավոր հետեւեին պահքի պատվիրաններին, ապա ընտրողներս հաստատ կբահեինք: Իհարկե, դժվար է մտեղենից հրաժարվելը, մանավանդ մեր պատգամավորների պարագայում, որոնց մեծ մասը հարցերը լուծում է «մի կտոր հացի»՝ այսինքն խաբ-խորոված-խաբլամայի շուրջը:

Բայց դժոխքից ապահովագրելու համար կարելի էր դիմել հոգեւոր մաքրագործման այս կարճատեւ զոհողությանը:

Դատելով խորհրդարանի երեկվա անցուդարձից, մեր երեսփոխանների մեծամասնությանը դժոխքի կրակները չեն վախեցնում:

Կոճակ սեղմելու օպերացիան անվրդով ընթանում էր նաեւ պահքի օրը: Զուտ հայեցողական դիտարկմամբ դահլիճում ներկա էր 57 պատգամավոր, բայց քվեարկությունների բնորոշեց հավատավոր «գուրման» (համադամասեր կամ համեղ ուտելիքների սիրահար), ով վճռականապես դեմ է պատ պահելուն:

«Օրինաց երկրից» պատ պահում է Արտակ Առաքելյանը, Դաշնակցությունից՝ Արմեն Ռուսամյանը: Վերջինս, կուսակից Վահան Հովհաննիսյանի հավաստմամբ, ողջ ֆրակցիայի փոխարեն է պատ պահում՝ իր վրա վերցնելով նրանց բոլոր մեղքերը, եւ ոչ միայն այս տարի, այլեւ արդեն 1 տասնամյակ:

Ընդդիմությունից պատ են պահում Վիկտոր Դալլաքյանը, Նարոլեոն Ազիզյանը՝ («Օրինաց երկրից»), անկախ պատգամավոր Մանուկ Գասպարյանը: Նարոլեոն Ազիզյանը մաղթեց (նա Արմեն Ռուսամյանի նման հավատավոր պատ

Ընդդիմադիր փոխրամասնությունը շտապում է ավանդների հարցը լուծել

1-ին էջից

Օրինագիծը կանխավ նշված էր եռօրյայի՝ երեկ հաստատվելիք օրակարգում: Չնայած Հանրապետական խմբակցությունն ու Դաշնակցությունը գոնե անցած տարվա ճեպազրույցների ընթացքում համակրանք էին արտահայտել ավանդների վերադարձի օրինագծի վերաբերյալ (իսկ «ՕԵ»-ն դրա ջահակիրն է), այնուամենայնիվ, գլխադասային հանձնաժողովը (որի կազմում նույն այդ ֆրակցիաների ներկայացուցիչներն են) հարցը եռօրյա մտցնելուն դրական եզրակացություն չէր տվել: Եռօրյայում օրինագիծն ընդգրկել-չընդգրկելու խնդիրը առանձին քննարկման արժանացավ:

Այն 32 կողմով, 22 դեմով ու 13 ձեռնպահով քվեարկվեց եւ չմտավ եռօրյայի օրակարգ, չնայած ընդդիմության բոլոր ջանքերին: Հանրապետական Գալուստ Սահակյանը, օրինակ, գտնում է, որ ՀՀ նախագահի հանձնարարականով եւ գործադիրի մասնակցությամբ ավանդների խնդրով նոր հանձնաժողովի ստեղծումը միայն կօգնի գործին: Նոր հանձնաժողովը կամփոփի ու կվերլուծի ԱԺ նույնանուն հանձնաժողովի ուսումնասիրությունները, իսկ կառավարությունը հնարավորություն կստանա հաշվարկելու իր ֆինանսական ռեսուրսները եւ փոխհատուցման խելամիտ չափեր սահմանել:

Գալուստ Սահակյանը «սպառնաց», որ Հանրապետականը դեմ կքվեարկի հարցը եռօրյայում ներկայացնելուն:

Ընդդիմադիրները նոր հանձնաժողովին գերակայություններ տալը գնահատեցին իբրեւ օրենսդիրը գործադիրին սնուցդասելու փաստ եւ հանրապետության նախագահի դոմինանտ դերակատարման վկայություն, իսկ Հմայակ Հովհաննիսյանը իրողությունը բնորոշեց իբրեւ ապրիլի 13-ի «շուրջկալ» օպերացիայի շարունակություն:

Թաքուլ Մանասերյանի համոզմամբ, իշխանություններն ավանդների հարցում առաջնորդվում են «մի շտապիր» կարգախոսով: Ինչքան ձգձգեն, այնքան լավ: Բայց 2 մլն 207 հազար ավանդատուների մեջ ծերացած թոշակառուներ կան, «որոնց հնարավոր չէ ասել՝ մի շտապեք մահանալ»: Ընդդիմադիրների համոզմամբ, այդ հանձնաժողովը կարելի էր ստեղծել 3 ամիս առաջ, երբ կրկին հարցը շիկացած էր: Ի վերջո, ինչի՞ հասան նույն խնդրով առաջներում ստեղծված հանձնաժողովները ԱԺ-ում եւ կառավարությունում: Ինչ եռաչխիք, որ հարցը դարձյալ չի տեղափոխվելու անորոշ մի ժամանակաշրջան:

«Արդարություն» խմբակցության քարտուղար Վիկտոր Դալլաքյանը բազմիցս հայտարարեց, որ իրենք ընդամենը առաջարկում են հարցը մտցնել եռօրյայի օրակարգ, ընդամենը երաչխիքներ տալ ընդդիմադիր փոխրամասնությանը: Սակայն մարտնչող մեծամասնությունը մտադիր չէր հանդուրժողականություն ցուցաբերել: Վիկտոր Դալլաքյանը բավական ինքնաիրադ նախազգուշացում արեց նրանց: Նրա ասելով, դինոզավրերին երկրի երեսից ոչնչացրել է նրանց անհանդուրժողականությունը: Դինոզավրերի համեմատ մեր մեծամասնությունն ինչ է որ...

Գալուստ Սահակյանը, հակառակը, ինքը հանդուրժողականության ու քաղաքական պարկեշտության կոչ արեց Վիկտոր Դալլաքյանին՝ 90 կամ ավելի օրով հետաձգելու օրինագծի քննարկումը, մինչեւ կառավարությունն ու նոր հանձնաժողովն ավարտեն ուսումնասիրությունները:

Ի դեմ, ԱԺ նախընթաց պատմության մեջ սա վերջին եռօրյան էր, քանի որ փետրվարի 9-ից առաջ նոր կանոնակարգը խաղի նոր կանոններ կսահմանի, որոնց համաձայն ԱԺ նիստերը կգումարվեն 3 շաբաթը մեկ, եռօրյա ընթացքով:

Ինչպես «կողմնորոշել» պատգամավորներին

Գարնանային նստաշրջանի օրակարգում ընդգրկված է 72 հարց, իսկ այս եռօրյայի համար՝ 24 հարց եւ 13 միջազգային պայմանագիր:

Երեկ սակայն եռօրյայի օրակարգի հաստատումն իսկական ֆարսի վերածվեց, արժանի միայն մեծն Օսյանի գրչին:

Մեծ օրակարգը հաստատվեց, այլ էր եռօրյայի պարագայում: Հավանաբար պատգամավորների մի մասը նույնիսկ չէր հասկանում, որ քվեարկվում է ընդամենը օրինագծերն օրակարգ մտցնելու հարցը, ոչ թե դրանք ընդունելը: Փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը հարկադրված էր բազմիցս կրկնելով՝ իրողությունը հասցնել բանից անտեղյակ պատգամավորների գիտակցությանը:

Պատգամավորները տարօրինակ ինքնամոռացության մեջ ընկած մեկ առ մեկ մերժեցին նախ՝ եռօրյայի օրակարգի ընդունումը, իսկ դրանից հետո՝ առանձին-առանձին նաեւ եռօրյայի օրակարգում ընդգրկված օրինագծերը՝ բնապահպանական վերահսկողության, ոստիկանության կարգապահական կանոնակարգի, հաստատագրված վճարների, սննդամթերքի անվտանգության մասին եւ այլն: Փաստացի, սուտ տեղը դատարկ չի մնում, եւ կոալիցիան երեկ, կամա թե ակամա, ինքը հայտնվեց բոյկոտողի դերում: Դրությունը փրկելու համար ֆրակցիաները 2 անգամ 20 րոպեանոց դադար խնդրեցին, բայց միայն կեսժամյա ընդմիջումից հետո կոալիցիային հաջողվեց եռօրյան փրկել խայտառակությունից:

Ընդմիջումից հետո խորհրդարանն ունեցավ արդեն «կողմնորոշված» պատգամավորներ, եւ Վահան Հովհաննիսյանի որակմամբ՝ նիստը «հեզասահ» ընթացք ստացավ:

Վերը նշվածների փոխարեն կրկին մեկը մյուսի հետեւից ընդունվեցին այնպիսի օրինագծեր, որոնց կարեւորությունն այս անգամ պատգամավորները «գիտակցել» էին: Դրանց շարքում էր, օրինակ, այնպիսի օրինագիծ, ինչպիսին է «Սերմնաբուծության մասին» օրենքի նախագիծը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հրապարակվեց Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով

Փետրվարի 6-ին, Բուն Բարեկենդանին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագիչն էր Տ. Զավեն քհն. Մարկոսյանը:

Հընթացս Սուրբ պատարագի «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո հանդիսավոր թափորի ուղեկցությամբ Ս. Սեղան բարձրացվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցին, որն ընթերցեց Մայր աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

«... Քրիստոսի հետ հարության հույսով, մահվան դեմ կյանքի հաղթության հավատով ապրեց ու ստեղծեց մեր ժողովուրդը: Դարերի մեջ բազում ավերներ ու հողմեր տեսավ, բազմիցս գերեզման իջավ, բայց Քրիստոսին հուսացյալ՝ հավատաց իր հոգու լույսին, իր փրկությանն ու վերածննդին: Միշտ հավատաց եւ իր պատմությամբ ու իր թողած ժառանգությամբ վկայեց, որ հարուցյալ է Քրիստոս, եւ հարուցյալ է Քրիստոսին հավատացողը: Այս հավատով վերապրեցինք մեր պատմության ամենամեծ ողբերգությունը՝ մեր ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում:

... Մեր ժողովուրդը մահվան էր դատապարտվել միայն հայ եւ քրիստոնյա լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնյա, նշանակում էր շարունակել լինել բնիկ ու տոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի:

...Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ Հայոց ցեղասպանությունը, մեր պատմության այս մեծագույն ողբերգությունը: Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ ավերակված խնկաբույր երկիրը մեր, հայրենական սրբություններն ու բազմադարյա հիշատակները: Մեզ հետ են մեր բյուրավոր նահատակները՝ հայտնի ու անհայտ անուններով: Նրանց հիշատակի առջեւ միասին ենք միշտ: Մեզ հետ են ի պատասխանություն մեր ժողովրդի բողոքի ազնիվ ձայն բարձրացրած մեծ մարդասերները, որոնց շուրթերից մարդկության խիղճն էր խոսում Եղեռնի մահաստիւռ օրերին: Մեզ հետ են այն ժողովուրդները, ովքեր մարդասիրաբար աջակցան տվեցին ջարդերից փրկված բեկորներին հայության:

Որտեղ էլ ապրենք, փոխանցենք մեր զավակներին Արարատի պատկերը նվիրական, Լուսավորչի Կանթեղն անմար եւ հայրենի մեր հողն ու երկինքը միավորող Սուրբ Էջմիածնի խորհուրդը հավերժական: Որտեղ էլ ապրենք, համակ նվիրումով տեր կանգնենք մեր ազգային իղձերին ու ձգտումներին: Պաշտպանենք Արցախի ազատության իրավունքի, Հայոց Ցեղասպանության ճանաչման մեր արդար դատը: Միասնական ուժերով կառուցենք նոր կյանքը Հայաստանի ու Արցախի եւ հայրենի հողից առած ավյունով զորացյալ ու ծաղկուն պահպանենք Հայ Սփյուռքը», մասնավորապես ասված է Հայրապետական կոնդակում:

(Հայրապետական կոնդակն ամբողջությամբ հրապարակվում է «Ազգի» ինտերնետ էջում):

Էլի համակարգն է մեղավոր

Արշակ Սադոյանը մեքենայից իջել, սառույցի վրա ընկել եւ ոտքը վնասել է: Այնպես որ երեկ խորհրդարանում ձեռնափայտով էր ման գալիս: Իր մեկնաբանմամբ, այս ձախորդության մեղավորն էլ գործող համակարգն է, քանի որ ձյունից ու սառույցից փողոցների մաքրումը չի կարողանում մարդավարի իրականացնել:

Սադոյանի այս համոզմունքին հակառակ, երեկ քաղաքապետարանի կոմունալ եւ բարեկարգման վարչության պետ Ասոն Սարգսյանը լրագրողներին պատմում էր, թե այս ձմռանը ինչքան լավ են կազմակերպել փողոցների մաքրումը:

Նրա տեղեկացնելով, 11 սանմաքրման ձեռնարկություններ 50 մասնագիտացված մեքենաներով եւ էլի 200 ձյունմաքրողներով, հատկապես գիշերային ժամերին, լծված են այս միջոցառման իրականացմանը: Եվ այս պահին, վարչության պետի գնահատմամբ, մայրաքաղաքում անանցանելի փողոցներ չկան:

Փողոցներն անվտանգ դարձնելու համար օգտագործվել է 1270 տոննա աղ, 4974 խ/մ ավազ: Վարչության պետը նույնիսկ հավել էր, թե այս տարի քանի անգամ է ձյուն տեղացել՝ 7 անգամ:

Բայց Երեւանի փողոցների քաղաքապետարանի ու համայնքների այս տարվա մանրակրկիտ «խնամքը» Սադոյանին չի փրկել ձախորդությունից, նրա բախտին արժանացնելով նաեւ հայուրավոր շարային քաղաքացիների:

Կ. Դ.

Տախտակներին գտել են սպանված

Փետրվարի 3-ին ոստիկանության Կոտայքի բաժին է ահազանգել Ջորաղբյուր գյուղի գյուղապետը եւ հայտնել, որ Ջրվեժ-Ջորաղբյուր գյուղի երթեւեկելի մասում կայանված «ԳԱԶ-24» մակնիշի ավտոմեքենայի սրահում տղամարդու դիակ կա: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ այդ վայրում տախտակներ տարբերանշանով «ԳԱԶ-24» մակնիշի ավտոմեքենայում հայտնաբերվել է 1958 թ. ծնված Ասոն Այվազյանի դիակը մարմնի տարբեր մասերում սուր կտրող-ծակող գործիքից ստացած բազմաթիվ վնասվածքների հետեւանքով: Սպանությունը կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել 1982 թ. ծնված Եվգենիա Աղաջանյանը: Վերջինս ձերբակալված է, դեպքի հանգամանքները պարզվում են, քննությունը վարում է դատախազությունը:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Լրագրողների սենյակ / հեռ. 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353

Համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի

Թերթի նյութերի ամբողջական թե մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրաւոր համաձայնության խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նյութերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Կենտրոնական բանկը չի բացառում սեփական արժեթղթերի թողարկումը

Դոլարի արժեզրկման բացասական հետևանքները մեղմացնելու նպատակով

Եկող տարվա համար կանխատեսված է 8 տոկոս տնտեսական աճ եւ 3 տոկոս գնաճ: Ներկայացնելով 2005 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը՝ երեկ հայտնեց Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը: Սակայն մինչ այդ նա անդրադարձավ 2004 թ. արդյունքներին:

Անցյալ տարի արձանագրվել է 10 տոկոս տնտեսական աճ: Առավել բարձր աճ արձանագրած ճյուղը եղել է գյուղատնտեսությունը՝ 14,5 տոկոս, այնուհետեւ շինարարությունը՝ 13,4 տոկոս: Այս հանգամանքի վրա ուշադրություն հրավիրելով, Տիգրան Սարգսյանը ընդգծեց, որ չնայած այս տարի «Լինսի» հիմնադրամի նման խոշոր ներդրումներ չեն եղել, բայց այս ոլորտում էական աճ է արձանագրվել մասնավոր շինարարության շնորհիվ: Արդյունաբերության աճի տեմպերը դանդաղել են, բայց, ԿԲ նախագահի կանխատեսմամբ, այստեղ 2005 թ. ակնկալվում է լուրջ աճ, ինչը պայմանավորված է մի շարք ներդրումային ծրագրերի իրականացմամբ:

Հարկաբյուջետային քաղաքականության մեջ կարետրվեց հարկերի հավաքման անհամամասնությունների հաղթահարումը, բայց նշվեց, որ ծախսերի իրականացման անհամամասնությունները շարունակում են պահպանվել: 2005 թ. խնդիրներից է, որ ծախսերը նույնպես համամասնորեն կատարվեն: Ինչ վերաբերում է արտաքին հատվածին, արդեն Կենտրոնական բանկն այստեղ արձանագրում է պակասուրդի կրճատում՝ բացարձակ արժեքով նախորդ տարվա 190 մլն դոլարի փոխարեն 143 մլն դոլար, տեսակարար կշռով՝ 6,8 տոկոսի փոխարեն 4 տոկոս:

Մասնավոր տրանսֆերների վերաբերյալ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ անցյալ տարի դրանք աճել են 55 տոկոսով եւ 2004 թ. կազմել են 740 մլն դոլար: Մեկ փոխանցման միջին չափը 2003 թ. 643 դոլարի փոխարեն 2004 թ. կազմել է 859 դոլար: ԿԲ նախագահի կարծիքով, 2005 թ. տրանսֆերների աճի տեմպերը կպահպանվեն եւ կգերազանցեն 1 մլրդ դոլարը:

Դրամի արժեզրկման վերաբերյալ նշվեց, որ անցյալ տարվա ցուցանիշը եղել է 7,8 տոկոս, իսկ եվրոն իր դիրքերը դոլարի նկատմամբ ամրապնդել է ավելի քան 10 տոկոսով: Տիգրան Սարգսյանի թվարկած մի շարք երկրներում ազգային արժույթի արժեզրկումը դոլարի նկատմամբ ավելի մեծ է եղել, քան հայկական դրամինը: Իսկ փոխարժեքի տատանողության առումով Հայաստանը նույն 25 երկրների շարքում գրավում է միջին դիրք: Ընդ որում, ԿԲ նախագահը նշեց, որ դոլարի արժեզրկման գործընթացն ամբողջությամբ չի դրսեւորվել Հայաստանում եւ դրա հետագա արժեզրկման հնարավորությունները դեռեւս սպառված չեն: Դրա ապացույցը հունվար ամսվա ընթացքում դոլարի շարունակվող արժեզրկումն է:

Տիգրան Սարգսյանը վերստին հավաստիացրեց, որ ԿԲ-ն հավատարիմ է մնալու փոխարժեքի «լողացող կուրսի» քաղաքականությանը եւ ինտերվենցիաներ չի կատարելու: Փոխարենը Կենտրոնական բանկը ձգտելու է տարբեր գործիքներով մեղմացնել դոլարի կտրուկ արժեզրկման բացասական հետեւանքները, ընդհուպ ԿԲ կողմից այդ նպատակով սեփական արժեթղթեր թողարկելը:

PHOTOLURE

Գնաճն անցյալ տարի կազմել է 2 տոկոս, ինչը գտնվում է ԿԲ նախատեսած 3 տոկոսի սահմաններում: Սա սպառողական զամբյուղում ընդգրկված 400 ապրանքատեսակների գծով արձանագրված գնաճն է: Այս առնչությամբ մեր հարցին պատասխանելով, Տիգրան Սարգսյանը տեղեկացրեց, որ սպառողական զամբյուղում մեծ կշիռ են կազմում առաջին անհրաժեշտության ապրանքները: Միջին հայկական ընտանիքի բյուջեն կազմավորվում է այդ ապրանքներից: Այդ ապրանքների մեջ չեն մտնում անշարժ գույքը, ավտոմեքենաները:

«Ազգի» մյուս հարցին, թե դրամի շարունակվող արժեզրկման պարագայում կարելի՞ է ակնկալել ապրանքների գների իջեցում, ԿԲ նախագահը պատասխանեց, որ ազգային վիճակագրական ծառայությունը որոշ ապրանքների գծով անցյալ տարի արձանագրել է գնանկում եւ չբացառեց, որ այլ ապրանքատեսակների գծով դա նույնպես տեղի կունենա: Միաժամանակ նա չբացառեց, որ տեղի կունենա որոշ այլ ապրանքների գների աճ: Իսկ այն հարցին, թե սպասվո՞ւմ է քաղաքացիների եկամուտների աճ, Տիգրան Սարգսյանը պատասխանեց, որ քաղաքացիների եկամուտների միջին աճն այս տարի կկազմի 12-13 տոկոս:

2005 թ. ակնկալվում է դրամային զանգվածի աճ 17,9 տոկոսով, ինչպես նաեւ դրամով ավանդների աճ: Դա պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես տնտեսության վարկավորման ծավալների աճով, դրամի նկատմամբ վստահության աճով, ինչի վրա էական ազդեցություն ունեցավ 2004 թ. երկրորդ կիսամյակից սկսած դրամի արժեւորումը, 2005 թ. հուլիսից «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» նոր օրենքի ներդրմամբ, ինչը կնպաստի դրամի շրջանառության ոլորտի ընդլայնմանը, նույն ամսաթվից ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի ներդրմամբ: Մեր քաղաքացիները պետք է զգան, որ դրամով ավանդները պահելն ավելի շահավետ է, քան դոլարով: Եթե դա տեղի ունենա, ապա Կենտրոնական բանկը խթանելու է այդ գործընթացը, այսինքն նպաստելու է այդ փոփոխությանը: Ներկայումս դոլարային ավանդները 2,5 անգամ գերազանցում են դրամայինին: Խոշորածավալ գնումները նույնպես ներկայումս կատարվում են հիմնականում դոլարով, իսկ մանրածախ առեւտուրը՝ դրամով:

Դրամավարկային քաղաքականության հնարավոր ռիսկերի թվում նշվեցին ծրագրվածից ավելի բարձր տնտեսական աճը, պետական հատվածում ֆինանսական հոսքերը համամասնորեն բաշխելը:

Բանկային համակարգի վիճակի մասին խոսելով, Տիգրան Սարգսյանը նշեց, որ ակտիվներն աճել են 20 տոկոսով: Սպառողական վարկերն աճել են 60 տոկոսով, ինչն աննախադեպ ցուցանիշ է: Այս տարի կանխատեսվում է բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճ 17 մլրդ դրամով: Տարվա առանձնահատկություններից մեկն այն է, որ 2005 թ. հուլիսի 1-ից բանկերը պետք է կատարեն 5 մլն դոլարին համարժեք դրամի չափով ընդհանուր կապիտալի նվազագույն չափն ապահովելու նորմատիվային պահանջը: Հաջորդ առանձնահատկությունը ավանդների երաշխավորման հիմնադրամի ստեղծումն է, մյուսը՝ կորպորատիվ կառավարման համակարգի ներդրումը:

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացման առումով առանձնակի ուշադրություն է դարձվելու անկանխիկ եղանակով վճարումների իրականացման խոչընդոտների բացահայտմանը եւ դրանց հնարավորինս նվազեցմանը:

ԱԲՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երթուղային գծերի «ռազբորկա»

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տրամադրած օպերատիվ տեղեկագրից տեղեկանում ենք, որ փետրվարի 4-ին, ժամը 20:45-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել, որ հրազենային վնասվածքներով Արցախի փողոցից իրենց մոտ են տեղափոխվել երեք անձիք: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նույն օրը, ժամը 20:30-ի սահմաններում Արցախի եւ Արին Բերդի փողոցների խաչմերուկում փոխհրաձգության ժամանակ մարմնի տարբեր մասերում ստացած հրազենային վնասվածքներով իրենց մոտ են տեղափոխվել 1970 թ. ծնված Արմեն Խաչատրյանը, 1975 թ. ծնված Տիգրան Նազարյանը եւ 1974 թ. ծնված Մհեր Տեր-Հարությունյանը: Վերջինս հիվանդանոցում մահացել է: Նրանց տեղափոխած BMW մակնիշի ավտոմեքենայի սրահից հիվանդանոցում ծառայություն կատարող ոստիկանները հայտնաբերել են «ԱԿՄ-74» տիպի ինքնաձիգ: Փետրվարի 6-ին ոստիկանական բաժին են ներկայացել նշված հանցագործության մասնակիցներ՝ 1983 թ. ծնված Կարեն Ղալթաղչյանը եւ 1982 թ. ծնված Սամսոն Վարդանյանը: Վերջինս ներկայացրել է «Մակարով» տիպի ատրճանակ, «ԱԿՄ» տիպի ավտոմատ՝ մեկ պահունակով, լիցքավորված 7,62 մմ տչ. 15 փամփուշտով եւ հայտնել է, որ տեղի ունեցած փոխհրաձգության ժամանակ ինքն այդ ավտոմատից կրակահերթ է արձակել:

Քննությունը վարում է Երեւան քաղաքի դատախազությունը: Ըստ «Ազգի» հասած տեղեկությունների, այսպես կոչված «ռազբորկան» կրկին երթուղային տախիների հետ է կապված:

Մ. Մ.

ԳՅՈՒՄՐԻ

Եվ սոցիալական քարտ, եւ՛ տեղեկանք...

Իսկ պատասխանատու պաշտոնյաներն այլ բան էին հավաստիացնում

2005 թվականի առաջին ամսին Գյումրու նոպաստառու ընտանիքներն այդպես էլ չստացան իրենց հասանելիք նպաստները: Փոխարենը սկսվեց նպաստառուների ու նրանց մեջ մեծ թիվ կազմող նպաստառու թոշակառուների հոսքը, ավելի ճիշտ՝ բազմահոգս վազքը սոցծառայությունից ԲՀՏ ու ԲՀՏ-ից սոցծառայություն՝ ամենամյա վերափաստագրման համար: Այս գուցեեւ անհրաժեշտ միջոցառումը կարելի կլիներ հասկանալ ու չդժգոհել, եթե մենք արդեն օրենքի երկրում եւ ամեն ինչ կատարվեր այնպես, ինչպես պետական պաշտոնյաները այս կամ այն դեպքում հայտարարում են:

Փաստագրվելու համար, ինչպես հայտնի է, քաղաքացին նախ համապատասխան նմուշի տեղեկանք պետք է ներկայացնի բնակության վայրից: Այսօրվա Գյումրիում համաշիրությունները դեռ հատուկենտ են, իսկ քաղաքային լիազորների ինստիտուտը տարիներ առաջ վերացվել է: Այստեղ մարդկանցից որեւէ հարցով տեղեկանք պահանջել՝ մեծամասամբ նշանակում է նրանց մատնել ԲՀՏ-ների, այսինքն բնակչահագործման տեղամասերի ձեռքը: Սոկն կառույցները բնակչահագործման գործառույթներով վաղուց, մեղմ ասած, այնքան էլ չեն զբաղվում: Այսօր դրանք ընդամենը վերածվել են իրենց դիմող քաղաքացիներից տեղական վճարներ բռնագանձող եւ տեղեկանք վաճառող հաստատությունների: Եթե ուզում ես տեղեկանք ստանալ՝ պիտի իրենց ուզածը վճարես: Այս պարտադրանքը համենայն դեպս չպետք է վերաբերեր փաստագրման համար անհրաժեշտ հիշյալ տեղեկանքը վերցնող քաղաքացիներին, ինչի մասին ամեն տարի հայտարարում են սոցիալական ոլորտի պատասխանատուները: Սոցծառայության «Գյումրի-1» կենտրոնի տնօրեն Վարդան Ղափլանյանը եւս, որի հետ առիթ ունեցանք հանդիպելու, ասաց ու հաս-հաս կրկնեց. «Այդ տեղեկանքները տրվում են ան-վճար»: Սակայն տեղեկանքը տվող կողմը վստահորեն իրենն է ասում ու անում: Չգիտես՝ կա՞ մի պետական կառույց, որն այս դեպքում կոչված է եւ կարող է սպիտել՝ չոնանհարել սահմանված կարգը, հետեւաբար եւ՝ մարդկանց իրավունքները:

Աղքատության նպաստի համար ձեռքը մեկնող քաղաքացին, ծեր թոշակառուն, բացի ամեն տարվա այս ժամանակ Գյումրու սառցապատ փողոցներով գնալ-գալու փորձությանը ենթարկվելուց, հերթերում սպասելուց, նաեւ անպատշաճ է ԲՀՏ-ի ղեկավարների կամայականությունների, սոցծառայության չվերահսկվող, չափն անցած տեսչների հարձակն ու անկասելի «ախորժակի» հանդեմ:

Իսկ... Լուրջ պատասխանատու մարդիկ ժամանակին հայտարարում-հորդորում էին, թե սոցիալական քարտերը նաեւ նրա համար են, որ ազատվեք այս կամ այն հարցով ամեն տեսակ տեղեկանքներ ու փաստաթղթեր ներկայացնելու պարտադրանքից: Հիմա, երբ կամավոր-պարտադիր սոցիալական քարտերը կան, ի՞նչ է փոխվել: Սոցծառայության պետը, որին այս հարցը տվեցինք, պատասխանեց, թե՝ ի՞նչ ենք ուզում որ. այս մի տեղեկանքն է, բնակչի ինչ-ինչ կարգավիճակի կամ տվյալների փոփոխության դեպքում համապատասխան փաստաթուղթ, մեկ էլ սոցիալական քարտի պատճենը: Այսինքն նույնը, ինչ նախորդ տարիներին, ավելացած սոցքարտը: Վերջինս գոնե այս պարագայում ոչինչ չի փոխել, այլ ինքը դարձել է մի տեսակ պատժամիջոց (եթե այդ քարտը չունես՝ ոչինչ չես ստանա):

Կարելի է կարծել, որ սա նման մեկ, բայց ոչ միակ օրինակն է:

Ուրեմն ո՞ւմ եւ ի՞նչ նպատակով էր պետք այս քարտերը ժողովրդին պարտադրելը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

Անհայտ կորածների հարազատները կարիք ունեն հոգեբանական օգնության

Իսկ անապահով խավը՝ իրավական

«Մեր շահառուներից շատերը գաղափար անգամ չունեն հոգեբանական ծառայության մասին, նրանք նույնիսկ հոգեբանին չեն տարբերում հոգեբույժից: Հենց այդ պատճառով շատերը խուսափում են հոգեբանական ծառայությունից, ինչն էլ ինձ ստիպում է անձամբ մոտենալ նրանց եւ խոսքի բռնվելով պարզել նրանց հոգեվիճակն ու անհրաժեշտ աջակցություն տանել: Ինչպես ենթադրելի է, մարդկանց մեծ մասի վրա բացասական ազդեցություն է թողնում սոցիալական ծանր վիճակը, այդ պատճառով հաճախ ստիպված եմ լինում նրանց օգնել ավելի սոցիալական, քան հոգեբանական հարցերում: Իհարկե, լինում են նաեւ զուտ հոգեբանական խնդիրներ ունեցողներ. դրանք հիմնականում արցախյան պատերազմում անհայտ կորածների, պատանդների, գերիների, բռնի տեղահանվածների հարազատներն են, հատկապես դեռահասները:

Այսօր ինձ դիմեց երիտասարդ մի կին, որի ամուսինն արդեն 10 տարի անհայտ կորած է: Թեպետ կինն ապրում է դստեր հետ, բայց հոգեբանական այնպիսի վիճակում էր, կարծես ինքն իրեն ողջ- ողջ թաղել էր», ասում է հոգեբան Դավիթ Գործունյանը, որն անվճար հոգեբանական ծառայություն է մատուցում «Ընդդեմ իրավական կամայականության» կազմակերպությունում: Ամեն չորեքշաբթի այստեղ քաղաքացիներին տրվում է անվճար իրավական խորհրդատվություն: Այցելուներից մեկին, որը խնդրեց չհրապարակել իր անունը, 13 տարի առաջ ադրբեջանցիները պատանդ են վերցրել ուկրաինական խարկով քաղաքում: Նա այժմ 27 տարեկան է, մի քանի տարի անընդմեջ բուժվելուց հետո այսօր իրեն լավ է զգում, բայց անկարող է մոռանալ ադրբեջանցիների կտտանքները: Հոգեբանական մի քանի սեանսներից հետո վերացել է խմիչքի հանդեմ ունեցած նրա գայթակղությունը, մոտ մեկ ամիս գրեթե չի խմում:

Իրավաբան Զարուհի Դանիելյանի ասելով, իրենց առավելապես դիմում են բնակչության անապահով խավից, դրանց մեջ բացի խոշտանգումների, բռնությունների ենթարկվածներից, փախստականներից, կան նաեւ բնակարանային, հրեական եւ այլ հարցերով իրավական խորհրդատվության կարիք ունեցող քաղաքացիներ: «Եթե մարդը չգիտի իր իրավունքները, նա չի կարող իրեն պատշաճված զգալ հասարակության մեջ եւ որեւէ խնդիր ունենալու դեպքում մոլորվում ու դժվարանում է կողմնորոշվել: Հաճախ մեզ դիմում են չափազանց պարզունակ հարցերով՝ ի՞նչ է քաղաքացիությունը, ինչպե՞ս ձեռք բերել ճանապարհային փաստաթղթեր, ի՞նչ տեղեկանքներ ստանալ եւ այլն: Նրանց խորհուրդ տալուց բացի ստիպված ենք լինում պատրաստել հայցադիմում եւ օգնել բողոքը մինչեւ վճռաբեկ դատարան հասցնելու», ասում է նա:

Նրան զարմացնում է, որ քաղաքացիներից շատերը պատկերացում անգամ չունեն, թե ի՞նչ է Եվրոդատարանը: Մարդկանց թվում է, ինչ հարցով ասես կարելի է դիմել այնտեղ, նրանք իրենց վերջին հույսը կապում են դրա հետ: Հասարակությանը մարդու իրավունքների մասին ամենատարրական գիտելիքներ տալու առումով, ըստ նրա, մեծ դեր ունի հեռուստատեսությունը, որն այսօր առավելապես զբաղված է դատական համակարգի անկատարության մասին խոսելով եւ իրավական ոլորտի պատշաճյաներին գովազդելով: Հանրային հեռուստատեսությամբ ցուցադրվող դատավարությունները բնավ չեն ավելացնում մարդկանց իրավական գիտելիքները, ավելին՝ դրանք ծաղրուծանակ են, քանի որ Տիգրան Մուկուչյանը կայացնում է դատարանին հակառակ դատավճիռներ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Խճանկարի փայլն ու սնանկությունը

Սախկինում, երբ հեռուստատեսային եթերն այսչափ խիտ չէր, եւ մեկ, երկու, լավ, չորս ծրագրեր էին հեռարձակվում (տեղական եւ մոսկովյան), ընտրության, նախասիրության խնդիր առանձնապես չէր առաջանում. եղածը դա էր՝ «էկրանոֆիլների» համար ասպարեզն առավել լան համեստ էր: Համեստ եւ պարզ՝ հայկական այս-այս հաղորդումները, մոսկովյան՝ այս-այս:

Ներկայումս պատկերը բեւեռադիր հակառակն է: Հեռուստատեսային «եթեր» («Эфир») շաբաթաթերթը (հիմնականում՝ հեռուստածրագրեր) ամեն օր խան-խանհինգ ընկերությունների հաղորդացանկ է ներկայացնում, եւ դա հիանալի է. բազմազանություն, ընտրության հնարավորություն, նախընտրության լիուլի բավարարում եւ այլն:

Արդեն նշվեց, որ դա շատ լավ է, կրկնենք, այդպես էլ պիտի լիներ. նոր տեխնոլոգիաների խաչակրաց արշավանքների դարում ուրիշ բան պատկերացնել իսկ չի լինի:

Նախկինում, երբ տողերիս հեղինակը հեռուստատեսության բնագավառում էր աշխատում, անցած շաբաթվա հաղորդումներն ամենամանրամասն քննության էին ենթարկվում խմբագրական-ռեժիսորական հավաքներին (այսպես կոչված՝ «լեռուչկաներ»), եւ ամենաէական բացթողումը համարվում էր եթերային կարգապահության խախտումը՝ առաջին հերթին, ապա մեկիկ-մեկիկ բոլոր հեռարձակումների քննարկումները՝ բովանդակություն, ձեւ, լեզու, ռեժիսորական ձեռքբերումներ եւ վթարներ, պատկերաշարի հագեցվածություն եւ աղքատիկություն, այլեւայլ չափանիշներ: Իսկ եթե համեմատելու լինենք տեխնիկական հնարավորությունները, ապա ներկայումս անցած այդ շրջանը կարելի է դիտարկել սոսկ որպես քարեղարյան իրողություն, բոլոր-բոլոր առումներով: Եվ ասածս էլ ամենեւին այն չէ, թե... մենք լավն էինք, իսկ դուք՝ անօգնական: «Մենք»-ի եւ «դուք»-ի խնդիր չկա: Առավել քան համոզված եմ, որ ներկայիս բոլոր բացթողումներն ու վթարները արժանի, մասնագիտական հսկողության բացակայության արդյունք են, անպատասխանատու եւ անհաշվետու գործունեության հետեւանք:

Օտարալեզու, այլահունչ անվանումներով հափշտակվելը համընդհանուր երեւույթ է դարձել: Դրանով արդիականությո՞ւն ենք ուզում հավաստել, օտար լեզուների իմացությո՞ւն, թե՞ մեկ ուրիշ բան, հասկանալի չէ: Երեւույթի համատարածությունը միայն եւ միայն ընդհանուր վարակ է մատնանշում, հիվանդություն, որ ախտահարել է բոլորին: Միայն մեկ ալիքի, միայն մեկ օրվա ծրագրին հետեւել. **էնիա, էներջի, մոդա, ավտոտեստ, Select, էնիգմա, Ռուբիկոն, բոնուս** եւ այս ամենը՝ իրար հետեւից (Նոր ալիք, 20 հունվարի, հինգշաբթի), մյուսներն ամենեւին հետ չեն մնում՝ **կինկոմ, ջազ լայֆ, բլից, էքսպրես, կլոն, նոստալջիգ, հիթ-էքսպրես, ակցեոն-ժամ, իմիջ, մոդա նոն-ստոպ, hip-top-nation, շոուԲԻԶ:** Հատկապես այս վերջինից հետո չես կարողանում զսպել քեզ ու մտածում ես՝ հապա ե՞րբ եմ մոգոնելու մի նոր շոու-ՄԱԽԱԹ, որ կարի-կարկրի բոլոր-բոլոր շոուպաշտների բերանները:

Ընդհանրապես, հեռուստատեսային այս բազմալիք խճանկարին հատուկ է մեկ ուրիշ, ոչ պակաս խոսելի առանձնահատկություն. բոլորին պատել է սրամտելու, երգիծելու, կատակելու մարմաջը, ինչ ընդհանուր առմամբ ամենագեղ արտահայտումներն է տանում: Ընդ որում, ծանակվում է ամեն ինչ. պետության, պետական իշխանավորի հեղինակությունից մինչեւ անձի արժանապատվություն:

Իսկ մայրենի լեզվի տակնիվար խոշտանգումները դադրում են մտածել, որ «խոսող գլուխները» եւ մենախոսողներն ընտրվում են իրենց ծռալեզվության եւ կիսագրագիտության հատկանիշով: Մի քանիսն են հույժ գրագետ երեւալու ակնկալությամբ պատեհանպատեհ, տեղի-անտեղի, անստույգ եւ իրենց համար անհասկանալի գրաբարյան ձեւերին են դիմում, հասնելով «ի շնորհիվ»-ի մակարդակի, «ի սկզբանե»-ի թյուրընթռման: Ովքե՞ր են այդ հաղորդումների, հեռուստաժամերի խմբագիրները, խիղճ ու պատիվ ունե՞ն, թե՞ նրանց ընտրության, նշանակման չափանիշն էլ դպրոցական մայրենի լեզվից «անբավարար» գնահատականն է: Ինչեւէ, հատուկենտ (կրկնեմ՝ հա՛տ-ու-կե՛նտ) բացառությունների պայմաններում հայոց արքայական, հզոր լեզուն չարչրկվում, լլկվում է առավոտից երեկո:

Մի հարց եւս. վերահսկող, սաստող, կարգավորող, կանխարգելող մեկը կամ մի մարմին կա՞: Կա՛ պետական հանձնաժողով, որը հայտնվում է սոսկ հաճախությունների բաշխման եւ տնօրինման առիթներով: Ստեղծագործական քննարկումներ, մասնագիտական վերլուծություններ, հնարավոր հանձնարարականներ՝ ավաղ, չկան, համենայն դեպս, հայտնի չեն: Իսկ հայկական հեռուստատեսային նավատորմիղը լողում է բաց ծովերում ու օվկիանոսներում, անղեկ ու անառագաս, թողնված իր հայեցողությանը, իր տնօրենների, տերերի կամ բախտի խմահաճույքին:

Առանձին խոսակցություն է պահանջում ԱԼՄ հեռուստաալիքը: Գեղարվեստական, հեռուստատեսային մասնագիտական, այլեւայլ խնդիրներ այստեղ լուծվել են մեկ զարկով՝ ալիքը հաստատապես սպասարկում է մեկ անձի՝ տնօրենին: Նա թե՛ քաղաքական, տնտեսական մեկնաբան է, թե՛ բարոյախոս, թե՛ հաղորդավար, թե՛ շոումեն: Եվ բոլորն էլ իրականացնում է մեծ ջանադրությամբ, նվիրումով, անխոնջությամբ, ամեն օր, ամեն ժամ, անգամ նույն օրվա մեջ քանիցս փոփոխելով իր հեռուստատեսային ամպլուան: Հաղավման առաջին տառը (Այլընտրանքային)՝ որպես բնորոշում, հենց այդպիսին էլ մնում է, ընդամենը որպես ԼՄ-ին նախորդող իմաստ, քանզի այլընտրանք այստեղ, ինչպես ասում են, չի էլ գիտերել: Կայուն տպավորություն է առաջանում, որ տնօրենն այդ ալիքը հիմնել է՝ հիմնականում իր երեկոներն այդտեղ անցկացնելու նպատակով, հետեւելով ռուսական հայտնի ասացվածքին՝ и жена, и шведа, и на дуде игрец, հարուցելով շատերի օրինական հարցը՝ այս մարդը տունուտեղ չունի՞: Կարելի՞ է օրինիբուն հանրահայտ ճշմարտություններ տարփողել, վիճաբանություններ վարել, սեփական կոկորդի հերն անիծել (վերջերս սկսել է սաստիկ հազալ, միանգամայն հասկանալի պատճառներով): Իսկ ամենավերջին նախաձեռնությունը՝ Հայաստանի տարբեր բնակավայրերից երգի, պարի, աստմունքի նմուշներ ներկայացնելը մայրաքաղաքային եթերից, միանգամայն գովելի է, հարկավոր: Գեղարվեստական ինքնագործունեությամբ ոչ ոք չի զբաղվում, բնագավառի տարածը խոպան է, ամայի: Անխտիր բարյացակամություն է նկատվում ԱԼՄ-ի կողմից, իսկ, ինչպես հայտնի է, հենց բարի կամեցողությամբ են սալարկված դժոխք տանող ճամփաները: Կրկնենք, շատ լավ է, որ էկրանին են հայտնվում անձինք, ում գոյության մասին գաղափար իսկ չունեինք: Մեկ-երկու, լա՛վ, տասներկու հաջող, ընդունելի ելույթներն ուղեկցվում են իսկական խոտանով, երկսեռ դեռահասներն անպատասխան սիրո զեղումներ են մրմնջում, լսողության, ռիթմի իսպառ բացակայությամբ անվարժ, ուստիեւ՝ խղճահարույց շարժումներ են անում, ըստ ամենայնի փթթում է «ռաբիսը», իսկ հարակից վտանգների վրա ոչ մի ուշադրություն չի դարձվում: Այն է՝ «էկրանացավով» ախտահարվածը հեռայդու ձեռ ու ոտ կապած ենթարկվող է այլեւս, մեկ անգամ էլ էկրանին հայտնվելու համար ամեն ինչի պատրաստ, առավել եւս, որ վստահ է, թե ինքն արդեն «աստղ» է, ոսկե, ադամանդե, զմրուխտե, եւ հոգ չէ, թե ում կողմից են շնորհված, այն էլ սպվարաթղթե, գույնզգույն ֆոլգայով կարած-կարկրած: Ծաղկեզամբյուղը եւ ԱԼՄ սուդիայում անվճար ձայնագրվելու հրավերն ընդունում են որպես երկնային պարգեւներ, չմոռանալով գովասանքներ եւ երախտագիտություններ ձոնել միակ եւ անկրկնելի հովանավորին, ամենաբարի Տ. Կ.-ին:

Մեզանում էկրանին հայտնվելու, անգամ իրենց անուն-ազգանունը եթերից լսելու սիրահարները շատ են, դա համարվում է առանձնաշնորհ, աներկբա հեղինակություն («էրեկ քեզ տեսանք տելեվիզըրով»), եւ ահա, այդ անհասկանալի թուլությունը վարպետորեն է կիրառում Տ. Կ.-ը՝ ձեռք բերելով տասնյակ, հարյուր-հազարավոր երդվյալ երկրպագուներ Հայաստանի ամբողջ տարածքում:

Իսկ այն, ինչ կատարվեց ԱԼՄ տաղավարում փետրվարի 1-ի երեկոյան, այլեւս դուրս է որեւէ չափ ու սահմանից. հայկական հեռուստատեսության պատմության մեջ (չե՛մ սխալվում) առաջին դեպքն էր, երբ հրավիրյալ զրուցակիցը՝ տվյալ դեպքում ԱԺ պատգամավոր Արշակ Սադոյանը, ցուցադրաբար լքեց տաղավարը: Ամեն ինչ կատարվեց մեծաքանակ հեռուստադիտողների աչքի առաջ, ովքեր շարունակում էին դիտել այդ հաղորդումը ոչ հետաքրքրությամբ, այլ գոռգոռոցների եւ շատ դեպքերում անհասկանալի զզվոտցի վերջը տեսնելու սպասումով: Ոտիկ ենթերի շնորհիվ մեզ բացառիկ հնարավորություն ընձեռվեց սեփական աչքերով դիտել այդ խայտառակությունը: Դեպքերը զարգացան այսպես. հաղորդման սկզբից շատ չանցած, Տ. Կ.-ը, անվերջ եւ անտեղի միջամտություններով, ընդհատումներով, խանգարում էր Ա. Ս.-ին՝ կարծիք հայտնել, ասելիք հստակեցնել, հեռախոսազանգին պատասխանել: Պատգամավորը միանգամից չհասկացավ դիմացինի նպատակը, եւ լավ էր գոնե, բանը չհասավ ծեծկռտուքի, համենայն դեպս, «բազարային» մթնոլորտն այնպիսին էր, որ շարունակությունը կամ ծեծուկոիվն էր, կամ անտպագրելի հայհոյանքի տարափը: Զրուցակիցները շատ շուտով թողեցին հարգալիր հոգնակին, անցան «դու»-ի, բովանդակ քաղաքավարությունից մնաց մի տրտում «պարոն», միմյանց ընդհատել փորձելիս:

Ինքնըստինքյան, պարզվեց, հասկանալի դարձավ դդամպատճառը. Տ. Կ.-ը Ա. Ս.-ին հրավիրել էր՝ անտոհ վարկաբեկման նպատակով: Կամ՝ հատուկ հանձնարարությամբ, կամ՝ ավելի ստույգ, «աղացուցելու» Ա. Ս.-ի մեծաքանակ երկրպագուներին, թե, տեսեք, ով է ձեր սիրելին, 1990-ից ԱԺ պատգամավորը, որն ամսական այսքան դոլար է ստանում որպես աշխատավարձ: Ոչ կարողանում է հարցերին պատասխանել, ոչ դիմանում իմ հակափաստարկներին, ոչ էլ խոսել գիտե, տեսա՞ք: Ուրեմն, հարգելի, սիրելի, պաշտելի հեռուստադիտողներ, ես եմ, ես եմ, ես եմ միակն ու անկրկնելին, ձեր ցավերին դեղ ու դարման բերողը: Իսկ թե ինչն էր այդ վարկաբեկման փորձի նպատակը, դպրոցական պարզ խնդիր է. հարկ եղած դեպքում իմացեք, թե ում եք տալու ձեր ձայնը: Հանուն դրա կարելի է մոռանալ, որ դու ես տանտերը, դու ես հրավիրողը, հյուրին տնից (տաղավարից) հանողն էլ ես դու: Համենայն դեպս, ավելի գեշ, ամոթաբեր տեսարան դեռեւ չէինք տեսել: Իսկ իմ՝ որպես հեռուստադիտողի պարագան ավելի քան ծանրացավ, քանզի մինչ այդ ռուսական ալիքով («Կուլտուրա») դիտում էի ակադեմիկոս Կապիցայի եւ գրող Ակունինի երկխոսությունը՝ մարդկային, քաղաքացիական արժանապատվության մասին, որն ավարտվելուն պես ընկերոջս հեռախոսազանգը տարավ ինձ ուրիշ՝ ԱԼՄ-ական աշխարհ: Խնդիրը սարեր-ձորեր տարբերությունը չէ, այլ մեր նզովյալ բախտը (նորի՛ց), որ հայրենական էկրանը զբաղեցնում են «բազարբաշիներ»:

Բնորոշումների թվացյալ խստությունը, կարծում եմ, հասկանալի պիտի լինի, ես դեռ զսպում եմ ինձ՝ ավելի կոշտ չասելու համար:

Կանգ առեք ու վերջ տվեք, մարդի՛կ: Մեղք ենք՝ մենք էլ, դուք էլ: Մենք, քանի որ ականատես ենք այդ ամենի, դո՛ւք, որ հանդգնած եք, թե օգտակար գործի վրա եք:

ԱԲՄՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. Գ. Անուն-ազգանունների կրճատ, սկզբնատառերով նշումը, վստահ եմ, վիրավորական չի դիտվի: Վերոհիշատակյալ հաղորդման ընթացքում ամեն կարգի վիրավորանքների պաշարը սպառել եք:

Ա. Հ.

ԱՆՀԱՏԵՐ

Հայրենիքի նվիրյալը

Այս մի քանի տողով ես փորձում եմ, արժանին հատուցելով մի լավ հայորդու, նաեւ ներկայացնել իմ մտորումները Հայաստան-սփյուռք հարաբերություններում հաճախ ի հայտ եկող մի երեւույթի մասին: Մենք մի տեսակ բնական ենք համարում, որ արտերկրում Հայաստանի խնդիրների լուծման, նրանց օժանդակման գործին տեղի հայ համայնքները ակտիվորեն են մասնակցում: Իրականում, այդ խնդիրները եւ համայնքների մասնակցությունը դրանց լուծմանը ունենում են շատ բազմազան ձեւեր, եւ արժե երբեմն խորանալ դրանց վերլուծության մեջ:

Հայաստանն արտերկրում սովորաբար ունենում է երեք տեսակի խնդիրներ: Առաջին՝ այդ երկրներից ներդրումներ ներգրավել Հայաստան: Երկրորդ՝ Հայաստանի համար նպաստավոր քաղաքական որոշումներ կորզել այդ երկրների քաղաքական վերնախավից: Երրորդ՝ հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը այդ երկրի կողմից:

Այս տեսակետից, թերեւս եզակի, աննախադեպ օրինակ է այն, ինչ տեղի է ունենում Սլովակիայում: Այս երկիրը ոչ միայն մշտապես առանձնանում է Հայաստանի հետ գործարար կապերով (կամ դրանք սերտացնելու մղումով), ոչ միայն ունի ընդգծված հայաստանամետ քաղաքականություն, այլեւ անցած նոյեմբերին ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

Անտեղյակ մարդը կենթադրի՝ երեւի Սլովակիայում հզոր հայկական համայնք կա: Եվ իրոք, հաճախ է ինչում, որ այս կամ այն ձեռնարկումն իրականացվել է տեղի «հայկական համայնքի» անունից: Ու էլերին է հայտնի դառնում, որ իրականում այդ ամենը ոչ թե «համայնքի» կամ գոնե մի փոքր խմբի գործունեության արդյունքն է, այլ մեկ անհատի՝ գործարար **Ատոմ Գրիգորյանի:** Ճիշտ է, պրն Գրիգորյանը հաճախ ստորագրում է «Սլովակիայի հայ համայնքի ղեկավար», բայց դա այնպես ասած, ձեւի համար է, քանի որ հայերն այդ երկրում այնքան սակավաթիվ են, որ համայնքի մասին խոսելը ընդհանրապես դժվար թե արդարացված է:

Ու ահա, մեկ անձը միայնակ կարողացավ ոչ միայն արթնացնել սլովակյան գործարար համայնքի հետաքրքրությունը դեպի Հայաստան (իհարկե, ոչ առանց ՀՀ կառավարության հանդիպակաց քայլերի), այլեւ կատարել անհավատալին՝ հասնել այն բանին, որ այդ երկրի խորհրդարանը առանց մեկ իսկ «դեմ» ձայնի ընդունեց Հայոց ցեղասպանությունը եւ պահանջեց, որ իր կառավարությունը համապատասխան պահանջներ դնի Եվրամիության հավակնորդ Թուրքիայի առջեւ:

«Հայրենիքը լքողների մեջ հայրենասերներ ման գալը հիմնականում անպտուղ աշխատանք է», ասում է Գրիգորյանը: Լավ է, որ նա ավելացրել է «հիմնականում» բառը, տեղ թողնելով այն սակավ դեպքերի համար, որոնցից մեկն ինքն է՝ բնիկ երեւանցի Ատոմ Գրիգորյանը:

Ուշագրավ է, որ Ատոմ Գրիգորյանը իր հայաստանամետ գործունեության ընթացքում գրեթե չի դիմում Հայաստանի պաշտոնյաների աջակցությանը: Ավելին, իր խոսքերով, լինում են դեպքեր, երբ ՀՀ պաշտոնյաները, ըստ էության, խոչընդոտներ են հարուցում նրա առջեւ:

Մի դեպք արժանի է հատուկ հիշատակման: Սլովակիայի խորհրդարանում Ցեղասպանության հարցի քննարկման նախապատրաստության ամենաթեժ պահին այդ երկրի որոշ լրատվամիջոցներ սկսեցին վարկաբեկիչ տեղեկություններ տարածել պրն Գրիգորյանի մասին, նույնիսկ բանը հասավ դատախազությանը: Ակնհայտորեն այս ամենը հրահրված էր թուրքական իշխանությունների կողմից: Սակայն ուշագրավ է, որ Հայաստանի դեսպանատունը (գտնվում է Վիեննայում ու սպասարկում է, ի թիվս այլ երկրների, Սլովակիան) այդ քարոզարշավին դիմակայելու որեւէ քայլ չձեռնարկեց: Այսինքն, լվանալով իր ձեռքերը, փաստորեն թողտվության, եթե ոչ խրախուսման ազդանշան տվեց չարակամներին:

Ատոմ Գրիգորյանը դեռ շատ հայրենանվեր ձեռնարկումներ ունի: Հուսանք, որ այսուհետեւ հայրենի իշխանություններից նա միայն աջակցություն կստանա:

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ • ՀՀ կենտրոնական բանկ

ՀՀ 2005 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիր

(Համառոտ տարբերակ)

Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 27.01.2005 թ. թիվ 35 Ա որոշմամբ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը կառուցված է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի դրույթերին համապատասխան եւ բաղկացած է հետեւյալ հիմնական բաժիններից.

1. Մակրոնտեսական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում,
2. Հարկաբյուջետային քաղաքականությունը,
3. Արտաքին հատվածը,
4. Գնածը,
5. 2004 թ. դրամավարկային քաղաքականության ուղղությունները եւ միտումները,
6. 2005 թ. դրամավարկային քաղաքականության հիմնական խնդիրները եւ ուղղությունները,
7. Դրամավարկային քաղաքականության ծրագրի իրագործման ռիսկերը,
8. Բանկային համակարգի զարգացումները,
9. Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը:

Բոլոր բաժիններում (բացի «Դրամավարկային քաղաքականություն» բաժնից) ընդհանուր գծերով ներկայացվում են 2004 թ. տվյալ ոլորտներում դրսեւորված հիմնական միտումները եւ դրանց հիման վրա 2005 թ. համար նաեւված զարգացման ուղղությունները: Դրամավարկային քաղաքականությունը, որպես ՀՀ Բ գլխավոր նպատակն ապահովող կարեւորագույն գործիք, ներկայացվում է երկու առանձին բաժիններով, որոնցից առաջինում մանրամասն տրվում են 2004 թ. ձեւավորված դրամավարկային ցուցանիշերն ու միտումները, իսկ երկրորդում՝ 2005 թ. իրականացվելիք դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղություններն ու կիրառվող գործիքակազմը:

Ընդհանուր առմամբ, 2005 թ. մակրոնտեսական միջավայրը կլինի հետեւյալը.

Տնտեսական աճի ցուցանիշը, հմ՝ այն «ՀՀ 2005 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, կանխատեսված է 8%: ՀՆԱ դեֆլյատորը կգերազանցի սպառողական գների ինդեքսի տարեկան միջին մակարդակը եւ կկազմի 4%:

Արտաքին հատվածում շարունակվելու են ՀՆԱ-ում վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի տեսակարար կշռի նվազման միտումները. 2005 թ. կանխատեսվում է 3.4%՝ նախորդ տարվա 4.0%-ի փոխարեն: Նույն միտումները կդրսեւորի նաեւ առեւտրային հաշվի պակասուրդը, որը, եթե բացառենք մեծությամբ կավելանա 12.1%-ով, սակայն տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կնվազ եւ կկազմի 12.0%՝ նախորդ տարվա 13.2%-ի փոխարեն:

Հարկաբյուջետային քաղաքականության իրականացման արդյունքում պետբյուջեի պակասուրդը ՀՆԱ-ում կկազմի 2.3%: Չնայած պակասուրդի ցածր մակարդակին, պետական բյուջեով սպասվելիք մեծածավալ արտարժութային միջոցների՝ ԿԲ-ում փոխարկումն ու ծախսումը դրամավարկային ագրեգատների վրա կունենան էական ընդլայնողական ազդեցություն:

Հաշվի առնելով մակրոնտեսական միջավայրի նշված զարգացումները, ինչպես նաեւ 2005 թ. դոլարայնացման նվազեցմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացման ազդեցությունները, նախատեսվում են դրամային զանգվածի եւ փողի բազայի՝ նախորդ տարվա համեմատ աճի առավել բարձր տեմպեր. համապատասխանաբար միջին տարեկան 17.0% եւ 13.6% (2004 թ. 6.1%-ի եւ 7%-ի փոխարեն):

Նշված սցենարի իրագործմա արդյունքում ՀՀ կենտրոնական բանկը, կիրառելով գնաճի կանխատեսման տարբեր մոդելներ, ծրագրել է ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնաճի մինեւ 3% եւ միջին տարեկան 2.2% ցուցանիշներ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(2004թ. տարեկան ցուցանիշները ՀՀ ԱՎԾ նախնական տվյալներն են: ամախառն պահանջարկի տարեկան ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են)

Տնտեսական աճ եւ գնաճ

2004 թ. ընթացում ձեւավորված մակրոնտեսական միջավայրը ընդհանուր առմամբ բարենպաստ էր միջինժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման առումով: Տարվա ընթացում պահպանվել են բնակչության եկամուտների աճի՝ վերջին տարիներին արձանագրվածմիտումները, որոնք որոշակիորեն պայմանավորվել են արտաքին տրանսֆերտների մեծածավալ ներհոսքով: Համախառն պահանջարկի տեսանկյունից այս զարգացումները առավելապես բերել են մասնավոր հատվածի ծախսերի աճի բարձր տեմպերի արձանագրման, որը համախառն առաջարկիմասով խթանել է ծառայությունների եւ շինարարության ոլորտների աճը:

Տարվա ընթացում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը ավելի պակաս է նպաստել տնտեսական աճին, քան նախորդ տարիներին: Հարկ է նշել նաեւ տնտեսական աճին նպաստած տնտեսության ոլորտների համամասնությունների փոփոխությունը: Վերջինս տեղի է ունեցել մի կողմից՝ գյուղատնտեսության՝ նախորդ տարիների համեմատ աննախադեպ աճի, մյուս կողմից՝ արդյունաբերության աճի տեմպերի էական նվազման հետեւանքով:

Տնտեսական աճը, գերազանցելով ծրագրով նախատեսված ցուցանիշը, կազմել է 10.1 %, որի պայմաններում տարվա վերջի դրությամբ ապահովվել է գնաճի մինչեւ 3 տոկոս ծրագրային ցուցանիշը: Տարվա վերջի դրությամբ գնաճը կազմել է 2 տոկոս, իսկ միջին տարեկան՝ 7%: Միջազգային շուկաներում որոշ ապրանքների գների բարձրացմամբ պայմանավորված՝ զգալի աճել է արդյունաբերության դեֆլյատորը, որի հետեւանքով ՀՆԱ դեֆլյատորի աճը 2 տոկոսային կետով գերազանցել է ծրագրով նախատեսված մակարդակը եւ կազմել է 6%:

Ակնկալվում է, որ մակրոնտեսական միջավայրի զարգացման հիմնական միտումները շարունակվելու են նաեւ 2005 թ.՝ պահպանվելու են բնակչության եկամուտների, հետեւաբար նաեւ՝ մասնավոր սպառման եւ ներդրումների աճի բարձր տեմպերը՝ հանգեցնելով ծառայությունների եւ շինարարության ոլորտում աճի տեմպերի պահպանմանը: Տնտեսության որոշ ոլորտներում կանխատեսվում է արտադրողականության աճ: Նշված զարգացումների արդյունքում ՀՀ ԿԲ-ն 2005 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսում է 8% տնտեսական աճ եւ մինչեւ 3% գնաճ:

Համախառն առաջարկ

2004թ. ընթացում տնտեսության ոլորտային զարգացումներն ապահովել են տնտեսական աճի՝ ծրագրայինից բարձր մակարդակ: Ընդ որում, եթե ծառայությունների եւ շինարարության ոլորտներում պահպանվել են նախորդ տարիների միտումները, ապա գյուղատնտեսությունում եւ արդյունաբերությունում գրանցվել են փոփոխություններ:

Տարվա ընթացում արդյունաբերության ոլորտի աճի տեմպերի որոշակի նվազման հետեւանքով ոլորտի իրական աճը կազմել է 2.1%, իսկ նպաստումը տնտեսակն աճին՝ 0.4 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 2.9 տոկոսային կետի փոխարեն: Նախորդ տարների համեմատ բարձր աճ է արձանագրվել հանքագործության արտադրության եւ արտահանման բնագավառում: Դրա հետ մեկտեղ, վերամշակող արդյունաբերությունում արձանագրված՝ նախոր տարիների համեմատ ցածր աճը հիմնականում պայմանավորվել է աղամանդի վերաբակման եւ ետդարձակալ արդյունաբերության բողարկման ծավալների նվազմամբ:

Քիմիական եւ մետաղագործական արդյունաբերության ոլորտում 2005թ. ակնկալվում են էական արտաքին ներդրումներ՝ ուղղված առկա արտադրական հզորությունների զարգացմանը եւ գործարկմանը: 2005թ. կանխատեսվում է արդյունաբերության ավելացված արժեքի 3.8% իրական աճ, որի պարագայում նպաստումը տնտեսական աճին կազմելու է 0.7 ոկոսային կետ:

Վերջին վեց տարիների համեմատությամբ՝ 2004 թ. գյուղատնտեսությունում գրանցված աննախադեպ՝ 14.5 % աճը հիմնականում պայմանավորվել է բարենպաստ բնակլիմայական պայմաններով եւ ցանքատարածությունների ավելացմամբ: Աճ արձանագրվել է ինչպես անասնաբուծության, այնպես էլ բուսաբուծության (հիմնականում հացահատիկային եւ հատիկաընդավոր մշակաբույսեր, խաղող եւ կարտոֆիլ) բնագավառներում:

2005 թ. գյուղատնտեսությունում ակնկալվում են արտադրողականության աճ միտված որոշակի ներդրումներ: 2005 թ. կանխատեսվում է ոլորտի ավելացված արժեքի 5.1% աճ, որի դեպքում ոլորտի նպաստումը տնտեսական աճին կկազմի 1.1 տոկոսային կետ:

Չնայած Լինսի հիմնադրամի միջոցների բացակայությանը՝ 2004 թ. շինարարության աճը, կազմելով 13.4%, գերազանցել է ծրագրով նախատեսված ցուցանիշը: Այն առավելապես պայմանավորվել է մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորված շինարարության հաշվին: Աճի միտումները կպահպանվեն նաեւ 2005թ., եւ կապիտալ շինարարության ծավալների աճն առնվազն կկազմի 11.5%՝ ապահովելով տնտեսական աճի 1.8 տոկոսային կետը:

Ծառայությունների ոլորտի 12.5% աճը համահունչ էր բնակչության եկամուտների աճին: Տարվա ընթացում զգալի ավելացել են մատուցված կապի ծառայությունների ծավալները՝ պայմանավորված այդ ենթաոլորտում շարունակական ներդրումներով: Կանխատեսվում է, որ 2005թ. ծառայությունները իրական արտահայտությամբ աճելու է 11.1%-ով եւ 3.8 տոկոսային կետով նպաստելու են տնտեսական աճին:

Ըստ անուղղակի հարկերի նպաստումը տնտեսական աճին, նախորդ տարվա համեմատ, նվազել է 0.6 տոկոսային կետով եւ 2004թ. կազմել է 0.2 տոկոսային կետ, մինչդեռ դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մնացել է անփոփոխ՝ 9%: 2005թ., համաձայն «2005 թ. պետբյուջեի մասին» ՀՀ օրենքի, զուտ անուղղակի հարկերի տեսակարար կշռի աճ նախատեսված չէ, իսկ նպաստումը ՀՆԱ աճին կազմելու է 0.5 տոկոսային կետ:

2005թ. տնտեսության տարբեր ոլորտում ակնկալվող օտարերկրյա ուղղակի ներդրումների զգալի ներհոսքը երկրում արտադրողականության աճը, որը, մասամբ արտահայտվելով 2005թ., առավելապես կփոխանցվի հաջորդող տարիներին:

Համախառն պահանջարկ

Տարվա ընթացում էական տեղաշարժ է գրանցվել ներքին պահանջարկի կառուցվածքում: Մասնավորապես, մասնավոր հատվածի ծախսումների10.6% իրական աճին զուգահեռ, 8.7%-ով նվազել են պետական հատվածի ծախսերը: Արդյունքում, վերջինիս տեսակարար կշիռը ներքին պահանջարկում, նախորդ տարվա համեմատ, նվազել է մոտ երկու տոկոսային կետով:

2004թ. բնակչության եկամուտների շարունակական աճը, ինչպես նաեւ մասնավոր տրանսֆերտների եւ օտարերկրյա ներդրումների շարունակական ներհոսքը հանգեցրել են մասնավոր հատվածի ծախսումների՝ տնտեսական աճի համեմատ առաջանցիկ աճի: Մասնավոր սպառման աճը, գերազանցելով ծրագրով նախատեսված ցուցանիշը, կազմել է 8.8%: Մասնավոր ներդրումների մոտ 20% աճը տեղի է ունեցել ինչպես օտարերկրյա ուղղակի ներդրումների, այնպես էլ ներքին խնայողությունների արդյունքում ձեւավորված ներդրումների աճի հաշվին եւ հիմնականում ուղղվել արդյունաբերության եւ ծառայությունների ոլորտ:

Ակնկալվում է, որ 2005թ. բնակչության եկամուտների, ինչպես նաեւ տնտեսական աճի շարունակական բարձր տեմպերի պարագայում մասնավոր հատվածի ծախսերի աճը կպահպանվի բարձր մակարդակի վրա՝ պայմանավորված մասնավոր սպառման (իրական արտահայտությամբ) 6.0% եւ մասնավոր ներդրումների՝ 13.1% աճով:

Տարվա ընթացում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը, ինչպես նշվել է, ավելի փիչ է նպաստել տնտեսական աճին, քան նախորդ տարիներին: Մասնավորապես, եթե պետական սպառումը աճել է ընդամենը 2.6%-ով՝ տարբեր հոդվածների գծով արձանագրված տնտեսման պատճառով, ապա պետական ներդրումների 26.8% նվազումը պայմանավորվել է ինչպես նախորդ տարվա պետական ներդրումների բարձր ցուցանիշով, այնպես էլ 2004թ. ԾԻԳ-երի՝ ներդրումների թերսպասմամբ եւ համաֆինանսավորման նվազմամբ:

Այնուամենայնիվ, չնայած 2004թ. պետական հատվածի ծախսերի նշված բեռմանը, համաձայն «2005 թ. պետբյուջեի մասին» ՀՀ օրենքի, 2005թ. պետական սպառումը ավելանալու է 20.4%-ով, իսկ պետական ներդրումները՝ 30.5%-ով: Ընդ որում, եթե պետական սպառման աճը հիմնականում կարձանագրվի սոցիալական ծախսերի հաշվին, ապա պետական ներդրումները առավելապես կուղղվեն բնակելի եւ ճանապարհային շինարարությանը:

Տարվա ընթացում արձանագրված ներքին պահանջարկի ընդլայնումը ուղեկցվել է արտաքին պահանջարկի աճի տեմպերի զգալի նվազմամբ՝ պայմանավորված «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ապրանքախմբի հումքի ներմուծման, հետեւաբար նաեւ՝ պարբասի արտադրանքի արտահանման նվազմամբ: Արդյունքում՝ ապրանքների եւ ծառայությունների արտահանումը իրական արտահայտությամբ աճել է ընդամենը 1.6%-ով, իսկ ներմուծումը նվազել 1.5%-ով, այնինչ, առանց վերը նշված ապրանքախմբի ցուցանիշի հաշվարկման, արտահանումը աճել է մոտ 29%-ով, իսկ ներմուծումը՝ 10%-ով:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, 2005 թ. ազգային արժույթի որոշակի արժեքավորման պարագայում, եւ՝ ներմուծման, եւ՝ արտահանման իրական աճի տեմպերը գերազանցելու են նախորդ տարվա ցուցանիշները եւ համապատասխանաբար կազմելու են 7.8% եւ 7.4%:

ՀՆԱ դեֆլյատոր

2004 թ. ընթացում միջազգային շուկաներում գունավոր մետաղների եւ թանկարժեք մետաղների եւ քարերի գների բարձրացումը հանգեցրել է արդյունաբերության աղամանդի մշակման եւ մետաղագործական ենթաճյուղերի գների զգալի ավելացման: Արդյունքում՝ արդյունաբերության ավելացված արժեքի դեֆլյատորը, գերազանցելով տնտեսության այլ ճյուղերին, կազմել է 113.5%: Շինարարության, գյուղատնտեսության եւ ծառայությունների ավելացված արժեքի դեֆլյատորները կազմել են 102.6%, 105.0% եւ 103.0%:

Համախառն պահանջարկի տարրերից բարձր՝ 105.8% է եղել ՀՆԱ-ում մեծ տեսակարար կշիռ ունեցող սպառման դեֆլյատորի ցուցանիշը, որը պայմանավորվել է միջին տարեկան գնաճի եւ գյուղատնտեսական մթերքների իրացման գների բարձր մակարդակով: Կապիտալ ներդրումների ինդեքսը կազմել է 102.6%: Դրամի արժեքավորման պարագայում ապրանքների եւ ծառայությունների արտահանման դեֆլյատորը նվազել է 2.2%-ով, իսկ ներմուծման դեֆլյատորը ավելացել 0.8%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ արտահանման դոլարային գների ինդեքսը մոտ երեք տոկոսային կետով գիջել է ներմուծման դոլարային գների ինդեքսին: Արդյունքում՝ ՀՆԱ դեֆլյատորը, 1 տոկոսային կետով գերազանցելով ծրագրով նախատեսված ցուցանիշը, կազմել է 106%:

2005 թ. կանխատեսվում է ՀՆԱ դեֆլյատորի 104% մակարդակ: Արդյունաբերության ավելացված արժեքի դեֆլյատորը կկազմի 103.8%: Շինարարության, գյուղատնտեսության եւ ծառայությունների ոլորտների դեֆլյատորների ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ առանձնապես չեն փոփոխվի եւ համապատասխանաբար կկազմեն՝ 103.5%, 105.3%, 103.8%:

2005 թ. սպառման դեֆլյատորը կկազմի 103.1%: Սպառման դեֆլյատորի հաշվարկը կատարվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա կազմում ներառված միջին տարեկան գնածը 2005 թ. կանխատեսվում է 2.2%-ից ոչ ավելի, իսկ գյուղմթերքների իրացման գների աճը, շարունակելով նախորդ տարիներին դրսեւորած միտումը, կկազմի 5.3%: Կապիտալ ներդրումների դեֆլյատորը, ածանցվելով շինարարության ոլորտի դեֆլյատորից, կկազմի 103.5%: 2005թ. ազգային արժույթի նախատեսված 9.1% արժեքավորման պարագայում ապրանքների եւ ծառայությունների արտահանման դեֆլյատորը նվազելու է 5.5%-ով, իսկ ներմուծման դեֆլյատորը ավելանալու է 1.3%-ով:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Ըստ ՀՀ համախմբված բյուջեի 2004 եւ 2005 թթ. նախնական ցուցանիշների)

2005 թ. ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ծրագիրը բխում է Ադոնության հաղթահարման ռազմավարական ծրագրի, ինչպես նաեւ ՀՀ 2004-2006 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական սկզբունքներից: 2005 թ. ՀՀ բյուջեի կատարման գործընթացում կարեւոր նախապայման կհանդիսանա վերջին մի քանի տարիների ընթացում արձանագրված տնտեսական աճի բարձր մակարդակը:

ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացումների առանցքային հենակետը երկրի ներքին ռեսուրսների արդյունավետ հավաքագրման, մասնավորապես՝ հարկերի (սույն տեքստում՝ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներն ու տուրքերը միասին) հավաքագրման մակարդակի բարձրացման ապահովումն է: Ըստ «2005 թ. ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ 2005 թ. նախատեսվում է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ավելի բարձր աճ՝ 0.5 տոկոսային կետ, քան նախանշված է միջին ժամկետ ծախսային ծրագրում (տարեկան 0.3-0.4 տոկոսային կետ աճի ապահովում): 2005 թ. հարկերի անվանական մեծության տոկոսային աճը կգիջի նախորդ տարվա նույն ցուցանիշին. 2005 թ. նախատեսվում է հարկային եկամուտների մակարդակն ավելացնել 16.1 տոկոսով՝ 2004 թ. դրանց 17.2 տոկոս աճի դեմքում:

2004 թ. հարկերի հավաքագրման գործընթացն առանձնացել է հարկերի կատարման բարձր մակարդակով՝ գրեթե բոլոր ամիսներին արձանագրվել է հարկերի հավաքագրման գերակատարում, տարվա արդյունքում կազմելով շուրջ 10 մլրդ դրամ: Ըստ նախնական տվյալների՝ 2004 թ. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կգերազանցեն տարեկան ծրագիրը 4 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա հարկային եկամուտների մակարդակը՝ 17.2 տոկոսով: Սակայն ՀՆԱ-ի՝ 2004 թ. համար կանխատեսված մակարդակի գերազանցման պարագայում նույնիսկ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 1.0 տոկոսային կետով ցածր կլինի ՀՀ կառավարության 2004 թ. բյուջետային ուղերձում ծրագրվածից եւ կկազմի 14.1%:

2005 թ. հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի հարկերի տեսակարար կշիռը, նախորդ տարվա ընթացքում արձանագրված ցուցանիշի համեմատությամբ, փոքր-ինչ կնվազի: Այսպես, 2005 թ. ՀՀ պետբյուջեի ուղղակի հարկերը կկազմեն հարկային եկամուտների 19.1%-ը՝ 2004 եւ 2003 թվականների համապատասխանաբար՝ 19.6% եւ 16.1%-ի փոխարեն, իսկ անուղղակի հարկերը՝ 64.6%-ը՝ նախորդ տարվա 64.1%-ի եւ 2003 թ. 69.5%-ի փոխարեն: Միեւնույն ժամանակ, 2005 թ. ուղղակի հարկերի աճը նախորդ տարվա նկատմամբ կկազմի 13.1%, իսկ անուղղակի հարկերինը՝ 17.2% (2004 թ. այդ ցուցանիշների աճը համապատասխանաբար կազմել է 36.6% եւ 11.3%):

2004 թ. արձանագրվել են հարկերի հավաքագրման անհամաչափության՝ նախորդ տարիներին դրսեւորված միտումների հարթեցման դրական արդյունքներ: Այսպես, տարվա ընթացում միջին ամսական հարկերի 28%-ը բաժին է ընկել ամսվա վերջին երեք օրերին, իսկ 14%-ը՝ ամսվա վերջին օրվան: Մինչդեռ, 2003 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 48% եւ 28%, իսկ 2002 թ.՝ 56%-եւ 40%:

Տարվա ընթացում հարկերի հավաքագրման համաչափությունը չուղեկցվեց ծախսերի հարթ բաշխվածությամբ, որի արդյունքում Գանձապետարանի միասնական հաշվում մշտապես զգալի կուտակումներ նկատվեցին: Պետական բյուջեի ծախսային որոշ հոդվածների գծով տարվա գրեթե բոլոր ամիսներին արձանագրվեցին մնացորդներ, իսկ դեկտեմբերին ձեւավորված պետական բյուջեի ցուցանիշները էական բեռում առաջացրին բյուջեի ծախսերի՝ տարվա տասնմեկ ամիսներին դրսեւորած վարքագծում: Դա արտահայտվեց թե սեզոնայնության փոփոխմամբ, թե ծախսային առանձին հոդվածների կատարողականների՝ ծրագրված համամասնություններից բեռումների արձանագրմամբ:

Գանձապետարանի միասնական հաշվում գտնվող՝ համայնքների բյուջեի, արտաբյուջեի, կենսաթոշակային բյուջեի միջոցների ծրագրված եւ փաստացի շարժերի միջեւ բեռումներն առանձին ամիսների զգալի ազդեցություն ունեցան Գանձապետարանի միասնական հաշվի միջոցների վրա: Տարվա ընթացում Գանձապետարանի միասնական հաշվի միջին օրական մնացորդը կազմել է 38 մլրդ դրամ, որը շուրջ 2.7 անգամ գերազանցել է 2003 թ. մակարդակը: Նշված միջոցները թե իրենց մեծության եւ թե ծրագրված ու փաստացի մակարդակների միջեւ արձանագրված բեռումների հետեւանքով խնդիրներ են առաջացրել դրամավարկային քաղաքականության կարճաժամկետ ծրագրման եւ իրականացման գործընթացում:

Ընդհանուր առմամբ կարելի է ակնկալել, որ նշված խնդիրը կդրսեւորվի նաեւ 2005 թ.: Միեւնույն ժամանակ, պետական բյուջեի արտաքին միջոցների փոխարկման եւ միասնական հաշվից վերը նշված ծախսումների հետեւանքով փողի բազայի ցուցանիշը 2005 թ. կաճի մոտ 32 մլրդ դրամով: Այս պարագայում 2005 թ. զգալի ջանքեր կպահանջվեն դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների ծրագրման եւ կոորդինացման համար:

Դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում 2004 թ. դրական տեղաշարժեր են նկատվել՝ կապված փողի զանգվածում կանխիկի տեսակարար կշռի նվազման հետ, որը մասամբ պայմանավորված էր բյուջեի ծախսերի՝ կանխիկ էջանառությամբ իրականացվող ծավալների կրճատման հետ: 2004 թ. ընթացում կանխիկի տեսակարար կշիռը փողի զանգվածում (ժամանակահատվածի վերջի դրությամբ) կազմել է 34.5%՝ նախորդ տարվա 39.4%-ի փոխարեն, ուղեկցվելով կանխիկի ավելի հարթ բաշխվածությամբ:

Ադոնության հաղթահարման ռազմավարական եւ 2004 2006 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրին համապատասխան՝ 2005 թ. ՀՀ բյուջեի ծախսային քաղաքականությունը նպատակաուղղվելու է բյուջեի ընդհանուր ծախսերի մակարդակի՝ նախորդ տարվա համեմատ 18.8% աճի ապահովմանը: 2004 թ. վերջինս կազմել է 7%: Ընդ որում, նշված աճն ապահովվելու է բյուջեի ընթացիկ ծախսերի 14.9% եւ կապիտալ ծախսերի 38% աճի շնորհիվ:

2004թ. հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա եղել է զսպող բնույթի եւ ըստ ազդակի հաշվարկված ցուցանիշի՝ կազմել է 1.4 զսպող: Իսկ 2005 թ. հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը կլինի ընդլայնողական եւ ըստ ազդակի հաշվարկված ցուցանիշի՝ կկազմի 0.9 ընդլայնող:

2005 թ. կշարունակվի ՀՆԱ-ում պետական բյուջեի պակասուրդի կրճատման քաղաքականության իրականացումը: Տարվա արդյունքում նշված ցուցանիշը կկազմի 2.3%՝ 2004 թ. փաստացի 1.8%-ի փոխարեն: 2005 թ. բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում գերակշռելու են արտաքին աղբյուրները (71%), որոնք փոքր-ինչ ավելի են 2004 թ. համար նախատեսված մակարդակից: 2005 թ. եւս կպահպանվի արտաքին միջոցներից ՀՀ բյուջեի կախվածության՝ 2004թ. արձանագրված մակարդակը: 2005 թ. բյուջեի ծախսերի մոտ 16.4%-ը իրականացվելու է արտաքին միջոցների հաշվին, իսկ 2004 եւ 2003 թվականներին նշված ցուցանիշը համապատասխանաբար կազմել էր՝ 16.3% եւ 25%:

2005 թ. պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների էական փոփոխություններ չեն նախատեսվել ►

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

ՀՀ կենտրոնական բանկ

ոտեական արժեքդերից սացվող մուտքերը կկազմեն 6.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 5.5 մլրդ դրամի փոխարեն, իսկ միասնական հաշվից ծախսումները՝ 8.6 մլրդ դրամ: 2004 թ. միասնական հաշվից նախատեսվել էր 12 մլրդ դրամի ծախս, սակայն փաստացի կատարվել են խնայողություններ: Արդյունքում ՀՀ բյուջեի դակասուրդը եւ ֆինանսավորման աղբյուրները տեղվել են ծրագրված մակարդակներից:

2004 թ. ոտեական արժեքդերի տեղաբաշխման բավականին հաջող արդյունքներ արձանագրվեցին՝ տեղաբաշխվեցին ավելի երկար ժամկետայնությամբ արժեքդեր, այդ թվում՝ 2004թ. վերջին եռամսյակում ոչ բարձր տոկոսադույթով 10 տարի ժամկետայնությամբ 1.2 մլրդ դրամ ծավալի ոտեական արժեքդեր: 2005 թ. նախատեսվում է ոտեական արժեքդերի ժամկետայնության ավելացում, այդ թվում՝ 15 տարի ժամկետայնությամբ արժեքդերի թողարկումով, ինչը լուրջ ազդակ կհաղորդի տնտեսությունում երկարաժամկետ խնայողությունների ձեւավորմանը:

2004 թ. աղահովվել է ոտեական արժեքդերից սացվող զուտ եկամտի նախատեսված մակարդակը, եւ արձանագրվել է շրջանառության մեջ գտնվող արժեքդերի միջին ժամկետայնության էական ավելացում. այն կազմել է 754 օր՝ նախորդ տարվա 352 օրվա փոխարեն: Ըստ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ մշակված ծրագրի՝ ՀՀ ԿԲ-ն երկրորդային շուկայից տարվա ընթացքում գնել է 6.0 մլրդ դրամի արժեքդեր, ինչը որոշակիորեն բարելավել է դրամավարկային քաղաքականության գործիքակազմը:

2005 թ. հարկաբյուջետային քաղաքականությունը ոտեբյուջեի դակասուրդի ցածր մակարդակի եւ 2004 թ. ընթացքում արտաքին ոտերի մեծածավալ մարումների դայմաններում, կաղահովի ՀՀ ոտեական ոտերի կայունության համար անհրաժեշտ մակարդակ: 2004 թ. ՀՆԱ բարձր մակարդակի, ինչպես նաեւ դակասուրդի՝ ծրագրվածից ցածր մակարդակի դարագայում ոտերի/ՀՆԱ հարաբերությունը աղահովել է բավականին ցածր մակարդակ: Համեմատության համար նշենք, որ 2005 թ. ՀՀ ոտերի/ՀՆԱ-ն կկազմի 33.6%՝ նախորդ տարվա 35.7%-ի փոխարեն:

Ամփոփելով նշենք, որ դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների արդյունավետությունն կոորդինացման արդյունավետության բարձրացման տեսանկյունից նոցասկահարմար կլինի զարգացնել հարկաբյուջետային քաղաքականության տարեկան, եռամսյակային եւ ամսական ծրագրերի եւ դրանց ընթացքի միջեւ եղումների վերաբերյալ մեկնաբանությունների հրադարակման գործընթացը:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾԸ

(2004թ. վճարային հաշվեկշռի ցուցանիշները՝ ՀՀ ԿԲ գնահատականներն են՝ հիմնված ԱԿԾ կողմից հրադարակված 2004թ. վճարային հաշվեկշռի 3 եռամսյակների փաստացի ցուցանիշների վրա)

Ընդհանուր միտումներ

2005 թ. արտաքին հաշվեկշռի զարգացումները կդայմանավորվեն համաշխարհային տնտեսությանը ՀՀ տնտեսության ինտեգրման շարունակական գործընթացով, ինչպես նաեւ գրանցված ՀՆԱ բարձր աճի դահանջմամբ եւ դրան համահունչ մակրոմիջավայրի ձեւավորմամբ:

2004 թ. որոշ դրական դրսեւորում, նախորդ տարվա համեմատ արձանագրվեց ընթացիկ հաշվի դակասուրդի նշանակալի կրճատում ինչպես բացարձակ արժեքով (143.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 190.6 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն), այնպես էլ՝ ՀՆԱ-ում տեսակարար կշռով (4.0%՝ նախորդ տարվա 6.8%-ի փոխարեն): Ընթացիկ հաշվի դակասուրդի կրճատումը հիմնականում դայմանավորված էր մասնավոր հատվածի տրանսֆերտների զուտ ներհոսքի աննախադեմ աճով, որն իր հերթին, որպես դահանջարկի տար, հանգեցրեց առեւտրային եւ ծառայությունների հաշվեկշիռների դակասուրդների աճի: 2004թ. համար հատկանշական էր նաեւ արտաքին առեւտրում զգալի կշիռ ունեցող «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի ներմուծման եւ արտահանման ծավալների զգալի կրճատումը, որի հետեւանքով, նախորդ տարվա համեմատ, էապես դանդաղեցին ընդհանուր արտահանման եւ ներմուծման աճի տեմդերը: Չնայած նախորդ տարվա համեմատ 2004թ. կադիտալի ներհոսքը կրճատվել է, այնուամենայնիվ, կադիտալի ու ֆինանսական հաշվի ցուցանիշը գերազանցել է ընթացիկ հաշվի դակասուրդը, որի արդյունքում համալրվել են Կենտրոնական բանկի համախառն արտաքին դահուստները:

2005 թ. ակնկալվում է ընթացիկ հաշվի բոլոր հոդվածների ցուցանիշների աճ: Արդյունքում՝ 2005 թ. ընթացիկ հաշվի դակասուրդը բացարձակ արժեքով կավելանա մոտ 4.5 մլն ԱՄՆ դոլարով եւ կկազմի 148.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ում տեսակարար կշիռը կնվազի եւ կկազմի 3.4% (ներառյալ դաշտոնական տրանսֆերտները)՝ նախորդ տարվա 4.0%-ի փոխարեն: Ընդ որում, ակնկալվում է, որ 2005թ. առեւտրային հաշվեկշռի դակասուրդը բացարձակ արժեքով նույնդես կաճեցնա, սակայն կնվազի ՀՆԱ-ում տեսակարար կշռով՝ նախորդ տարվա 13.2%-ի փոխարեն կազմելով 12.0%: Նախորդ տարվա համեմատ, ծառայությունների հաշվեկշռի եւ զուտ գործոնային եկամուտների տեսակարար կշիռները ՀՆԱ-ում համեմատաբար կայուն վարքագիծ կունենան, համադատասխանաբար կազմելով ՀՆԱ 2.1%-ը եւ1.5%-ը: Որոշակիորեն կնվազի տրանսֆերտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում եւ կկազմի ՀՆԱ 9.2%-ը՝ նախորդ տարվա 9.9%-ի փոխարեն, թեեւ բացարձակ արժեքով նույնդես վերջիններիս աճ է ակնկալվում:

2005 թ., ի տարբերություն նախորդ տարվա, կադիտալի եւ ֆինանսական հաշվի գծով միջոցների զուտ ներհոսքը կավելանա: Կադիտալի եւ ֆինանսական հաշվի միջոցների ներհոսքը հիմնականում կադահովվի օտարերկրյա ուղղակի ներդրումների, ինչպես նաեւ ոտեության վարկերի զուտ ներհոսքի աճի հաշվին: Միեւնույն ժամանակ, կադիտալի ու ֆինանսական հաշվի դրական մնացորդը կգերազանցի ընթացիկ հաշվի բացասական մնացորդը, ինչն էլ կդայմանավորի 2005 թ. վճարային հաշվեկշռի դրական մնացորդի ձեւավորումը: Արդյունքում՝ կավելանան ԿԲ համախառն արտաքին դահուստները:

Ընթացիկ հաշիվ

Ադրանքների արտահանման (կրեդիտ) աճը 2004թ. կազմել է 4.8%, իսկ առանց «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի՝ 22.1%: Արտահանման աճը աղահովվել է հիմնականում «Ոչ թանկարժեք մետաղներ եւ դրանցից դատրաստված իրեր», «Հանքահումքային մթերքներ», «Դատրաստի սննդի արտադրանք» ադրանքախմբերի հաշվին (համադատասխանաբար՝ 30%, 97%, 4%), որոնք մեծ կշիռ ունեն ընդհանուր արտահանման մեջ: Հանքահումքային մթերքների արտահանման աննախադեմ աճը հիմնականում արդյունք է դղնձի, մոլիբդենի համաշխարհային գների բարձրացման:

2004 թ. «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի արտահանման ծավալների 14%-ով նվազումը հիմնականում դայմանավորված էր Ռուսաստանից ներմուծվող ադամանդի գների աճով (ինչն արդյունք էր Ռուսաստանի ադամանդի վաճառքով զբաղվող ոտեական ձեռնարկության գործունեության ազատականացմամբ) եւ ցոյտում արտադրողականության աճի դանդաղումով:

Ակնկալվում է, որ 2005 թ., նախորդ տարվա համեմատ, արտահանումը (կրեդիտ) կավելանա 91.4 մլն ԱՄՆ դոլարով (12.5 տոկոսով) եւ կկազմի 821.0 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը 2005 թ. կադահովվի արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ադրանքախմբերի աճերի հաշվին: «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի արտահանման ծավալները 2005 թ. կավելանան 37.6 մլն ԱՄՆ դոլարով (12.5%-ով):

«Ոչ թանկարժեք մետաղներ եւ դրանցից դատրաստված իրեր» եւ «Հանքահումքային մթերքներ» ադրանքախմբերի արտահանման ծավալները 2005 թ. կաճեն 16.0 մլն ԱՄՆ դոլար (13.7%) եւ 12.0 մլն ԱՄՆ դոլար (12.7%): «Դատրաստի սննդի արտադրանք» ադրանքախմբի արտահանման ծավալները կաճեն 9.3 մլն ԱՄՆ դոլարով (12.4%): Նշված ադրանքախմբում գերակշռող է «Ոգելից եւ ոչ ոգելից խմիչքներ» ենթաադրանքախումբը, որի արտահանման աճով կդայմանավորվի ամբողջ ադրանքախմբի արտահանման հիմնական աճը:

Ադրանքների ներմուծումը (դեբետ) 2004թ. ավելացել է 6.0 %-ով, իսկ առանց «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի՝ 13.9%-ով: Ներմուծման աճի բարձր տեմդերը հիմնականում բնակչության եկամուտների շարունակական աճի, ինչպես նաեւ ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ դայմանավորված ներմուծման էժանացման: Իսկ ներմուծ հիմնականում ավելացել է «Հանքահումքային մթերքներ», «Բուսական ծագման արտադրանք», «Դատրաստի սննդի արտադրանք» եւ «Վերգետնյա, օդային եւ ջրային տրանսդորտի միջոցներ» ադրանքախմբերի աճի հաշվին (համադատասխանաբար՝ 26.5%, 31.6%, 17.5%, 24.1%):

2005 թ. ադրանքների ներմուծումը (դեբետ), ըստ Կենտրոնական բանկի կանխատեսումների, կազմելու է 1345.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 148.0 մլն ԱՄՆ դոլարով (12.4%): Վերջին տարիներին գրանցված տնտեսական բարձր ակտիվությունը, եկամուտների զգալի աճը եւ տրանսֆերտների աննախադեմ աճը 2005 թ. իրենց ազդեցությունը կունենան ներմուծման աճի վրա: Դրա հետ կադված՝ ամբողջական դահանջարկի աճը կհանգեցնի սդառողական, ներդրումային եւ հումքային ադրանքների ներմուծման աճի: Ընդ որում, սդառողական եւ ներդրումային ադրանքների աճը՝ 16.4% եւ 31.9%, առաջանցիկ կլինի հումքային ադրանքների աճից (6.5%): Ներդրումային ադրանքների ներմուծման բարձր աճը մասամբ կդայմանավորվի օտարերկրյա ուղղակի ներդրումների ակնկալվող նշանակալի աճով:

Ըստ ադրանախմբերի՝ ներմուծման աճը հիմնականում կդայմանավորվի ներմուծման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի՝ 22.1%: Արտահանման աճը ադահովվել է հիմնականում «Ոչ թանկարժեք մետաղներ եւ դրանցից դատրաստված իրեր», «Հանքահումքային մթերքներ», «Դատրաստի սննդի արտադրանք» ադրանքախմբերի հաշվին (համադատասխանաբար՝ 30%, 97%, 4%), որոնք մեծ կշիռ ունեն ընդհանուր արտահանման մեջ: Հանքահումքային մթերքների արտահանման աննախադեմ աճը հիմնականում արդյունք է դղնձի, մոլիբդենի համաշխարհային գների բարձրացման:

2004 թ. «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի արտահանման ծավալների 14%-ով նվազումը հիմնականում դայմանավորված էր Ռուսաստանից ներմուծվող ադամանդի գների աճով (ինչն արդյունք էր Ռուսաստանի ադամանդի վաճառքով զբաղվող ոտեական ձեռնարկության գործունեության ազատականացմամբ) եւ ցոյտում արտադրողականության աճի դանդաղումով:

Ակնկալվում է, որ 2005 թ., նախորդ տարվա համեմատ, արտահանումը (կրեդիտ) կավելանա 91.4 մլն ԱՄՆ դոլարով (12.5 տոկոսով) եւ կկազմի 821.0 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը 2005 թ. կադահովվի արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ադրանքախմբերի աճերի հաշվին: «Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ադրանքախմբի արտահանման ծավալները 2005 թ. կավելանան 37.6 մլն ԱՄՆ դոլարով (12.5%-ով):

«Ոչ թանկարժեք մետաղներ եւ դրանցից դատրաստված իրեր» եւ «Հանքահումքային մթերքներ» ադրանքախմբերի արտահանման ծավալները

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

ՀՀ կենտրոնական բանկ

• Հարկաբյուջետային հասվածի զարգացումների ազդեցությունը գնածի վրա զսպողական է եղել. զուտ անուղղակի հարկեր/ՀՆԱ հարաբերությունը 2003 թ. 8.7%-ի փոխարեն կազմել է 8%:

• Վարչական կարգավորման գների փոփոխության ազդեցությունը գնածի վրա ընդհանուր առմամբ կազմել է 0.29 տոկոսային կետ, որից՝ ջրի (աճը՝ 85%) եւ գազի (15.7%) սակագների ազդեցությունը համապատասխանաբար կազմել է 0.19 եւ 0.1 տոկոսային կետ: Սպառողական զամբյուղի վրա գրանցվել է նաեւ այս սակագների անուղղակի ազդեցություն՝ համապատասխանաբար՝ 0.5 եւ 0.1 տոկոսային կետի չափով:

Նշված զարգացումների արդյունքում 2004 թ., 2003 թ. դեկտեմբերի համեմատությամբ, գրանցվել է 2% գնաճ: Տարվա առաջին կիսամյակում ծրագրված 5.2%-ի փոխարեն գրանցվել է 4.5% գնաճ, իսկ երկրորդ կիսամյակում՝ 2.1% գնանկման փոխարեն 2.5% գնանկում: Գնաճի ամսական ցուցանիշների համեմատաբար հարթ ընթացքը նպաստել է նաեւ միջին գնաճի՝ ծրագրայինից ցածր մակարդակի ապահովմանը՝ 7%:

Ընդհանուր առմամբ, 2004 թ. իրականացված դրամավարկային քաղաքականությունը, բարձր գնաճի սպասումների, համախառն պահանջարկի էական ընդլայնման, ներքին եւ արտաքին հասվածների զգալի ազդեցությունների պայմաններում, կարելի է համարել բավականին արդյունավետ:

Ֆինանսական ծրագրման շրջանակներում կենտրոնական բանկի բոլոր մոդելների արդյունքները վկայում են, որ 2005 թ. համար ծրագրված՝ 2004 թ. դեկտեմբերի նկատմամբ մինչեւ 3% գնաճը, որին համապատասխանում է միջին տարեկան 2.2% ցուցանիշը, կանխատեսված մակրոմիջավայրի եւ դրամավարկային քաղաքականության ծրագրված ուղղությունների պահպանման դեպքում լիովին իրատեսական է:

2005 թ. գնաճի ծրագրային ցուցանիշի ապահովման առումով էականորեն նվազել են 2003 թ. ձեւավորված բարձր գնաճի սպասումները, եւ սպառողական զամբյուղում էական տեսակարար կշիռ ունեցող ապրանքների առումով ռիսկեր չեն կանխատեսվում, սակայն տարին զերծ չէ այլ ռիսկերից: Չնայած գործազրկության մակարդակի էական նվազում պատճառական վիճակագրությունը չի գրանցում, սակայն իրական աշխատաժամերի աճի նման տեմպ (2004 թ. հունվար-նոյեմբերին 26%՝ 2003 թ. տարեկան միջին 14.4%-ի փոխարեն) չէր գրանցվի՝ առանց գործազրկության նվազման:

2004 ԹՎԱԿԱՆԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Համաձայն 2004 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրի հիմնական ուղղությունների, ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը նպատակաուղղվելու էր երկրում մակրոտնտեսական կայունության պահպանմանը, 7% տնտեսական աճի եւ մինչեւ 3% գնաճին համահունչ փողի առաջարկի ապահովմանը: 2004 թվականն առանձնանալու էր վերջին տարիների համեմատ ոչեբյուջեի եկամուտներում եւ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում արտաքին ֆինանսական հոսքերի ծավալների էական կրճատմամբ:

Հաշվի առնելով նշված գործոնները՝ ԿԲ կողմից գնահատվել էր փողի պահանջարկը հետեւյալ կերպ. ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամային զանգվածի 12.3%-ով եւ միջին տարեկան 13.6%-ով ավելացում, իսկ փողի բազայի՝ համապատասխանաբար 4.9%-ով եւ 9.1%-ով աճ: Ընդ որում, հարկաբյուջետային քաղաքականության հիմնականում չեզոք ազդեցության պարագայում, Կենտրոնական բանկը հնարավորություն կունենար փողի առաջարկի ավելացման նկատառումով տարվա երկրորդ կեսից կիրառել իրացվելիություն նվազեցնող դրամային գործիքներ:

Տարվա ընթացքում ձեւավորված մակրոմիջավայրը, ինչպես նաեւ համաշխարհային տնտեսությունում եւ ֆինանսական շուկայում ընթացող երեւույթները հանգեցրել են մի շարք չնախատեսված դրսեւորումների նաեւ դրամավարկային բնագավառում: Ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի զանգվածն աճել է 22.3%-ով եւ միջին տարեկան 18.7%-ով, այն դեպքում, երբ դրամային զանգվածն աճել է ընդամենը՝ համապատասխանաբար 9.2%-ով եւ 6.1%-ով: Աճի տեմպերի նման տարբերությունը հիմնականում բացատրվում է փողի զանգվածի կառուցվածքում արժեքային ավանդների աճի անհամեմատ արագ տեմպերով՝ 39.7% (վերջին 3 տարիների միջին տարեկան աճը կազմել է 9.6%):

Ի տարբերություն դրա, տարվա ընթացքում հակառակ միտումն է դիտվել փողի զանգվածի դրամային բաղադրատարրերի վարքագծում: Դրամային ավանդները նախորդ տարիների միջին տարեկան 26% աճի փոխարեն աճել են 13.9%-ով, իսկ շրջանառությունում կանխիկը՝ 11.5%-ի փոխարեն 7.1%-ով:

2004 թ. Կառավարության արտաքին ֆինանսական հոսքերի փոխարեն գերակշռել են մասնավոր տրանսֆերտներն ու այլ արժեքային մուտքերը, որոնց դրսեւորումներից հարկ է առանձնացնել արտաքին ավանդների մեծ աճը եւ դրամի արժեքավորումը: Նշված երեւույթները դիտվել են տարվա սկզբից, սակայն տեմպերն առավել արագացել են տարվա երկրորդ կեսին՝ պայմանավորված մասնավոր տրանսֆերտների ու զբոսաշրջության աճի տեմպերի արագացմամբ եւ առավելապես երկրորդ կիսամյակում դրանց կենտրոնացմամբ:

Ի տարբերություն նախորդ տարիների, պետբյուջեի արտաքին ֆինանսական հոսքերի սահմանափակության պարագայում, 2004թ. զգալիորեն դանդաղել են բանկային համակարգի ՁԱԱ աճի տեմպերը՝ 14.9% (2002թ. 82.9%-ի եւ 2003թ. 30.5%-ի պարագայում): Այս տարի արձանագրվել է բանկային համակարգի ՁՆԱ-ի 59.2% աճ՝ 2002թ. եւ 2003թ. համապատասխանաբար 29.3% եւ 27.7% նվազման փոխարեն:

Համակարգի ՁԱԱ-ը համալրվել են ինչպես ԿԲ-ի՝ 15.1 մլրդ դրամով, այնպես էլ առեւտրային բանկերի՝ 13.9 մլրդ դրամով զուտ արտաքին ակտիվների ավելացման հաշվին: Այս հոսքերի առկայությամբ, բանկային համակարգում իրականացվել է տնտեսության վարկավորման ակտիվ գործընթաց: Տնտեսության վարկավորման ցուցանիշն աճել է 37.9%-ով՝ վերջին երկու տարվա միջին տարեկան 4.5% աճի փոխարեն:

Պայմանավորված ԿԲ-ում Գանձապետարանի միասնական հաշվի կուտակումներով, բանկային համակարգի հանդեպ Կառավարության պարտավորությունների ցուցանիշն այս տարի եւս շարունակել է նվազել (1.3 մլրդ դրամով), ինչը մասամբ չեզոքացվել է բանկերի կողմից իրենց պետարժեքթղթերի պորտֆելների համալրմամբ:

Տարվա ընթացքում արձանագրվել է նաեւ բանկային համակարգի զուտ այլ ակտիվների նվազում 14.8 մլրդ դրամով, որն ամբողջությամբ բաժին է ընկել առեւտրային բանկերին, ինչը վկայում է բանկերի՝ շահույթով աշխատելու հանգամանքի մասին:

Չնայած փողի ագրեգատների դրամային տարրերի աճի տեմպերի դանդաղման պայմաններում 2004-ին արձանագրվել է դրամայնացման գործակցի եւ դրամային բազմարկչի նվազում՝ համապատասխանաբար 8.3% եւ 1.2%-ով, իսկ փողայնացման գործակիցն ու փողի բազմարկիչն աճել են տարեկան 2.4% եւ 10.5%-ով:

Նույն գործոններով պայմանավորված՝ տարվա ընթացքում փողի զանգվածի շրջաշրջանի արագությունը նվազել է 2.7%-ով, այն դեպքում, երբ դրամային զանգվածի շրջաշրջանի արագությունն ավելացել է 8.9%-ով:

Վերոնշյալ մակրոտնտեսական իրավիճակում, փողի առաջարկի կարգավորման տեսանկյունից, ԿԲ-ն պահպանել է դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրի հիմնական ուղղությունները եւ էական ճշգրտումներ չի կատարել՝ առավելապես կարեւորելով իր գլխավոր նպատակի ապահովման առաջնայնությունը, ինչը համահունչ է եղել նաեւ լողացող փոխարժեքի քաղաքականության սկզբունքներին: ԿԲ-ն փողի բազան հիմնականում կառավարել է տատանման թույլատրելի միջակայքի շրջանակներում, իսկ առաջին կեսին՝ նաեւ սահմանից ներքեւ:

Նման նկատառումներով իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում փողի բազան ժամանակաշրջանի վերջի դրությամբ աճել է 11.4%-ով, իսկ միջին տարեկան՝ 7.0%-ով: Ընդ որում, ԿԲ կողմից փողի առաջարկի կարգավորման տարեկան ընթացքն ըստ կիսամյակների էապես տարբերվել է: Տարվա առաջին կեսին, կանխիկ դրամի՝ ծրագրվածից առավել արագ տեմպերով նվազման, եւ այդ իրացվելիության հիմնականում ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվներում կուտակման պայմաններում բանկերն ակտիվորեն դիմել են ԿԲ-ում ավանդադրման մեսական հնարավորության գործիքին: Միեւնույն ժամանակ, դրամային ավելցուկի կրճատման նպատակով, առաջին կիսամյակում ԿԲ նախաձեռնությամբ ակտիվորեն կիրառվել են հակադարձ ռեպո գործառնություններն ու արժեթղթերի տրամադրման սվոփ գործիքները՝ համապատասխանաբար 5.3 մլրդ եւ 8.9 մլրդ դրամ համախառն ծավալով, որոնք եւս մինչեւ կիսամյակի վերջ մարվել են: Այդուհանդերձ, արդիական միջոցների իրացվելիության ավելցուկի համեմատաբար ցածր մակարդակի պայմաններում, ԿԲ-ն մինչեւ տարեվերջ համալրել է առաջին եռամսյակի վերջին զրոյացված ՊՊ պորտֆելը շուրջ 5.9 մլրդ դրամով:

Երկրորդ կիսամյակում, ելնելով խոշորածավալ արժեքային ներհոսքի հետեւանքով տնտեսությունում ձեւավորված մեծ առաջարկից եւ դրա ազդեցությամբ արժեքների շուկայում դրսեւորված ճնշումներից, արժեքների ավելցուկը սterիլացնելու նպատակով ԿԲ-ն ակտիվացրել է արժեքների գնման եւ արժեքների ներգրավման սվոփ գործիքները:

Դրամային իրացվելիության կարգավորման, ինչպես նաեւ ՀՀ ԿԲ եւ Կառավարության բաղաքականությունների կոորդինացման բնագավառում նոր մեխանիզմ ներդնելու խնդիրներից ելնելով՝ հոկտեմբերից Գանձապետարանը լրացուցիչ թողարկել եւ տեղաբաշխել է 4.4 մլրդ դրամի պետական պարտատոմս՝ մինչեւ դեկտեմբերի վերջ մարման ժամկետով, որն ամբողջությամբ ավանդադրվել է ԿԲ ավանդային հաշվում: Այս մեխանիզմի հաջող փորձարկումը հետաքրքրություն է նաեւ հետագայում այն դրամային իրացվելիության ներքաշման ակտիվ գործիք դարձնելու նպատակ, ինչի անհրաժեշտությունը հատկապես կարտահայտվում է 2005 թ:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ 2004թ-ին ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականությունը, տարվա ընթացքում առկա հիմնախնդիրներով ու իրականացման գործընթացի դժվարություններով հանդերձ, համահունչ է եղել տնտեսական աճի տեմպերին: Դրամային իրացվելիության ավելցուկի միջին տարեկան մակարդակի ավելի քան 30% աճն իր ազդեցությունն է ունեցել նաեւ ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վրա: Շարունակվել են նվազման միտումները շուկայի բոլոր հատվածներում: Տարվա ընթացքում Գանձապետարանի կողմից տեղաբաշխվել են հիմնականում 9-12-ամսյա եւ միջինժամկետ պարտատոմսեր, որոնց տարեկան եկամտաբերությունը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է համապատասխանաբար 4.7 ու 7.2 տոկոսային կետով եւ կազմել 5.0% եւ 7.2%:

ՊՊ առաջնային շուկայում տոկոսադրույքների նվազման միտումները տեղադրել են նաեւ ՊՊ եւ ռեպո գործառնությունների երկրորդային շուկայի վրա՝ եւ հանգեցնելով տոկոսադրույքների նվազման, ինչի հիման վրա էլ, նկատի ունենալով նաեւ իրացվելիության ներարկման անհրաժեշտությունը, ԿԲ-ն տարվա ընթացքում աստիճանաբար իջեցրել է դրամավարկային գործիքների տոկոսադրույքները. ռեպո գործառնություններինը՝ տարեսկզբի 7%-ից 3.75%-ի, լոմբարդային վարկերինը՝ 20%-ից 16%-ի եւ ավանդներինը՝ 3.5%-ից 1%-ի:

Տնտեսությանը տրամադրված վարկերի եւ ներգրավված ավանդների միջին ամսական տոկոսադրույքները տարվա ընթացքում նվազել են համապատասխանաբար 2.5 եւ 1.1 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով տարեկան 19.2% եւ 4.8%: Արդյունքում, տարվա ընթացքում 2 տոկոսային կետով իջել է նաեւ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը եւ կազմել է 16%:

2005 ԹՎԱԿԱՆԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2005 թ. ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականությունը կնպատակաուղղի իր հիմնական խնդրի՝ Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովմանը՝ շարունակելով գործել փողի ծավալային կարգավորման ռազմավարության ներքո:

2005 թ. նախատեսվում է բավարարել տնտեսության փողի պահանջարկը՝ 8% տնտեսական աճի եւ գնաճի մինչեւ 3% մակարդակի պայմաններում: Փողի պահանջարկը կանխատեսվել է փողի իրական պատարների նկատմամբ պահանջարկի մոդելի հիման վրա եւ ճշգրտվել՝ փողի պահանջարկի նկատմամբ առաջարկի նախկին կարճաժամկետ շեղումների ազդեցության չեզոքացման նպատակով:

2005 թ. ակնկալվում է դրամային զանգվածի միջինը 17.9% աճ, իսկ տարվա վերջի դրությամբ՝ 15.5%: Ըստ եռամսյակների՝ դրամային զանգվածի 12-ամսյա միջին աճը համապատասխանաբար կկազմի 14%, 16%, 19% եւ 22%: Երկրորդ կիսամյակում աճի համեմատաբար բարձր տեմպը բացատրվում է այն հանգամանքով, որ դրամային զանգվածի աճը խթանող հիմնական գործոնները կդրսեւորվեն 2005 թ. հուլիսից:

Դրամային զանգվածի կառուցվածքում կաճեն եւ՝ դրամային ավանդները, եւ՝ շրջանառության մեջ կանխիկ դրամը, համապատասխանաբար՝ 19.4%-ով եւ 13.6%-ով: Դրամային ավանդների աճը կպայմանավորվի՝

• տնտեսական աճի բարձր մակարդակով,

• տնտեսության վարկավորման ծավալների աճով,

• ՀՀ դրամի նկատմամբ վստահության բարձրացմամբ, ինչի վրա էական ազդեցություն կունենա դեռեւս 2004 թ. երկրորդ կիսամյակից սկսված՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեքավորումը,

• 2005 թ. հուլիսից «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» նոր օրենքի ներդրմամբ, որը կնպաստի դրամի շրջանառության ոլորտի ընդլայնմանը,

• 2005 թ. հուլիսից ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի վերջնական ներդրմամբ, որը կխթանի բնակչության միջին խավի ավանդների աճը,

• համախառն ազգային խնայողությունների շարունակական աճով:

Համախառն ազգային խնայողությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2004 թ. կազմել է 18.6%՝ աճելով ավելի քան 29.6%-ով, իսկ 2005 թ. ակնկալվում է 19.3%՝ մոտ 16.6% աճի պայմաններում: Նշված գործոնները, ինչպես նաեւ պետական բյուջեի ծախսերի բարձր մակարդակը եւ ՀՀ տարածքում բանկոմատներից վճարային քարտերի միջոցով կանխիկացման գործառնությունները միայն ՀՀ դրամով իրականացնելու մասին ԿԲ որոշումը կհանգեցնեն նաեւ շրջանառության մեջ կանխիկ դրամի աճի բարձր տեմպերի ձեւավորմանը:

Արժութային ավանդները 2005 թ. ընթացքում կավելանան 21.7% տոկոսով եւ տարվա վերջին կկազմեն 169.9 մլրդ դրամ: Նշված աճը պայմանավորող հիմնական գործոններ են՝

• արտաքին առեւտրաշրջանառության մեծ ծավալները. ներմուծումն անվանական արտահայտությամբ կավելանա տարեկան 12.4%-ով, իսկ արտահանումը՝ 12.5%-ով,

• օտարերկրյա ներդրումների աննախադեպ բարձր մակարդակը. տարվա ընթացքում ակնկալվում են 249.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք օտարերկրյա ուղղակի ներդրումներ (նախորդ տարվա համեմատ 59%-ով ավելի),

• մեծածավալ մասնավոր տրանսֆերտները, որոնց մի մասը, անշուշտ, կուղղվի բանկային համակարգ:

Այսպիսով, դրամային եւ փողի զանգվածները տարվա վերջի դրությամբ կաճեն համապատասխանաբար 15.5% եւ 18.5%-ով, իսկ միջին աճերը կկազմեն 17.9% եւ 26%՝ գերազանցելով անվանական ՀՆԱ աճը, ինչը կհանգեցնի տնտեսության փողայնացման աճի: Արդյունքում՝ դրամային զանգվածի շրջաշրջանի արագությունը տարվա ընթացքում կնվազի 4.7%-ով, իսկ փողի զանգվածի շրջաշրջանի արագությունը՝ 10.9%-ով՝ նախորդ հինգ տարիների համապատասխանաբար 3.7% եւ 4.3% միջին նվազման փոխարեն:

Բանկային համակարգի կողմից տնտեսության իրացվելիության պահանջարկի ապահովման ուղիները կարտացոլվեն բանկային համակարգի ակտիվների կառուցվածքում: Համակարգի զուտ արտաքին ակտիվները կաճեն 11.7%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 35.4%-ով: Զուտ արտաքին ակտիվների աճի հիմնական մասը բաժին է ընկնում Կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվներին. ըստ կանխատեսումների՝ դրանք կաճեն 15.7%-ով, իսկ առեւտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները՝ միայն 0.9%-ով: Առեւտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների՝ նախորդ տարիների համեմատ փոքր աճը (2004 թ.՝ 34.2%, իսկ 2003 թ.՝ 122%) բացատրվում է 2005 թ. ռեզիդենտներից ներգրավված արտարժութային ավանդների հաշվին արտարժույթով վարկային ներդրումների ծավալների աճի կանխատեսվող բարձր տեմպերով:

Ընդհանուր բանկային համակարգի զուտ ներքին ակտիվների շուրջ 28.9 մլրդ դրամով աճը (35.4%) կպայմանավորվի Կառավարության պարտավորությունների 11.8 մլրդ դրամ (73.8%) աճով, մասնավոր հատվածի վարկավորման 34.8 մլրդ դրամ (26.5%) աճով եւ բանկային համակարգի զուտ այլ ակտիվների 17.6 մլրդ դրամ (-40.9%) նվազմամբ:

Կառավարության զուտ պարտավորությունների աճի 74%-ը բաժին է ընկնում Կենտրոնական բանկի, իսկ մնացածը՝ առեւտրային բանկերի հանդեպ պարտավորություններին: Առեւտրային բանկերի նկատմամբ Կառավարության պարտավորությունների աճը հիմնականում կպայմանավորվի 4 մլրդ դրամի պետական պարտատոմսերի ձեռքբերմամբ (նախատեսվող ընդհանուր թողարկման ծավալը՝ 6 մլրդ դրամ):

2005 թ. ընթացքում ակնկալվում է վարկային ներդրումների շարունակական աճ. մասնավոր հատվածի վարկավորումը կաճի 26.5%-ով: Հիմնականում կավելանան սպառողական եւ առեւտրի ոլորտին ուղղված վարկերի ծավալները, ինչպես նաեւ հիփոթեքային վարկերը: Միեւնույն ժամանակ, կշարունակվի արդյունաբերության, հատկապես՝ թեթեւ եւ սննդի արդյունաբերության վարկավորումը: Վարկավորման նման աճը բացատրվում է, մասնավորապես, ավանդների սպասվող 21.1% աճով (շուրջ 39.4 մլրդ դրամ) եւ Վերականգնման վարկերի բանկի (KfW) վարկավորման նոր ծրագրերով (շուրջ 7.3 մլրդ դրամ):

Բանկային համակարգի զուտ այլ ակտիվները կնվազեն գերազանցապես առեւտրային բանկերի զուտ այլ ակտիվների հաշվին, քանի որ ԿԲ զուտ այլ ակտիվները տարվա ընթացքում կնվազեն ընդամենը 788 մլն դրամով կամ 8.6%-ով: Առեւտրային բանկերի զուտ այլ ակտիվների նախատեսվող՝ 16.9 մլրդ դրամով նվազումը կուղեկցվի տարվա ընթացքում ակնկալվող ընդհանուր առմամբ 12.3 մլրդ դրամ շահույթի ստացմամբ, 2.7 մլրդ դրամին համարժեք շահաբաժինների տրամադրմամբ, ինչպես նաեւ 2005 թ. առաջին կիսամյակում 7.3 մլրդ դրամ կապիտալի համալրմամբ:

Վարկավորման նշված աճի, ինչպես նաեւ փողի զանգվածում կանխիկ դրամի տեսակարար կշռի նվազման արդյունքում դրամային եւ փողի բազմարկիչները համապատասխանաբար կաճեն 3.8 եւ 10.9 տոկոսով՝ 2005 թ. վերջին կազմելով 2.42 եւ 1.18:

Հաշվի առնելով տնտեսության իրական հատվածի զարգացումները եւ անհրաժեշտ իրացվելիության մակարդակն ու կառուցվածքը՝ 2005 թ. ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է դրամական բազան ավելացնել 8.9%-ով՝ տարվա ընթացքում միջին 13.6% աճի պայմաններում: Բազայի կառուցվածքում կանխիկ դրամը կավելանա 10.8%-ով, իսկ թղթակցային հաշիվները՝ միայն 1.3%-ով: Չնայած ավանդների աճի բարձր տեմպին, որի արդյունքում պարտադիր պահուստավորվող միջոցները կաճեն 2.4 մլրդ դրամով, թղթակցային հաշիվների մակարդակը տարվա վերջի դրությամբ գրեթե չի փոխվի, քանի որ պարտադիր պահուստավորում կիրառվողների ավելցուկ իրացվելիության հաշվին. 2004 թ. վերջին գրանցվել է բանկերի թղթակցային հաշիվներում ավելցուկ իրացվելիության գրեթե 10 մլրդ դրամ մակարդակ: Այսպիսով՝ 2005 թ. վերջին դրամական բազան կկազմի 143.8 մլրդ դրամ, այդ թվում՝ կանխիկ դրամը՝ 117 մլրդ դրամ, իսկ թղթակցային հաշիվները՝ 26.9 մլրդ դրամ:

Ինչպես նշվեց, Կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվները կաճեն 15.7%-ով, կամ 23.4 մլրդ դրամով, որը պայմանավորված կլինի բացառապես ՀՀ կառավարության գործառնությունների սպասարկման շարժերով:

Զուտ ներքին ակտիվների կառուցվածքում զգալի կավելանան Կառավարության զուտ պարտավորությունները: Միասնական գանձապետական հաշվի մնացորդից պետական բյուջեի ծախսերի իրականացման պատճառով 2005 թ. ՀՀ Կենտրոնական բանկի նկատմամբ Կառավարության պարտավորությունները կավելանան 23.5%-ով, կամ 8.7 մլրդ դրամով:

Զուտ ներքին ակտիվների կառուցվածքում 8.6%-ով կնվազեն զուտ այլ ակտիվները: Այստեղ միմյանց չեզոքացնում են մի քանի հիմնական շարժեր՝ ԿԲ եկամուտների եւ ծախսերի, այդ թվում՝ կապիտալ ծախսերի տարբերությունը, ինչպես նաեւ երկրորդ եռամսյակում նախատեսվող՝ ավանդների ապահովագրման հիմնադրամին Վերականգնողական վարկերի բանկի (KfW) կողմից 3.5 մլն եվրոյին համարժեք վարկի հատկացումը:

Կենտրոնական բանկի նկատմամբ բանկերի պարտավորությունների ցուցանիշը կնվազի մոտ 2 անգամ կամ 19.5 մլրդ դրամով: Կենտրոնական բանկի նման քաղաքականությունը բացատրվում է տարվա ընթացքում Կառավարության ընդլայնողական քաղաքականության հետեւանքով առաջացած ավելցուկ իրացվելիության ներքաշման անհրաժեշտությամբ, որի ընդհանուր ծավալը կկազմի շուրջ 26.7 մլրդ դրամ: Ծրագրի իրականացման ընթացքում Կենտրոնական բանկը կկիրառի իր բոլոր ներքաշող դրամային գործիքները: Ելնելով այն հանգամանքից, որ ԿԲ արժեթղթերի պորտֆելի 5.8 մլրդ դրամ ծավալով պետական արժեթղթերը բավարար չեն հակադարձ ռեպո գործառնությունների միջոցով ավելցուկի ներքաշման համար, Կենտրոնական բանկը կշարունակի ՀՀ կառավարության հետ համատեղ պետական պարտատոմսերի լրացուցիչ ծավալների տեղաբաշխման եւ սեղմված մուտքերի՝ Կենտրոնական բանկում ավանդադրման փորձը: Միաժամանակ, հաշվի առնելով իրացվելիության ներքաշման մեծ ծավալները՝ Կենտրոնական բանկը հնարավոր է համարում նաեւ վերը նշված գործառնությունները լրացնել սեփական արժեթղթերի թողարկմամբ իրացվելիության ներքաշման գործառնություններով:

Դրամավարկային քաղաքականության իրականացման տեսանկյունից 2005 թ. համար առանձնահատուկ կլինի նաեւ դեռեւս 2004 թ. գրանցված մեծածավալ արտարժութային ներհոսքի աճի տեմպերի պահպանման գործընթացը: Հաշվի առնելով ՀՀ տնտեսության եւ արժութային շուկայի կողմից նման մեծածավալ հոսքերի կլանման սահմանափակությունները՝ ՀՀ ԿԲ-ն նախատեսում է կիրառել դրամավարկային քաղաքականության անուղղակի եւ ուղղակի գործիքակազմը՝ հետեւյալ ուղղություններով:

• Կատարելագործել պարտադիր պահուստավորման համակարգը. ընդարկվում է ներգրավված ավանդների դիմաց պահուստավորումը համապատասխան արժույթով սահմանելու հարցը: Ընդ որում, հնարավոր է նաեւ պահուստավորման դրույքաչափերի փոփոխություն:

• Իրականացնել արտարժութային միջոցների սterիլացման գործառնություններ՝ արտարժույթի գնման եւ ներարկված իրացվելիությունը դրամային գործիքներով ներքաշելու միջոցով:

Միաժամանակ, ՀՀ ԿԲ կողմից դոլարայնացման նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից դրամի նկատմամբ պահանջարկի աճի դրսեւորման դեպքում, ԿԲ-ն կմեծացնի արտարժույթի գնման գործառնությունները՝ բավարարելով դրամի նկատմամբ պահանջարկի աճը:

Նախատեսվում է նաեւ արտարժութային գործառնությունների իրականացման համար ստեղծել մասնագիտացված առեւտրային հարթակ, որը կնպաստի արժութային շուկայի կողմից մեծածավալ արտարժութային հոսքերի կլանողունակության ընդլայնմանը՝ միաժամանակ նվազեցնելով փոխարժեքի ձեւավորման գործընթացում սպեկուլյատիվ ճնշումները:

Հաշվի առնելով տարվա ընթացքում իրացվելիության ներքաշման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ 2004 թ. դրամային իրացվելիության ներարկման նպատակով Կենտրոնական բանկը զգալիորեն իջեցրել է բոլոր գործիքների տոկոսադրույքները, 2005 թ. ՀՀ կենտրոնական բանկը հնարավոր է համարում դրանց որոշ չափով բարձրացում:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Իրական հատված

Ծրագրի իրագործման հնարավոր խնդիրները, որոնք կարող են ի հայտ գալ իրական հատվածում, առավելապես պայմանավորված են համախառն պահանջարկի՝ ծրագրվածից բարձր աճի դրսեւորման հավանականությամբ:

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

ՀՀ կենտրոնական բանկ

Վերջինս կարող է տեղի ունենալ հիմնականում ինֆլյացիոն ֆինանսական ներհոսքի՝ նախատեսվածից բարձր աճի պայմաններում: Այս պարագայում համախառն պահանջարկի՝ սպասվածից բարձր աճը կարող է հանգեցնել ապրանքների աճի բարձր տեմպերի: Դա էլ իր հերթին, գնաճի վրա էական ճնշումներ կգործադրի:

Պետական հատված

2005 թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի՝ արտաքին աղբյուրներից ստացվող զգալի միջոցների պայմաններում էապես կածի հարկաբյուջետային հատվածի ազդեցության ռիսկայնությունը: Դա կապված կլինի այդ միջոցների ստացման ժամկետների եւ դրանց ծախսման անորոշությունների հետ, որը մեծապես առկա է եղել նաեւ նախորդ տարիներին:

Բացի այդ, 2005 թ. տարեսկզբից արդեն իսկ տեղումներ կան ՀՀ պետական բյուջեի եռամսյակային համամասնություններով սահմանված (նախնական) եւ բյուջեի ամսական ծրագրերում ՀՀ գանձապետարանի միասնական հաշվի ծրագրային մակարդակների միջեւ: Ընդ որում, նշված տեղումը եղել է 2004 թ. բոլոր եռամսյակների ընթացքում եւ, ըստ ամենայնի, կդրսեւորվի նաեւ այս տարվա ընթացքում:

Արտաքին հատված

2003 թ. վերջերից սկսված եւ 2004թ. ողջ ընթացքում շարունակված՝ միջազգային շուկաներում ԱՄՆ դոլարի «թուլացմանը» արձագանքեց նաեւ Հայաստանի արժութային շուկան՝ լրացուցիչ ճնշում առաջացնելով ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի վրա՝ դրամի արժեքավորման ուղղությամբ: 2005 թ. արտաքին հատվածից բխող ռիսկերի շարքը կարելի է դասել միջազգային շուկաներում ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումները, որը, կանխադասելով նաեւ ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ փոխարժեքի վարքագծի վրա:

Հաջորդ կարեւորագույն ռիսկը կապված է ֆինանսական ներհոսքի՝ սպասվածից բարձր տեմպերի հնարավոր դրսեւորման հետ: Վերջինս արդյունք կլինի արտահանման եւ հատկապես մասնավոր տրանսֆերտների՝ սպասվածից բարձր աճի: Թեեւ 2005 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրում ամրագրվել է նախորդ տարվա նկատմամբ մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերի դանդաղում, սակայն չի բացառվում, որ դրանք եւս աճեն նույն տեմպերով: Դա կհանգեցնի ինչպես պահանջարկի՝ նախատեսվածից բարձր աճի, այնպես էլ լրացուցիչ ճնշումներ կառաջացնի արտարժույթի շուկայում: Արդյունքում՝ հնարավոր է արձանագրվեն ՀՀ դրամի արժեքավորման ավելի բարձր տեմպեր, քան ամրագրված է ծրագրում:

Արտաքին հատվածից բխող հաջորդ ռիսկը կապված է վառելիքի միջազգային շուկաների անորոշությունների եւ նավթ արդյունահանող որոշ խոշոր երկրների քաղաքական անկայուն իրավիճակի հետ: Թեեւ 2005 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրում ամրագրվել է վառելիքի միջազգային գների միջին հաշվով փոքր-ինչ աճ, սակայն, վերը նշված գործոններով պայմանավորված, չեն բացառվում նաեւ վառելիքի գների սպասված մակարդակից էական շեղումներ: Վերջինս իր ուղղակի եւ անուղղակի ազդեցությունը կթողնի սպառողական գների վրա:

Ֆինանսական հատված

Վերջին տարիներին ֆինանսական հատվածում տեղի ունեցող առողջացման գործընթացի եւ սպառողական ու հիփոթեքային վարկավորման համակարգերի ներդրման արդյունքում 2004 թվականն այլի ընկավ համակարգի կողմից նստեսության վարկավորման աճի անհամեմատ բարձր տեմպերով: Ըստ ԿԲ գնահատումների, այդ միտումները կպահպանվեն նաեւ 2005 թ.: Այդուհանդերձ, 2005 թ. ընթացում սպասվող մեծածավալ ֆինանսական ներհոսքով եւ ուղղակի ներդրումներով պայմանավորված՝ հնարավոր է ֆինանսական միջնորդության աճի՝ ծրագրվածից առավել բարձր տեմպերի դրսեւորում, ընդ որում՝ եւ՝ ավանդների ներգրավման, եւ՝ վարկերի տրամադրման գծով: Այս պարագայում ԿԲ կողմից փողի բազայի՝ պարագայում ցուցանիշի շրջանակներում ծրագրային կառավարումը կոտրելքվի փողի եւ դրամային զանգվածների աճի՝ ծրագրվածից ավելի բարձր տեմպերով, որի ճշգրտումը կսահմանափակվի փողի բազան կառավարելով տատանման թույլատրելի միջակայքի ներքին սահմանին մոտ:

Մակրոնստեսական հիմնական ցուցանիշների էական շեղումների արձանագրման դեպքում, երբ հանդես կգան առավելապես գնաճի ծրագրային մակարդակի գերազանցման ռիսկեր, կդրվի ծրագրի վերանայման խնդիր: Ընդ որում, ՀՀ դրամի փոխարժեքի արժեքավորման, արժութային կարգավորման օրենքի կիրառման, բանկոմատներից կանխիկացումը միայն դրամով իրականացնելու եւ ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի վերջնական ներդրման, ինչպես նաեւ ՀՀ ԿԲ կողմից դոլարայնացման կրճատմանն ուղղված այլ միջոցառումների կիրառման արդյունքում դրամի նկատմամբ պահանջարկի՝ նախատեսվածից ավելի աճի դրսեւորման դեպքում եւս Կենտրոնական բանկը կվերանայի ծրագիրը՝ դրամի առաջարկի առավել ընդլայնման ուղղությամբ: Այս պարագայում դրամի նկատմամբ պահանջարկի աճի բավարարմանն ուղղված քաղաքականության արդյունքում հնարավոր է գնաճի ծրագրային ցուցանիշի փոքր-ինչ գերազանցում:

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բանկերի եւ վարկային կազմակերպությունների զարգացումները 2004 թ.

2004 թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգում շարունակվել են նախկինում ձեւավորված զարգացման միտումները. դրսեւորվել է կայուն աճ, ընդ որում՝ քանակական ցուցանիշներին զուգընթաց արձանագրվել է նաեւ որակական հատկանիշների բարելավում:

Տարվա ընթացքում համակարգը նոր բանկերով չի համալրվել: 2004թ. վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 առեւտրային բանկեր՝ 230 մասնաճյուղերով, ընդ որում՝ տարեսկզբին հատուկ վերահսկողական դաշտում գործող «Հայկամ» բանկ ՓԲԸ-ն, տարեվերջին տեղափոխվել է ընդհանուր վերահսկողության դաշտ: Վարկային կազմակերպություններում եւս գրանցվել է բանկային համակարգին համահունչ աճ: Տարվա ընթացքում գործունեության լիցենզիա են ստացել երեք վարկային կազմակերպություն, եւ տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 9 վարկային կազմակերպություններ (2 մասնաճյուղերով):

2004 թ. բանկային համակարգի պարտավորությունների աճի տեմպերը զգալի գերազանցել են նախորդ տարվա աճի տեմպերը. համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 28.4%-ով կամ 65.8 մլրդ դրամով, նախորդ տարվա 13% դիմաց: Պարտավորությունները ավելացել են հիմնականում համախառն ավանդների աճի արդյունքում, ընդ որում՝ գրեթե ամբողջությամբ ներքին աղբյուրների հաշվին: 2004 թ. վարկային կազմակերպությունների պարտավորություններն ավելացել են 16.1%-ով եւ կազմել 1.5 մլրդ դրամ կամ բանկային համակարգի պարտավորությունների 0.5%-ը: Տարվա առանձնահատուկ դրսեւորումներից էր նաեւ այն, որ եւ՝ ցպահանջ, եւ՝ ժամկետային պարտավորությունների աճը գերազանցապես ապահովվել է իրավաբանական անձանց ավանդների հաշվին, այնինչ նախորդ տարի ճիշտ հակառակն էր:

2004 թ. առանձնահատուկ դրսեւորումներից էր համակարգի աննախադեպ շահույթը: Բանկային համակարգի հաշվեկշռային ընդհանուր կապիտալն ավելացել է 30%-ով կամ 14.9 մլրդ դրամով եւ կազմել 65 մլրդ դրամ, ինչն էլ մեծամասամբ ընթացիկ տարվա շահույթի արդյունք է: Համակարգն ապահովել է 17.5 մլրդ դրամի շահույթ, որից 6.9 մլրդ դրամը ապահովել է «Հայկամ» բանկը: Նախորդ տարվա համեմատությամբ շահույթի աճի տեմպը գերազանցել է ինչպես ակտիվների, այնպես էլ կապիտալի աճի տեմպերը:

Բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամը տարվա ընթացքում համալրվել է 3.4 մլրդ դրամով՝ հիմնականում ի հաշիվ արտաքին աղբյուրների, ինչը հանգեցրել է կանոնադրական հիմնադրամում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշռի աճի՝ 46.7%-ից մինչեւ 52.6%:2004թ. վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալն ավելացել է 27%-ով եւ կազմել 2.8 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 4.3%-ը:

2004 թ. արձանագրվել է նաեւ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների աճ. ակտիվներն աճել են 29%-ով կամ 80.7 մլրդ դրամով, որի 46%-ը բանկային համակարգը նախընտրել է ներդնել տնտեսությանը տրամադրվող վարկերում: 2004թ. առանձնահատուկ դրսեւորումներից է այն, որ տնտեսությանը տրամադրված վարկերի 38% աճը էապես գերազանցել է ընդհանուր ակտիվների 29% աճը: Եթե 2003թ. վարկային ներդրումների աճը բացառապես պայմանավորված էր ֆիզիկական անձանց վարկավորման ծավալների աճով, ապա 2004 թ. վարկերի աճը գրեթե հավասարապես բաշխվել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց միջեւ:

Բանկային համակարգի զարգացումների կանխատեսումը 2005 թ.

2005 թ. կանխատեսվում է բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճ՝ մոտ 17 մլրդ դրամով՝ 2005թ. չբաշխված շահույթի մեծությունը կանխատեսվել է 12.4 մլրդ դրամ, որը մոտ 1.8 մլրդ դրամով ավելի է 2004թ. համանման ցուցանիշից: Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով 2005 թ. հուլիսի 1-ից 5.0 մլն դոլարին համարժեք դրամի չափով բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի նորմատիվային պահանջը՝ գնահատվում է, որ 2005 թ. ընթացքում նորմատիվի նոր պահանջին չհամապատասխանող՝ գործող բանկերի միջոցներով բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամը կհամալրվի 4.3 մլրդ դրամով եւ 3 մլրդ դրամով՝ ի հաշիվ նոր բանկի մուտքի:

2005 թ. կանխատեսվում է բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների՝ 51 մլրդ դրամով աճ, որի արդյունքում տարեվերջին ընդհանուր պարտավորությունները կկազմեն մոտ 348 մլրդ դրամ: Աճը հիմնականում կպայմանավորվի ավանդների մոտ 41 մլրդ դրամ կանխատեսվող աճով: 2005թ. հուլիսից ուժի մեջ է մտնելու ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգը, որը կարող է զգալի ազդեցություն թողնել բանկային համակարգում բնակչության միջին խավի խնայողությունների աճի վրա: 2005 թ. կանխատեսվում է բանկային համակարգի ընդհանուր ակտիվների ավելացում 68 մլրդ դրամով, որի արդյունքում տարեվերջի ցուցանիշը կկազմի մոտ 430 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ակտիվների աճի կանխատեսումը պարտավորությունների եւ կապիտալի կանխատեսվող աճի արդյունք է, ընդ որում, ըստ կանխատեսումների՝ ավելացված միջոցների միայն մոտ 52%-ը (35 մլրդ դրամ) կհանգեցնի վարկային ներդրումների աճի:

2005 թ. ՀՀ ԿԲ կողմից իրականացվելիք միջոցառումները

2005 թ. ՀՀ բանկային համակարգում առողջ մրցակցային միջավայրի ամրապնդման, իրացվելիության ու կայունության ապահովման եւ ֆինանսական միջնորդության դերի բարձրացման նպատակով Կենտրոնական բանկը նախատեսում է մի շարք միջոցառումներ:

Բանկային համակարգում խիստ կարեւորվում է կառավարման համակարգի դերը: 2004թ. ԿԲ կողմից մշակվել է «Բանկերում կորպորատիվ կառավարման հայեցակարգը», որի գլխավոր նպատակն է հասակեցնել բանկի կառավարման տարբեր մարմինների իրավասությունները, սահմանել յուրաքանչյուրի պատասխանատվության ոլորտները: 2005թ. նախատեսվում է Հայաստանի բանկերի միության հետ ընդարկումների արդյունքում ձեւավորված օրենքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

ՀՀ տնտեսության կայունության համար անհրաժեշտ իրավական մեխանիզմների ապահովման, հասարակության եւ պետության շահերի պաշտպանության նպատակով Կենտրոնական բանկը 2005թ. կշարունակի փողերի լվացման դեմ պայքարի համալիր միջոցառումների իրականացումը:

Կենտրոնական բանկը 2005թ. կշարունակի Բազելյան սկզբունքների պահանջներին ՀՀ բանկային վերահսկողության համապատասխանեցման գործընթացը: Կենտրոնական բանկը արդեն իսկ որոշում է կայացրել Հայաստանում Բազելյան II համաձայնագրին անցման եւ ներդրման վերաբերյալ: Որպես անցման նախապայման, դիտարկվում է կորպորատիվ կառավարման սկզբունքների ընդունումը:

2005թ. ընթացքում ԿԲ-ն նախատեսում է ուսումնասիրել ԿԲ-ի եւ վերահսկողության այլ մարմինների միջեւ համագործակցության եղանակները՝ «բանկային խմբերում» հնարավոր ռիսկերի բացահայտման եւ արագ արձագանքման համար արդյունավետ վերահսկողության համախմբված համակարգ ձեւավորելու նպատակով: Մյուս կողմից, Կենտրոնական բանկը 2005 թ. նախատեսում է հնարավորինս փոփոխություններ չկատարել բանկերի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային դաշտում:

2005 թ. Կենտրոնական բանկը կշարունակի արտարժույթի փոխանակման կետերի վերստուգումները՝ հիմնականում նպատակ ունենալով բարձրացնել դրանց կողմից բնակչությանը տրամադրվող ծառայությունների որակը, ինչպես նաեւ ֆինանսական այդ հատվածի՝ անհրաժեշտ թափանցիկության մակարդակը:

Առեւտրային բանկերի լիցենզավորման գործընթացը ավելի արդյունավետ ու թափանցիկ դարձնելու եւ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության սկզբունքների ավելի խորը ներդրումը ապահովելու համար 2005թ. ԿԲ-ն կմշակի նաեւ «Լիցենզավորման ուղեցույց» վերահսկողական ներքին կանոնակարգը:

Հանրապետությունում հիփոթեքային շուկայի զարգացումը նույնպես ՀՀ Կենտրոնական բանկի միջնաժամկետ կարեւոր խնդիրներից է: 2005 թ. Կենտրոնական բանկը, ՀՀ կառավարության եւ Գերմանական Զարգացման բանկի (KfW) հետ համատեղ, տվյալ շուկայի արդյունավետ զարգացումը ապահովելու նպատակով, աշխատանքներ է իրականացնելու երկու հիմնական ուղղություններով՝

1) օրենսդրական եւ ենթաօրենսդրական ենթակառուցվածքների մշակում եւ ներդրում,

2) երկրորդային շուկայի ստեղծում:

2005 թ. ԿԲ-ն նախատեսում է ուսումնասիրել եւ բացահայտել բանկային շուկայում նոր գործիքների ներդրմանը խոչընդոտող գործոնները: Բանկերին հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ ԿԲ-ն կկազմակերպի բաց քննարկումներ առեւտրային բանկերի հետ, ինչը նաեւ կնպաստի ԿԲ-ի եւ առեւտրային բանկերի համագործակցության մակարդակի բարձրացմանը:

Հայտնի է, որ տնտեսության ֆինանսական համակարգի գործունեության կայունությունը էապես պայմանավորված է տնտեսության կայուն զարգացումներով: Աշխարհի շատ կենտրոնական բանկեր վերջին տարիներին սկսել են ֆինանսական կայունությունը գնահատել ոչ միայն ֆինանսական ռիսկերի, այլեւ ֆինանսական կայունությանը սպառնացող բոլոր տեսակի ռիսկերի համալիր գնահատման միջոցով: Այս նպատակով 2004 թ. մեկնարկ տրվեց եւ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հավանության է արժանացել «ՀՀ ԿԲ-ում ֆինանսական համակարգի կայունության ապահովման կառուցվածքի հայեցակարգը»: Հայեցակարգի հիմնական նպատակը ֆինանսական կայունության ամբողջական բնութագրումն է, ՀՀ-ում ֆինանսական կայունությանը մակրո- եւ միկրոմիջավայրերում սպառնացող հնարավոր ռիսկերի բացահայտումը, գնահատումը եւ առաջիկայում այդ ռիսկերի նվազեցման համար իրականացվելիք գործընթացների ուղղությունների բացահայտումը: Ֆինանսական կայունության հայեցակարգի դրույթները ամբողջությամբ կիրակացվեն 2007-2008թթ., ընդ որում՝ այս համատեքստում 2005թ. ԿԲ-ն քայլեր կձեռնարկի հիմնականում երկու ուղղություններով՝

ա) կանխատեսումների համապատասխան մեթոդների մշակում, որոնք թույլ կտան կանխատեսել ֆինանսական համակարգի վարքագիծը,

բ) ռիսկերի գնահատման մեթոդների մշակում:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության վճարահաշվարկային բնագավառը 2004 թ. աչքի է ընկել ինչպես բանկերի կողմից հաճախորդների սպասարկման ակտիվ քաղաքականությամբ, այնպես էլ միջբանկային վճարումների զարգացման մակարդակով: 2004 թ. պահպանվել են անկանխիկ վճարումների՝ նախորդ տարիներին դրսեւորված աճի տեմպերը: Տարվա ընթացքում իրականացված վճարումների ծավալը կազմել է 3516.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 1.6 մլն: Շուրջ 1.78 անգամ ավելացել է թողարկված պլաստիկ քարտերի քանակը, քարտերի սպասարկման ծավալը ավելացել է 1.65 անգամ, բոլոր տեմպերով զարգացել է վճարային քարտերի սպասարկման ենթակառուցվածքը (ավտոմատ գանձման մեքենաների քանակը տարվա վերջի դրությամբ կազմել է 71, իսկ սպասարկման տերմինալների եւ իմպրինտերների քանակը՝ 685): Բացի այդ, ՀՀ բանկերի կողմից առաջարկվել են մի շարք նոր ծառայություններ՝ կապված քարտերի կիրառման հետ՝ սպառողական վարկավորում, կոմունալ եւ այլ տեսակի ծառայությունների դիմաց վճարումներ, այդ թվում՝ ինտերնետի միջոցով եւ այլն:

2004 թ. ընթացքում մշակվել է «Վճարային համակարգի հսկողություն» աշխատանքային փաստաթուղթը եւ 2005 թ. ԿԲ-ն կշարունակի ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգի հսկողության սկզբունքների մշակման եւ գործընթացների կարգավորման աշխատանքները: 2004 թ. ներդրվել է Պետական արժեթղթերի հաշվառման եւ հաշվարկների իրականացման ավտոմատացված համակարգը, որն ապահովում է հետեւյալ գործառույթները.

2005 թ. վճարահաշվարկային բնագավառում ՀՀ Կենտրոնական բանկի քաղաքականությունը կնպաստակառուցվի հետեւյալ խնդիրների իրականացմանը.

1. «Վճարահաշվարկային համակարգերի եւ վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ կապված՝ ենթաօրենսդրական եւ իրավական դաշտի կանոնակարգում եւ կարգավորում,

2. Վճարահաշվարկային համակարգի հսկողություն,

3. ՀՀ-ում վճարային քարտերով անկանխիկ վճարումների կանոնակարգում:

2005 թ. ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկը շարունակելու է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային բնագավառի կանոնակարգման աշխատանքները:

Առանձնակի ուշադրություն է դարձվելու նաեւ անկանխիկ եղանակով վճարումների իրականացման խոչընդոտների բացահայտմանը եւ, հնարավորության սահմաններում, դրանց վերացմանը կամ նվազեցմանը:

Տնտեսության հատվածները բնութագրող ամփոփ ցուցանիշներ

	2002	2003	2004	2005
Ազգային եկամուտ եւ գներ (տոկոսային փոփոխություններ)				
Իրական ՀՆԱ ինդեքս	113.2	113.9	110.1	108.0
ՀՆԱ դեֆլյատոր	100.7	104.6	106.0	104.0
Սպառողական գների ինդեքս (ժամկետի վերջ)	102.0	108.6	102.0	103.0
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ), %	1.1	4.7	7.0	2.2
Արտաքին հատված				
Արտահանման եւ ծառայությունների արտահանում (տես. կշիռը ՀՆԱ-ում)	29.4	32.2	27.4	24.8
Արտաքին եւ ծառայությունների ներմուծում (տես. կշիռը ՀՆԱ-ում)	46.6	50.1	42.6	41.4
Ընթացիկ հաշիվ (առանց ՊՏ, տես. կշիռը ՀՆԱ-ում)	-8.5	-8.9	-5.6	-4.7
Ընթացիկ հաշիվ (ներառյալ ՊՏ, տես. կշիռը ՀՆԱ-ում)	-6.2	-6.8	-4.0	-3.4
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	4.7	4.3	4.3	4.0
Փոխարժեք (ժամանակաշրջանի միջին)	573.4	578.8	533.4	485.0
Փոխարժեքի տոկոսային փոփոխություն	3.3	0.9	-7.8	-9.1

Պետական հատված				
Համախմբվ. բյուջեի եկամուտ (տես. կշիռը ՀՆԱ-ում)	19.7	18.5	19.1	19.7
Համախմբվ. բյուջեի հարկային եկամուտներ (տես. կշիռը ՀՆԱ-ում)	17.5	17.0	17.2	17.9
Համախմբվ. բյուջեի ծախս (տես. կշիռը ՀՆԱ-ում)	22.3	20.2	20.9	22.1
Համախմբվ. բյուջեի պակասուրդ (տես. կշիռը ՀՆԱ-ում)	-2.3	-1.4	-1.7	-2.3
Կապիտալ ներդրումներ եւ զուտ վարկավորում (տես. կշիռը ՀՆԱ-ում)	4.1	4.2	4.3	5.0
Դրամավարկային հատված				
Փողի զանգվածի աճ, % (M2X միջին)	6.8	22.9	18.7	26.0
Փողի զանգվածի շրջաշրջանի արագություն (ՀՆԱ/M2X միջին)	8.3	8.1	7.9	7.1
Փողի բազմարկիչ (M2X)	2.0	2.0	2.2	2.4
Դրամային զանգվածի աճ, % (M2 միջին)	21.4	33.3	6.1	17.9
Դրամային զանգվածի շրջաշրջանի արագություն (ՀՆԱ/M2 միջին)	15.5	13.8	15.2	14.5
Դրամային բազմարկիչ (M2)	1.08	1.15	1.14	1.18
Փողի բազա, % (միջին)	17.8	25.1	7.0	13.6

ԱԶԳ

Միջազգային

Ավարտվեց ԱՄՆ պետքարտուղարի այցը Թուրքիա

Արդյունքները դեռևս ամփոփվում են

Ինչպես փետրվարի 3-ի համարում տեղեկացրել էր «Ազգը», փետրվարի 5-ին եվրոպական եւ տարածաշրջանային երկրներում կատարվող շրջայցի շրջանակներում Թուրքիայում եղավ ԱՄՆ նորանշանակ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը: Նա հենց օդանավակայանում հանդիպեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին, որը պատրաստվում էր ուղեւորվել Ինդոնեզիա, ապա եւ ընդունեց իր հետ հանդիպելու համար Անկարա ժամանած Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովին:

Էրդողանի հետ հանդիպումից հետո թեեւ պետքարտուղար Ռայսն ընդունեց լրագրողներին, սակայն հանդիպման մասին որեւէ բացատրություն նրանց չտվեց, հարցերին պատասխանեց միայն Թուրքիայի վարչապետը: Ինչ վերաբերում է արտգործնախարար Լավրովի հետ նրա հանդիպմանը, ենթադրվել են նախագահներ Ջորջ Բուշի եւ Վլադիմիր Պուտինի փետրվարի 24-ին Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում նախատեսվող գագաթաժողովին առնչվող հարցեր, այնուհետեւ կողմերը կենտրոնացել են Իրանի միջուկային ծրագրի վրա:

Թուրքական աղբյուրները նշում են, որ Ռայս-Լավրով հանդիպումը միջուկային ծրագրի հարցում կողմերը եկել են դիվանագիտական միջոցների կիրառման շուրջ համաձայնության: Փետրվարի 6-ին ԱՄՆ պետքարտուղարին ընդունել է Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը, ապա նա հանդիպել է արտգործնախարար Աբդուլլահ Գյուլին: Հանդիպման ավարտին հրավիրվել է մամուլի համատեղ ասուլիս:

Ասուլիսում Կոնդոլիզա Ռայսն Անկարա կատարած իր այցի առնչությամբ ասել է, որ դա «գոհացուցիչ էր», պատրաստվում է մոտ ապագայում վերադառնալ Թուրքիայում, Գյուլի հետ որպես առաջնահերթ խնդիր անդրադարձել են Իրաքի խաղաղական զարգացումներին, եւ ավելացրել. «Մենք ցանկանում ենք այնպիսի Իրաք, որը տարածքային ամբողջականության շրջանակներում բոլոր հարեւանների հետ բարիդրացիական հարաբերություններ կհաստատի եւ անկախ կրոնական ու էթնիկ պատկանելիությունից, կիարգի երկրի բոլոր փոքրամասնությունների իրավունքները: «Ալ Ղաիդայի» եւ ՊԿԿ-ի պես ահաբեկչական կազմակերպությունները ժամանակակից աշխարհում տեղ չունեն»:

Աբդուլլահ Գյուլն իր հերթին անդրադարձել է պաղեստինա-իսրայելական հակամարտությանը, դրա կարգավորմանը նպաստելու պատրաստակամություն է հայտնել, խոստացել է աշխարհի խաղաղության եւ կայունության, ինչպես նաեւ ահաբեկչության դեմ պայքարի հարցերում շփումների մեջ լինել ԱՄՆ պետքարտուղարի հետ՝ մշտապես փոխանակելու համար եւ ընդգծել է. «Մեր այսօրվա հանդիպմանը որպես երկու դաշնակիցներ, անկեղծ մթնոլորտում ամենայն մանրամասնությամբ քննարկեցինք միջազգային հարաբերություններին, տարածաշրջանին, Իրաքի խաղաղական զարգացումներին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ երկաստեղ հետաքրքրություն ներկայացնող բոլոր խնդիրները»:

Որոնք են երկաստեղ հետաքրքրություն ներկայացնող այդ հարցերը: ԱՄՆ պետքարտուղարի եւ Թուրքիայի արտգործնախարարի մամուլի համատեղ ասուլիսը, որից հաստատվեցին հեռարձակել Թուրքիայի հանրային հեռուստատեսությունը, որեւէ պատկերացում չի տվել հարցերի մասին: Թվում էր, թե թուրքական թերթերը մանրամասնելով ասուլիսը, միաժամանակ կմեկնաբանեն Կոնդոլիզա Ռայսի այցը:

Այդ թերթերից թերեւս միայն «Զումհուրիեթն» էր, որ «Կոնդոլիզա Ռայսն Անկարայից ստացավ այն, ինչ պահանջում էր» խորագրով մեկնաբանում է պետքարտուղարի այցը, իսկ մյուսներն այցը լուսաբանելիս ընդամենը մի քանի կցկտուր տեղեկություններ են հաղորդում: Այնուամենայնիվ, դրանք հիմք են տալիս ենթադրելու, որ Կոնդոլիզա Ռայսը Թուրքիայի ղեկավարների հետ բացի մամուլի ասուլիսում հիշատակված հարցերից, քննարկել է ԵՄ-Թուրքիա հարաբերություններին, Քիրքուքի նկատմամբ քրդական հավակնություններին, դրանց առնչությամբ հետզհետե սրվող թուրք-ամերիկյան տարաձայնություններին, Իրաքում թուրքմենների կարգավիճակին, «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագրին, Կիպրոսին, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող խնդիրներ՝ ընդգծելով, որ այդ հարաբերությունները պատշաճական Վաշինգտոնի հետաքրքրությունների շրջանակում են:

Կարծում ենք, թուրքական մամուլը դեռեւս կանդրադառնա ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի Թուրքիա կատարած այցի արդյունքներին, եւ մենք առիթ կունենանք որոշակի մեկնաբանություններ տալու: Համենայն դեպս, պետքարտուղարը Թուրքիայից ուղեւորվեց Իսրայել եւ հանդիպեց վարչապետ Արիել Շարոնի հետ, ապա անցավ Արեւմտյան ափ՝ հանդիպելու Պաղեստինի ինքնավարության նորընտիր ղեկավար Մահմոդ Աբբասին:

ՀԱՍՈՆ ՅԱԲԼՈՆՅԱՆ

Ժվանիայի մահը Սահակաշվիլու իշխանության ավարտի սկի՞զբ

1-ին էջից

Չնայած պաշտոնական տեսակետին, թե Զուրաբ Ժվանիան եւ Քվեմո Քարթլիի փոխնախագահ Ռաուլ Յուստովը մահացել էին շմոլ գազից, այս տարբերակի թերահավատներն ու ընդդիմադիրները գնալով շատանում են:

Վրաստանի վարչապետի մահվան պատահական կամ դիտավորյալ լինելու հարցերի կապակցությամբ Վրաստանի ընդդիմադիրներից Իրինա Սարիշվիլի-Չանտուրիայի կարծիքով, հարցականները շատ են: Մասնավորապես, վերջինս նշում է մի քանի հանգամանք: Ինչո՞ւ վրացական իշխանությունները առանց փորձաքննության անմիջապես հայտարարեցին, թե վարչապետի մահը պատահականություն է, մինչդեռ քննություն է ընթանում: Միեւնույն ժամանակ Վրաստանի իշխանությունները, ըստ Սարիշվիլի-Չանտուրիայի, չցանկացան քննությանը ներգրավել անկախ փորձագետների:

Շեւարդնաձեի «Հանուն նոր Վրաստանի» ընտրական դաշինքի նախկին խոսնակ Իրինա Սարիշվիլի-Չանտուրիան կասկած է հայտնել նաեւ, որ եթե Ժվանիայի մահը սպանություն էր, ապա մարդասպանները իշխանության մեջ են: Ընդ որում, այս վարկածի առումով Ժվանիայի մահը կարող է նաեւ Սահակաշվիլու իշխանության ավարտի սկիզբը դառնալ: Արդեն երեկ Իրինա Սարիշվիլի-Չանտուրիան դիմել է Վրաստանի իշխանություններին իր պաշտպանությունն ապահովելու խնդրանքով, պաշտառաբանելով, որ իր որոշ հայտարարություններից հետո իրեն սպառնացել են:

Ժվանիայի մահվան հանգամանքների եւ առանց համապատասխան ուսումնասիրությունների ու պատրաստվածության արված եզրակացությունների վերաբերյալ հարցերի պատասխաններ են ակնկալում սպասել տարբեր ոլորտների եւ երկրների ներկայացուցիչներ: Իսկ այդ ժամանակ Վրաստանի խորհրդարանն, ասենք, քննարկում է Ժվանիայի անունով փողոց կամ հրապարակ անվանակոչելու հարցը:

Վրաստանի պաշտոնական աղբյուրների համաձայն, վարչապետի մահվան առնչությամբ հարցաքննվել են մոտ մեկ տասնյակ մարդիկ, այդ թվում Ժվանիայի թիկնապահները: Ըստ այդ հարցաքննությունների պարզվել է, որ Զուրաբ Ժվանիան փետրվարի 3-ին, ժամը 01.20-ին խոսել է ինչ-որ անձի հետ, որի ինքնությունը պարզվել է: Ըստ վրացական «Իմեդի» հեռուստաընկերության, Ժվանիան գիշերը, ժամը 01:19-ին պատասխանել է Միացյալ Նահանգներում Վրաստանի դեսպան Լեւան Միկելաձեի զանգին: Այդ խոսակցությունից մոտ 3 ու կես ժամ անց վարչապետին գտել են մահացած:

Չբացառվում է մոռանալ, որ պաշտոնական անձանց պահպանության ընդունված եւ պարտադիր կանոններն այդ օրը չեն պահպանվել: Մասնավորապես Վրաստանի վարչապետի թիկնազորից որեւէ մեկը չի ստուգել այցելած բնակարանի սարքավորումների վիճակը, մինչդեռ դա նրանց անմիջական պարտականությունն է: Ինչպես կարգն է, Ժվանիայի թիկնապահները ստուգողական զանգեր չեն իրականացրել՝ զանգահարել նրան կես ժամը մեկ, այլ զանգահարել եւ անհանգստություն են ցուցաբերել միայն Ժվանիայի եւ Յուստովի հանդիպումից երկու ժամ անց, երբ նրանք արդեն մահացած էին:

Առավել հետաքրքրական էին Ռաուլ Յուստովի հոր հայտարարությունները: Հայրը կասկածելի է համարել որդու մահվան պաշտոնական տարբերակը, իր իսկ վարձած բնակարանում: Յուստով-ավագը ժխտել է, թե իր որդին երբեւէ վարձել է տխրահռչակ բնակարանը կամ ապրել այնտեղ:

Բնակարանի տերը, որտեղ գտել էին Ժվանիայի եւ Յուստովի դիակները, պնդել է, որ գազի վառարանը լավ էր աշխատում եւ տեղադրված է եղել դեռեւս 3 ամիս առաջ: Միեւնույն ժամանակ, ռուսական ՆՏՎ հեռուստաընկերության տեսանյութի համաձայն, բնակարանի հարեւաններից մեկը գիշերվա ժամը 4-ի մոտ լսել է 2 կրակոց՝ 15 վայրկյան ընդմիջումով: Այս կրակոցների առնչությամբ որեւէ բացատրություն չի տրվում, անգամ եթե դրանց հեղինակները հենց վարչապետի թիկնապահներն են եղել:

Մահվան պատահականության առումով կասկածներ է հայտնել նաեւ Վրաստանում հայտնի փորձագետ Մայա Նիկոլեիշվիլին, որին, ի դեպ, Վրաստանի իշխանությունները չեն թույլատրել մասնակցել դիակննությանն ու փորձաքննությանը: Ըստ Մայա Նիկոլեիշվիլու, արյան մեջ կարբոքսիհեմոգլոբինի 70-80 տոկոսը մահացու է մարդու կյանքի համար, մինչդեռ վարչապետի արյան մեջ հայտնաբերված 40 տոկոսը չէր կարող մահվան պատճառ լինել: Բացի այդ, փորձագետի համոզմամբ, Վրաստանում չկա այնպիսի սարքավորում, որով հնարավոր լիներ նման կարճ ժամանակահատվածում որոշել արյան մեջ կարբոքսիհեմոգլոբինի տոկոսը:

Այս ամենի ֆոնին թերեւս դժվար է հավատալ, որ Վրաստանի նախագահի աշխատակազմի աշխատակից Գեորգի Խելաշվիլու մահը հենց փետրվարի 4-ին պատահական է, զուգադիպություն ժամանակագրության առումով: Ամեն դեպքում, ինքնասպանություն որակված այս մահվան մանրամասներն առայժմ հայտնի չեն: Հրապարակված չեն նաեւ Վրաստանի վարչապետ Զուրաբ Ժվանիայի եւ Քվեմո Քարթլիի փոխնախագահ Ռաուլ Յուստովի մահվան խոստացված մանրամասները:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՒԿՐԱԻՆԱ

Կուչման կզրկվի ունեցվածքից, «Կրիվորոժստալը» կպետականացվի

Ուկրաինայի վարչապետ Յուլիա Տիմոշենկոն կառավարությանը կարգադրել է իրավական հիմքեր նախապատրաստել նախկին նախագահ Լեոնիդ Կուչմային պետական պահպանությունից զրկելու նպատակով:

Ավելի վաղ՝ 2005 թ. հունվարի 19-ին կառավարությունը պետական նպաստ էր նշանակել Կուչմայի համար եւ նրան ցմահ օգտագործման հանձնել պետական ամառանոց՝ սպասարկու անձնակազմով եւ պահակներով:

Շաբաթ օրը կառավարությունը որոշեց պետությանը վերադարձնել «Կրիվորոժսալ» կոմբինատը եւ անցկացնել դրա սեփականաշնորհման նոր մրցույթ: Ջեռնարկության մասնավորեցման վերաբերյալ նախորդ կառավարության ընդունած բոլոր անօրինական փաստաթղթերը չեղյալ են հայտարարված: Ֆորում գործակալության տվյալներով, ձեռնարկության պետականացման գործընթացն սկսված է:

Հաղորդվում է, որ ձեռնարկության բաժնետոմսերի զգալի մասը Կուչմայի փեսա Վիկտոր Պինչուկի սեփականությունն է:

Ամենահարուստ ռուսաստանցին դարձյալ Աբրամովիչն է

«Ֆինանս» հանդեսում հրապարակված ռուսաստանցի միլիարդատերերի ցանկը վկայում է, որ Ռոման Աբրամովիչը մնում է Ռուսաստանի ամենահարուստ մարդը: Փորձագետները նրա կարողությունը գնահատում են 11,54 մլրդ դոլար: Վերջին տարում նրա ունեցվածքի արժեքը նվազել է 4 տոկոսով: Դա պայմանավորված է նրանով, որ «Սիբնեֆթի» տերերի ձեռքին գտնվող «Յուկոս» նավթային ընկերության բաժնետոմսերի փաթեթն արժեզրկվել է:

Երկրորդ տեղում «Բազովի էլեմենտ» հոլդինգի ղեկավար Օլեգ Դերիպասկան է (8,3 մլրդ դոլար): Եռյակը եզրափակում է «Ալֆա գրուպի» սեփականատեր Միխայիլ Ֆրիդմանը (8,1 միլիարդ):

Ամենահարուստ ռուսաստանցիների ցանկում են նաեւ Վլադիմիր Լիսինը (Նովոլիպեցկի մետաղակոմբինատ, 6,6 մլրդ), Վիկտոր Վեքսելբերգը («Ռենովա», 6,3 մլրդ), Վլադիմիր Եվտուշենկովը («Սիստեմա», 6 մլրդ), Վլադիմիր Բոգդանովը («Սուրգուտնեֆթեգազ», 5,3 մլրդ), Ալեքսեյ Մորդաշովը («Սեւերսալ», 4,9 մլրդ), Միխայիլ Պրոխորովը («Նորնիկել», 4,5 մլրդ), Վլադիմիր Պոտանինը («Ինտերռոս», 4,2 մլրդ):

Ընդունված է կարծել, թե Ռուսաստանի ամենահարուստ մարդիկ նավթագործներն են: Սակայն ցանկի առաջին տասնյակի կեսը կազմում են մետաղագործական ընկերությունների համատերերը: Վիկտոր Վեքսելբերգն իր հարստությամբ պարտական է ինչպես նավթին, այնպես էլ մետաղներին: Իսկ Վլադիմիր Եվտուշենկովը ոչ հումային հատվածի ներկայացուցիչ է: Նրա հարստությունը կրկնապատկվել է բջջային հեռախոսակապի MTC ընկերության շնորհիվ:

Երբեմնի ամենահարուստ ռուսաստանցի Միխայիլ Խոդորկովսկու կարողությունն այժմ գնահատվում է ընդամենը 210 մլն դոլար:

Անցած 1 տարում ռուսաստանցի դոլարային միլիարդատերերի թիվը 25-ից հասել է 39-ի:

«Ֆաթահը» դադարեցնում է ռազմական գործողություններն Իսրայելում

Պաղեստինյան «Ֆաթահ» շարժման կենտկոմը հայտարարել է, որ դադարեցվում են ռազմական գործողություններն Իսրայելի տարածքում: «Հաարեց» թերթը հրապարակել է «Ֆաթահի» ղեկավար մարմնի հայտարարությունը: Փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ շարժման անդամները պետք է վերջ դնեն Իսրայելի տարածքում իսրայելցիների վրա կատարվող հարձակումներին եւ պատրաստ լինեն «երկկողմ զինադադարի շրջանակներում» ռազմական գործողություններից հրաժարվել «1967 թ. պատերազմում Իսրայելի գրաված տարածքներում»:

Միեւնույն ժամանակ ընդգծվում է, որ «Ֆաթահն» այսուհետեւ եւս կդիմադրի «իսրայելական օկուպացմանը» եւ իրավունք կունենա պատասխանելու Պաղեստինի բնակչության դեմ Իսրայելի զորքերի գործողություններին:

Նման հայտարարություն պաղեստինյան շարժումն անում է երկրորդ անգամ. առաջին անգամ հակահրայելական գործողությունների դադարեցման մասին հայտարարվել էր 2005 թ. հունվարին՝ Պաղեստինի նախագահական ընտրությունների նախօրեին:

Իսրայելի պաշտպանության նախարար Շաուլ Մոֆազը կիրակի օրը հայտարարեց, որ դադարեցվում է պաղեստինցի գրոհայինների որոնման գործողությունը: Բացի դրանից, նա լրագրողներին հայտնեց, որ բանտից ազատ կարձակվի «Ֆաթահի» ռազմականացված թեւի՝ «Թանզիմ» խմբավորման նախկին առաջնորդ Մարուան Բարղութիի որդին:

Ավելի վաղ Իսրայելը որոշել էր զորքերը դուրս բերել Այսրհորդանանի պաղեստինյան մի քանի քաղաքներից եւ խոստացել էր որպես բարի կամքի արտահայտություն, բանտերից ազատ արձակել պաղեստինցի 900 կալանավորների:

Ծխախոտի երկիր Կուբան ծխելու սահմանափակումներ է մտցնում

Աշխարհում ամենահայտնի սիգարները եւ լավագույն ծխախոտն արտադրող Կուբան միացել է այն երկրներին, որոնք ծխելը սահմանափակում են հասարակական վայրերում եւ արգելում փակ հարկաբաժիններում:

Փետրվարի 7-ից ուժի մեջ մտած որոշման համաձայն, ծխելն արգելվում է փակ հարկաբաժիններում (թատրոն, կինո, ռեստորան, սրճարան), բոլոր փոխադրամիջոցներում, այդ թվում տաքսիներում: Արգելքը գործում է նաեւ առողջապահության ու կրթության բոլոր հիմնարկներում:

Պետական մյուս հաստատություններում եւ արտադրությունում ծխելը թույլատրվում է միայն շենքերից դուրս դրան հատկացված վայրերում:

Կուբայում շրջանառությունից հանվում են ծխախոտ վաճառող ավտոմատները եւ վարչական ու քրեական խիստ պատասխանատվություն է սահմանվում 16 տարին չլրացած անձանց ծխախոտ վաճառելու համար:

Ըստ վիճակագրության, 10 կուբացուց 4-ը ծխում է: Ավելին, ծխացող սիգարների արտահանությունից Կուբան ամեն տարի ավելի քան 200 մլն դոլար զուտ շահույթ է ստանում:

Առանց Վանոյի եւ Վանոյի ներկայությամբ

Լույս է տեսել Վանո Սիրադեղյանի նոր գիրքը

Առանց Վանոյի հետ էր: Էս երկրի պաշտիրակները գնում, հասնում են Պետերբուրգ, Պիտսբուրգ, հատկապես՝ Սարասբուրգ, ճառեր արտասանում, գալիս, հեռուստատեսությունը գիշերային բարերի պ... պարն է մանրամասնորեն լուսաբանում, Նաիրի Հունանյանը բանաստեղծությունների գիրք է տպում, օրենսդիր օրգանում օրենքներ են օծվում, էլիզաբեթ Ջոնսը գիշերվա կեսին զանգում է Հայաստան ու Հայաստանին ասում, որ «դալաք է

արել», չորաթանցի Վաղոն ամսական 8 հազար դրամ իր թոռակով եւ վաղուց արդեն իշությունից զրկված իր տղով իր 11 երեխաներին է պահում (չհաշված՝ հարկերն ու կնոջը), Համոն, Կոտոն, Սաթոն «Կլոնի» զիլ սերիալներն են նայում... Ու ամենը գոհ են: Առանց Վանոյի հետ էր:

Բայց, ահա, 2005 թ. նորից գալիս է Վանոն մի գրքի մեջ եղած իր երկու գրքով («Երկիր: Ցպահանջ...» եւ «Գյաղաների ժամանակը») ու ասում. «Հայրենիքի, անշուշ, մեծն է լավը: Ինչպես եւ վարունգի՝ կանաչը: Աղջկա՝ կոկսը: Կրծքի՝ երկու հասը: Ազգի՝ համաշխարհայինը: ՀՀՇ-ի՝ նախկինը: Ռամկավարի՝ դաշնակը: Դաշնակի՝ հիմարը: Դեմոկրատի՝ օգտագործածը: Ռեսինի՝ կոմպլեմենտարը՝ վերջում գլխին քաշելու համար: Իսկ խոսնակի՝ խոշորը: Փոխխոսնակի՝ խուրդեն:

Վարչապետի՝ հասը: Արգործնախարարի՝ ծալովին: Ընդդիմադրի՝ փսլնքոտը: Սոցիալիստի՝ Աշոտը: Կոմունիստի՝ պահանջատերը: Խմբագրի՝ քյարթուն: Պուտանկի՝ մատղաշը: Խաչի՝ թափանցիկը: Իկեբանայի՝ ժինգալով հացը: Վարկի՝ կորածը...»:

Ու խորհուրդ է տալիս նաեւ, որ ազգին չկոչենք, որովհետեւ այս ամենի մեջ ազգը տեղ չունի: Վանոն չկար հեռուստատեսության ասպարեզում, Աժ ասպարեզում, հավաք-մավաքներում, ու հետ էր նրա մասին խոսելը: Երեկ նրանից թուլաբաժին աղերսողը (չգիտես ինչ ախմախ խելքով տարավ-բերեց ու մտածեց, որ Վանոն չկա) իրեն մեծացրեց, մեծացրեց ու ինքն իրեն Վանոյի մասին խորհրդածություններ անողի «մակարդակ» սարքեց: Ջեռի հետ էլ՝ հայրենասերի ու հայրենիքասերի պաշտոն ստացավ: Առանց Վանոյի հետ էր: Որովհետեւ չէր կարացել Վանոյի այն խոսքը, թե... «Հայը պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից: Գերադասում է, քանզի պատմական հայրենիքը խնամք չի պահանջում: Այդ հայրենիքը տուրք չի պահանջում, քրտինք չի պահանջում, պաշտպանության կարիք չունի: Եվ այդ հայրենիքի հմայքն այն է, որ այնտեղ պարելը պարտադիր չէ: Եվ հայրուրամյակներ շարունակ մենք մեր հայրենիքը մաս-մաս դարձնում ենք պատմական հայրենիք ու կապվում հավաքական, չպարտավորեցնող, սրտագին սիրով...»:

Այսպես է գրել Վանո Սիրադեղյանը, ապա նաեւ ավելացրել. «...Հայը հավաքական գոյությունից վեր է դասում հավաքական սերն առ ոչինչ: Հայրուրամյակներ շարունակ մաս-մաս մեր հայրենիքը դարձնելով պատմական, մաս-մաս ուժեղացնում ենք մեր հարեւաններին, ուժեղացնելով՝ հոչակում թշնամի, նեղվում ենք թշնամու հարեւանությունից, անիծում ենք մեր իրական հայրենիքի փոքրությունը եւ երազում մի հզոր, մի խաչակրաց բանակ, որ դարձյալ կգա ու կանցնի մեր հայրենիքի, մեր պատմական հայրենիքի, մեր հարեւանների վրայով ու այս անգամ, գուցե, հավերժորեն մնա»:

Առանց Վանոյի հետ էր: Իր ասած այս բաները գիտեինք, բայց այս ձեւով՝ համառոտ, հստակ, դիպուկ, առանց վարանելու չէինք կարող ասել: Մեր խնդիրն էստեղ հետ է լուծվում: Որտեղ, էսպես, Վանոն կա, Վանոն մեր փոխարեն ասում է: Որտեղ՝ Վանոյի լինելու դեմքում ավելի հետ է: Մեզ համար հետ է, իր համա՞ր... Հազար տարվա հեռոյի համար ինքն իր մասին գրել է. «Նա ուշացած էր այս աշխարհ եկել կամ ժամանակից շուտ էր եկել: Այսինքն՝ մարդու այն տեսակն էր, ում խփում են ամեն կարգի ժամանակները, հերոսականը՝ ավելի եռանդով, ոչ հերոսականը՝ ճոճիմությամբ, պատերազմականը՝ դաժանությամբ, հետպատերազմականը՝ անտարբերությամբ, եւ նրանց համար ժամանակների լավն ու վատը չափվում էր ցավի մեղմությամբ-ցավի ուժգնությամբ»:

1994 թվականի հունիսին մի հարցազրույցում իր մասին ասել է. «Վանո Սիրադեղյանը, որպես Սիրադեղյան ցեղի ներկայացուցիչ, ըմբոստ է: Անհաշտ է: Վանո Սիրադեղյանը



նում եւ դիրքն ու դիրք չունենալը, փող ունենալն ու չունենալը: Բայց դա հստակորեն կարեւոր է, երբ որ փող չես ունենում: Այդ ամենը փիլիսոփայորեն եմ ընդունում...»:

Այդին Մորիկյանի կազմած ու խմբագրած Վանո Սիրադեղյանի նոր գրքի (գրքերի) նախաբանը Հրանտ Մաթեւոսյանի խոսքն է, որում ի մասնավորի ասված է. «...Վանոն շատ դեպքերում մեզ անտեսանելին դարձնում է տեսանելի, չսիրելին՝ սիրելի, ներելի, տանելի: Ասել է՝ նա մեր հայացքին ջերմություն է տալիս, ասել է՝ կյանքը մեզ սիրելի է դարձնում: Իսկ եթե նրա գրչով հյուսվող, բացահայտվող աշխարհն, այնուամենայնիվ, լավն ու սիրելի չէ, ապա միեւնույն է՝ ընթերցողիդ պատարում է ոչ թե հուսահատության ու վախի զգացումը, որ մեզ մեռելածին երեւույթների առջեւ է կալանում, այլ միայն ու միայն կենսական հրավանքի հրաշքը, որովհետեւ մենք ծնունդի, կայացման, կենդանության երեւույթին ենք ներկա լինում...»:

Հերիք է մեջբերումներ անեմ: Գնացեք, գտեք Վանո Սիրադեղյանի «Երկիր: Ցպահանջ...»: «Գյաղաների ժամանակը» գիրքը եւ ինքներդ կարդացեք: Ուշադիր կարդացեք, լրջմիտ, առանց ավելորդ ոգեւորության: Լրջմիտ կարդացեք:

ՄԵՐԳԵՆ ՁԱԼՈՅԱՆ

Ազգային գրադարանի գնահատականը լրատվամիջոցներին

Ազգային գրադարանը կազմակերպել էր իր հերթական միջոցառումը, որը նվիրված էր գրադարանի հրատարակած տարեգրքի շնորհանդեսին: Տարեգիրքն ամփոփում է ազգային գրադարանի վերաբերյալ 2004 թ. հայաստանյան, մասամբ նաեւ սփյուռքի հայկական թերթերում տեղ գտած նյութերի ու հրապարակումների մասին տեղեկությունները, այլ կերպ ասած, մամուլի արձագանքները:

Մյուս տարի, ինչպես խոստացավ գրադարանի ամսաթերթի խմբագիր Արմինե Ղազարյանը, տարեգիրքն իր էջերում կամփոփի նաեւ ռադիոհեռուստատեսությունների արձագանքները:

Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց լրատվամիջոցներին, լրագրողներին ոչ միայն գրադարանի միջոցառումները լուսաբանելու, այլեւ հանրության ուշադրությունը մշակույթի, արվեստի վրա սեւեռելու համար:

Թեպետ տարեգրքում ամփոփված են մամուլի արձագանքները, բայց պատվոգրեր ստացան նաեւ երկու լրատվական գործակալություններ եւ մի քանի հեռուստաընկերություններ:

«Հոգեւոր հայրենիք» ամսաթերթի խմբագիր Արմինե Ղազարյանը նշեց, որ իրենք աշխատում են 40 լրատվամիջոցների հետ, բայց այսօր դրանցից տասնմեկն են ստանում պատվոգրեր: Դա պայմանավորված է նրանով, որ տվյալ լրատվամիջոցը ամբողջ տարվա ընթացքում առնվազն 20 անդրադարձ եւ հրապարակում է ունեցել գրադարանի կազմակերպած միջոցառումների մասին: Դրանց թվում է **«Ազգը»**: Խմբագիրը նշեց նաեւ, որ շուտով կլինի տարեգրքի ինտերնետային տարբերակը:

Դավիթ Սարգսյանի խոսքերով, այս տարին գրադարանի համար միջոցառումների իմաստով բավական հագեցած է լինելու: Օրինակ, աprիլի 11-18-ն ազգային գրադարանի շաբաթը նվիրվելու է երեխաներին, քանի որ, տնօրենի կարծիքով, շատ կարեւոր է երեխաներին կրթելը, նրանց մեջ վաղ հասակից գրքի հանդեպ սեր առաջացնելը: Պրն Սարգսյանն իր խոսքի ավարտին նշեց, որ 2005 թ. էլ ավելի է ակնկալում լրատվամիջոցների աջակցությունը ոչ միայն միջոցառումների խորը եւ որակյալ լուսաբանումների, այլեւ տեղեկատվական հովանավորի տեսքով:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԹՄՄ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Մրցանակից ավելի կարեւոր...

Աշխարհն ավելի էսթետիկորեն ու նրա ոգեղենությունը տեսնող հոգիների ներքին միայնությունից դուրս գալու հնարավորություններից մեկն արվեստն է: Ժամանակին բանաստեղծ Վահան Թեքեյանը գրում էր. «Արվեստը բարեկամություն մըն է, եւ այս պատճառավ՝ գեղագիտորեն ընկերային երեւույթ մը: Արվեստագետը, մարմին տալով իր գեղեցիկի, կատարյալի մտապատկերին, ստեղծելով խանդավառության եւ սիրո մեջ (առանց որուն իր գործն արժեքե զուրկ է արդեն), ուրիշ բան չըներ, բայց եթե բարեկամներ հայթայթել իրեն իր ճանչցած եւ չճանչցած հոգիներեն, ներկային ու ապագային մեջ: Արվեստը գեղագույն, խորհրդավոր եւ անշահախնդիր սիրո մը մատուցած նվեր մըն է... Արվեստը մեծ միացնող մըն է հոգիներու»:

Այս գրության մեջ ուզում եմ անդրադառնալ Թեքեյան կենտրոնում օրերս կայացած «Վահան Թեքեյան» անդրանիկ մրցանակաբաշխությանը, ոչ թե իրադարձությունները մեկ անգամ եւս արձանագրելու, այլեւ կարեւորելու մի երեւույթ, որ փոխանցվեց շատերին զգացողությունների մակարդակով: Այդ օրը որեւէ մեկը դահլիճից դուրս չեկավ տարակուսանքով: Մեր օրերը լեցուն են մրցանակներով ու մրցանակաբաշխություններով, փառատոներով, տեղի ու անտեղի մեծարանքներով, դրանց պակաս չի էլ զգացվում: Սակայն շատ սակավ են բովանդակային եւ գեղագիտական նրբաճաշակությամբ աչքի ընկնող ձեռնարկները, իսկ որ ամենակարեւորն է՝ մրցանակաբաշխությունների նկատմամբ վստահություն մեծամասամբ չկա: Իբրեւ ձեւավորված հոգեբանություն, մտայնություն, վիճակ շարունակվում է այս եւ նման այլ երեւույթներին վերաբերող (ընկերա-բարեկամային սկզբունք) խորհրդային ստերեոտիպը:

«Վահան Թեքեյան» անդրանիկ մրցանակաբաշխությանը 8 անվանակարգերից այս անգամ ընդգրկվեց հինգ ոլորտ (գրականություն, ճարտարապետություն, հումանիտար գիտություններ, կերպարվեստ, կինեմատոգրաֆիա): Մրցանակակիրները հայտնի են եւ դրանց կրկին անդրադառնալու հարկ չկա:

Հանձնաժողովի նախագահի եւ անդամների քվեարկման եւ մասնակցության համար ստեղծված հավասար պայմանները, ԹՄՄ վարչության ձեռնպահ մնալը նպաստել էին անաչառ վերաբերմունքին, եւ մրցանակաբաշխության վերջնական արդար արդյունքը վերոհիշյալ հանգամանքով է պայմանավորված: Թեքեյան կենտրոնի սրահում ստեղծվել էր հրաշալի ներդաշն ու անսովոր մթնոլորտ: Ամենատարբեր բնագավառների եւ շատ հազվադեպ միեւնույն հարկի տակ հանդիպող մտավորականությունը ներքին բավարարվածության զգացողություն ուներ. ներկաներն արժանի էին համարում գնահատվածներին: Այս երեւույթը շատ էական է, որովհետեւ մեր իրականությունը խարխլվում է հատկապես տիրող անվստահության եւ անհանդուրժողականության պատճառով: Այսպիսի մոտեցումն առաջացնում է ոչ միայն վստահության մթնոլորտ, նաեւ հուսադրում ու համախմբում իրական արժեքներ փնտրող անհատներին: Նման երեւույթը, իրավամբ, օրինակելի է, երբ բացակայում են անձնական ու խմբակային մոտեցումներն ու համակրանք-հակակրանքները, որից միայն կարող է շահել ճշմարիտ ստեղծագործությունը:

Հարկ է արժանին մատուցել նաեւ ձեռնարկի կազմակերպիչներին. առանձնակի ուշադրության է արժանի երաժշտական ձեւավորումը, որի հրաշալի ֆոնավորմամբ անցավ մրցանակաբաշխության արարողությունը: Խիստ համահունչ օրվան, կազմակերպիչներին հաջողվել էր վերստեղծել 60-ականների երեւանյան երաժշտական կոլորիտը՝ հարազատ ու մտերիմ շատ երեւանցիների: Հետզհետե լվող օրերի հուսահատության մեջ նմանաբնույթ (օբյեկտիվ) ձեռնարկները, կարող են նաեւ հասարակական մթնոլորտն առողջացնող եւ ոգեշնչող նշանակություն ձեռք բերել՝ թե դեռ ամեն ինչ կորած չէ: Նման զգացողությունն ու տպավորությունն անուղղակիորեն նկատվեց նաեւ մրցանակակիրների խոսքերում: Արմեն Շեկոյանը շատ անկեղծ, ինչ էլ տնավարի նկատեց. «Հաճելի է մրցանակ ստանալ մի բանի համար, որով երկար ժամանակ չես զբաղվում: Հինգ տարի է՝ բանաստեղծություն չեմ գրում, դա ինձանից հեռացել է, որովհետեւ անցել եմ արձակի: Բայց նորմալ գիրք եմ գրել եւ նորմալ մրցանակ եմ ստացել, մանավանդ երբ չգիտես, ովքեր են հանձնաժողովի անդամները»:

Կինոռեժիսոր Կարեն Միհայելյանը, որի ֆիլմը վավերական պատմություն է ղարաբաղյան պատերազմի մասին, մեկ անգամ եւս հաստատեց այն ճշմարտությունը, թե «մենք հաղթեցինք պատերազմում, որովհետեւ ունեինք որակ եւ ոգի: Իմ խորին համոզմամբ, այդ որակն ու ոգին պետք է վերարտադրվի այսօր, առանց դրա մենք տխուր ապագա կունենանք»:

Ցեմ կարծում, թե այդ ոգին ու որակը չկորցնելու համար, արդարամտությունը, ճշմարիտ գնահատանքն ու ուշադրությունն արժանավորներին, անկարեւոր են:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱՂԱԼՅԱՆ

Թիմերը փորձարկում են ուժերը

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության մասնակից թիմերը շարունակում են նոր մրցաշրջանի նախապատրաստությունը՝ մարզումներին զուգահեռ փորձարկելով ուժերը ստուգողական հանդիպումներին: Երեկ «Կարեն Դեմիրճյան» մարզահամերգային համալիրում ստուգողական խաղում մրցավեճի էին բռնվել հանրապետության արծաթե մրցանակակիր «Միկան» եւ Երեւանի «Արարատը»: Եթե «Միկայի» ֆուտբոլիստները մարզումների շաբաթական ցիկլն ավարտում են ընկերական խաղով եւ առդեն հասցրել են նման 5 հանդիպում անցկացնել, ապա արարատցիների համար դա առաջին մրցախաղն էր: «Միկան» ասպարեզ էր դուրս բերել հիմնական կազմը, մինչդեռ արարատցիների մարզիչները նպատակահարմար էին գտել հիմնականում փորձարկել երիտասարդներին: Աբխուժ մրցապայքարում անցած հանդիպումն ավարտվեց «Միկայի» հաղթանակով՝ 2-0: Աչքի ընկան Արտյոմ Ադամյանն ու թիմի նորեկ՝ նախկին շիրակցի Արտյոմ Բեռնեցյանը:

Խաղից հետո զրուցեցինք «Արարատի» գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանի հետ: Նա նշեց, որ նման հանդիպումներն օգտակար են թիմերի համար: Մարզադահլիճում անցկացվող խաղերում հիմնականում ստուգվում են ֆուտբոլիստների արագ մտածելու, խաղային իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու ունակությունները: Գլխավոր մարզիչն ընդհանուր առմամբ գոհ էր իր սաների խաղից, նշելով, որ թիմում կան հեռանկարային երիտասարդ ֆուտբոլիստներ, որոնք համապատասխան աշխատանքի դեպքում կարող են ընդգրկվել հիմնական կազմում: Անդրադառնալով ուսումնամարզական գործընթացին, Արկադի Անդրեասյանը նշեց, որ նախապատրաստության առաջին փուլում թիմի առջեւ դրված խնդիրները հիմնականում լուծվել են, գոհ է մարզումների նկատմամբ ֆուտբոլիստների վերաբերմունքից: Օրերս թիմը կավարտի ուսումնամարզական հավաքը «Էրեբունի» հյուրանոցում: Առաջիկայում նախատեսվում է հավաքի մեկնել հանրապետությունից դուրս, ինչը հնարավորություն կտա ֆուտբոլիստներին բարենպաստ պայմաններում նախապատրաստվելու նոր մրցաշրջանի մեկնարկին: Մարզիչը հուսով է, որ մնացած ժամանակահատվածը եւ արդյունավետ կօգտագործվի առաջնության եւ գավաթի հանդիպումներին կազմ ու պատրաստ ներկայանալու համար:

Մոսկովյան մրցաշարից վերադառնալուց հետո երկրի չեմպիոն «Փյունիկը» նախապատրաստությունը շարունակում է Երեւանում: Երեկ թիմը ստուգողական երկրորդ հանդիպումն անցկացրեց՝ մրցելով «Դինամո-Զենիթի» հետ: Արմավիրում կայացած խաղում չեմպիոնը հաղթեց 3-1 հաշվով: Փյունիկցիներից հաշիվը 11 մետրանոց հարվածով բացեց Մամադու Դիավարան, այնուհետեւ Ալեքսանդր Պետրոսյանը 2-րդ գնդակը խփեց, իսկ թիմի նորեկ լեգեոներ Դեվիդ Անասը 3-րդ անգամ գրավեց մրցակցի դարպասը: «Դինամո-Զենիթի» կազմում էլ աչքի ընկավ թիմում փորձարկվող վրաց ֆուտբոլիստ Գագա Թբիլիսավիլին: Շուտով մեր հանրապետության 2 ակումբներին՝ «Միկային» եւ «Փյունիկին» լուրջ փորձություն է սպասվում: «Միկան» փետրվարի 11-ին կմեկնի Աբգաբադ՝ մասնակցելու Թուրքմենբաշու գավաթի խաղարկությանը, իսկ փյունիկցիները հանդես են գալու Տաշքենդում կազմակերպվելիք միջազգային մրցաշարին, որը տեղի կունենա փետրվարի 22-ից մարտի 1-ը:

Լեյլա Ալին հաղթանակը կնվիրի սիրահարների տոնին

Լեգենդար բոքսամարտիկ Մոհամեդ Ալիի դուստրը՝ Լեյլան, փետրվարի 11-ին Ատլանտիկ Սիթիում երկրորդ կիսամիջին քաշում աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը կպաշտպանի 36-ամյա Կասանդրա Գեյգերի հետ մրցավեճում: Այդ մենամարտը կնվիրվի սիրահարների տոնին: Ընդհանրապես, Լեյլա Ալին սիրում է այդ տոնը նշել մենամարտով: 2003 թ. փետրվարի 14-ին նա մենամարտում էր Մերի էն Ալմազերի հետ եւ արդեն 4-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթանակ տոնեց: Ընդ որում, այդ մենամարտում վիճարկվում էր աշխարհի չեմպիոնի կոչումը միանգամից 3 վարկածներով: Հետաքրքրական է, որ իր վերջին մենամարտն Ալին անցկացրել է կիսածանր քաշում՝ նվաճելով

IWBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի կոչումը:

Մասնագետները չեն կասկածում, որ այս անգամ էլ Լեյլան կհաղթի եւ կպահպանի աշխարհի չեմպիոնի կոչումը: Նա պրոֆեսիոնալ ռինգում 19 մենամարտ է անցկացրել եւ բոլորն ավարտել է իր օգտին, ընդ որում 16-ում մրցակիցներին հաղթել է նոկաուտով: Նրա մրցակցուհին՝ Կասանդրա Գեյգերն ընդամենը 2,5 տարի է պրոֆեսիոնալ բոքսամարտում: Անցկացրած 10 մենամարտից հաղթել է 6-ում: Իր մենամարտերի մեծ մասը նա անցկացրել է կիսածանր քաշային կարգում, երբեմն մասնակցելով նաեւ ծանր եւ գերծանր քաշային բոքսամարտիկների մրցավեճին: 2001 եւ 2002 թթ. նա համաամերիկյան բոքսամարտի մրցաշարերում սիրողական ռինգում հասել է մինչեւ եզրափակիչ: Հետաքրքրական է, որ մինչ բոքսամարտով զբաղվելը, Կասանդրան պրոֆեսիոնալ բասկետբոլիստուհի էր:

«Պորտոյում» պարտությունները չեն ներվում

Իսպանացի մարզիչ Վիկտոր Ֆերնանդեսին ընդամենը 6 ամիս բախտ վիճակվեց գլխավորելու պորտուգալական «Պորտոն»: Առաջնության հերթական տուրում «Բրագայից» կրած պարտությունից (1-3) հետո ակումբի ղեկավարությունը պաշտոնանկ արեց մարզչին: Վերջինիս համար այդ որոշումն անակնկալ էր, քանի որ մինչ այդ «Պորտոն» գլխավորում էր մրցաշարային աղյուսակը: Հեռացման պատճառը վերջին չորս տուրերում «Պորտոյի» անհաջող ելույթներն էին: Թիմն ընդամենը մեկ հաղթանակ էր տոնել եւ «Բրագայից» կրած պարտությունից հետո զիջել էր առաջատարի դիրքը՝ նահանջելով 4-րդ հորիզոնական:

Ֆերնանդեսը «Պորտոյի» հետ օգոստոսին երկամյա պայմանագիր էր կնքել՝ փոխարինելով իտալացի Լուիջի Դել Ներիին: Վերջինիս չհաջողվեց արժանի փոխարինող դառնալ «Չելսիի» ղեկը սանձնած Ժոզե Մոուրինյոյին՝ «Պորտոն» գլխավորելով ընդամենը երկու ամիս: Փասորեն Ներիի օրոք «Պորտոն» պատշաճական ոչ մի խաղ չանցկացրեց, այլ նախապատրաստվում էր նոր մրցաշրջանին: Ի տարբերություն նախորդ մարզչի, Ֆերնանդեսը բավական հաջողություններ էր հասել թիմում: Նրա գլխավորությամբ «Պորտոն» նվաճել էր Միջմայրցամաքային գավաթը եւ հաջող մրցելույթներ ունեցել չեմպիոնների լիգայի մրցաշարում՝ մտնելով 1/8 եզրափակիչ, որտեղ շուտով ուժերը չափելու է «Ինտերի» հետ: Սակայն, ինչպես երեւում է, «Պորտոյի» ղեկավարությունը չի ներում անհաջողությունները: Թիմի նոր գլխավոր մարզիչ է նշանակվել «Սեսուբալի» մարզիչ Պեդրո Կոուտյրուն, որը ակումբի հետ 1,5 տարվա պայմանագիր է կնքել:

Անելկան կմեկնի Թուրքիա

«Մանչեսթր սիթին» համաձայնել է ֆրանսիացի հարձակվող Նիկոլա Անելկայի՝ «Ֆեներբահչե» տեղափոխմանը: Առաջին կես տարում Անելկան թուրքական ակումբում հանդես կգա վարձավճարով, այնուհետեւ թուրքական չեմպիոնը կգնի նրա տրանսֆերը 4,7 մլն եվրոյով: Անելկան միշտ երազել է հանդես գալ ավելի բարձրակարգ թիմում եւ ահա նրա երազանքն իրականացավ:

Դասական խայլ

«Արսենալի» կիսապաշտպան Ջերմեյն Պենանը մրցաշրջանի մնացած մասը կանցկացնի «Բիրմինգհեմում»: Նա հանդես կգա վարձավճարով: Այս տեղափոխման պատճառը միայն այն չէ, որ Պենանը «Արսենալի» հիմնական կազմում տեղ չէր գտնում: Թիմի ղեկավարությունը դժգոհ էր նրա վարքից: Վերջերս հարբած վարելով մեքենան, Պենանը վթարի էր ենթարկվել՝ ջարդելով Էշլի Կոուլին պատկանող մեքենան: Ուստի այս տեղափոխությունն ինչ-որ չափով նաեւ դասական խայլ է ընկալվում: «Արսենալում» գտնում են, որ «Բիրմինգհեմում» Պենանը ոչ միայն խաղային փորձ ձեռք կբերի, այլեւ իր արարքների մասին խորհելու ժամանակ կունենա եւ կոտրի իր վարքը:

«Արսենալի» մեկ այլ ֆուտբոլիստ հնարավոր է տեղափոխվի իսպանական «Վալենսիա»: 26-ամյա բրազիլացին ցանկանում է ծանր վնասվածքից հետո փոխել մթնոլորտը եւ հասցնել մինչեւ մրցաշրջանի ավարտը հանդես գալ իսպանական առաջնությունում: Նա նշել է, որ իրեն հաճելի է արժանանալ Կլաուդիո Ռանյերիի ուշադրությանը եւ կնգտի արդարացնել «Վալենսիայի» ղեկավարության սպասելիքները:

Արոնյանը հաղթողների թվում է

Ավարտվեց Ջիբրալթարի շախմատի մրցաշարը: Նախավերջին տուրում մեր երկու շախմատիստները կրկին պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Սարգսյանը խաղաղ դաշն կնքեց Սոիլմանի, Արոնյանը՝ Գորմալիի հետ: Դա հնարավորություն ընձեռեց մրցակիցներից երեքին շրջանցելու հայ շախմատիստներին: Աղյուսակը 7-ական միավորով գլխավորեցին Ալեքսեյ Շիրովը, Զախար Եֆիմենկոն ու Էմիլ Սուտովսկին, որոնք համապատասխանաբար հաղթեցին Սպրագեսին, Նակամուային եւ Արեշչենկոյին: Արոնյանը, Սարգսյանը, Էրենբուրգը, Գորմալին, Կոտրոնիասը, Գեորգիեւն առաջատարներից հետո էին մնում կեսական միավորով:

Ավարտական տուրում Արոնյանը սեւերով հաղթեց Յան Ռոջերսին, իսկ Սարգսյանը սպիտակներով ոչ-ոքի խաղաց Գորմալիի հետ: Վճռորոշ նշանակություն ունեցող Սուտովսկի-Շիրով, Կոտրոնիաս-Եֆիմենկո պարտիաներում եւս խաղաղ դաշն կնքվեց:

Այսպիսով, Լեւոն Արոնյանը 7,5 միավորով Սուտովսկու, Շիրովի, Եֆիմենկոյի եւ Գեորգիեւի հետ բաժանեց 1-5-րդ տեղերը: Գաբրիել Սարգսյանը 7 միավորով Կոտրոնիասի, Գորմալիի, Արեշչենկոյի եւ Նակամուրայի հետ բաժանեց 6-10-րդ տեղերը: Հիշեցնենք, որ մրցաշարին մասնակցում էր 121 շախմատիստ:

Աշխարհի առաջնություն նաեւ լողափային ֆուտբոլից

ՖԻՖԱ-ն հավանություն է տվել այս տարվա մարտին Բրազիլիայում լողափային ֆուտբոլի աշխարհի առաջնություն անցկացնելու առաջարկին: Նախատեսվում է, որ նման մրցաշարերը կանցկացվեն ամեն տարի եւ մրցումներին կմասնակցեն 12 թիմեր: ՖԻՖԱ-ի նախագահ Յոզեֆ Բլաթերը նշել է, որ լողափային ֆուտբոլը ժամանակակից ֆուտբոլի բավական դիտարժան եւ հետաքրքրական տարբերակն է եւ վերջին տասը տարիներին զգալի մասսայականություն է վայելում ողջ աշխարհում: Իր հերթին լողափային ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի նախագահ Լուիս Ֆելիպե Տավարեսը նշել է, որ հնարավոր ամեն քայլ կձեռնարկի աշխարհի առաջնությունը բարձր մակարդակով կազմակերպելու եւ անցկացնելու համար:

Դյուգարին ավարտեց ելույթները

Ֆրանսիայի հավաքականի նախկին հարձակվող, 1998 թ. աշխարհի եւ 2000 թ. Եվրոպայի չեմպիոն Քրիստոֆ Դյուգարին ավարտեց ելույթները մեծ ֆուտբոլում: 32-ամյա ֆուտբոլիստը հայտարարել է, որ վերջնական որոշում է կայացրել, թեեւ Լիսաբոնի «Բենֆիկայից» շահավետ առաջարկ ուներ: Դյուգարին իր գոհունակությունն է հայտնել, որ 8 տարի հանդես է եկել Ֆրանսիայի հավաքականում եւ բախտ է ունեցել խաղալու համաշխարհային ֆուտբոլի «աստղերից» մեկի՝ Զինեդին Զիդանի հետ: Դյուգարին ֆուտբոլային իր գործունեությունը սկսել է 1988 թ. ֆրանսիական «Բորդոյում»:

Նույնիսկ Ադրբեջանն է հայտ ներկայացրել

Ավարտվեց ֆուտբոլի Եվրոպայի 2012 թ. առաջնության հայտերի ներկայացման ժամկետը: Վերջին պահին եւս մի քանի երկրներ պատրաստակամություն հայտնեցին հայտ ներկայացնել դառնալու Եվրո-2012-ի կազմակերպիչ: Այդ պայմարում ադրբեջանցիների մրցակիցները կլինեն Ռուսաստանը, Հունաստանը, Իտալիան, Ռումինիան, Թուրքիան, ինչպես նաեւ համատեղ հայտ ներկայացրած Խորվաթիան ու Հունգարիան, Լեհաստանն ու Ուկրաինան: Այս առնչությամբ ՈՒԵՖԱ-ի գործադիր տնօրեն Լարս Կրիստեր Օլսոնը նշել է, որ զարմացած են Եվրո-2012-ի նկատմամբ երկրների դրսեւորած նման հետաքրքրությունից: Առաջնության կազմակերպիչ երկրի ընտրությունը կկատարվի երկու փուլով: Մինչեւ հուլիսի 21-ը թեկնածուները պետք է հանգամանալից տեղեկատվություն ներկայացնեն ՈՒԵՖԱ երկրի ֆուտբոլային տնտեսության վերաբերյալ: Այդ տվյալների հիման վրա ՈՒԵՖԱ-ն 8 թեկնածուներից կընտրի երեքին: Իսկ 2006 թ. դեկտեմբերին հայտնի կդառնա Եվրո-2012-ի կազմակերպիչ երկիրը, որը 6 տարի ժամանակ կունենա նախապատրաստվելու ֆուտբոլային ստուգատեսին:

«Հանգան» Լիտմանենին օգնության է կանչում

Ֆինական ֆուտբոլի ամենավառ աստղերից մեկը՝ 3տարի Լիտմանենը, 1,5 տարվա պայմանագիր է կնքել Գերմանիայի բունդեսլիգայի հետնապահ «Հանգայի» հետ: Վերջինիս ղեկավարությունը հույս ունի նրա շնորհիվ շտկելու մրցաշարային իրավիճակը: 33-ամյա Լիտմանենն էլ նշել է, որ ամեն ջանք կգործադրի թիմին օգնելու համար:

3տարի Լիտմանենը հանրահայտ դարձել «Այաքսում», «Բարսելոնում» ու «Լիվերպուլում» հանդես գալիս: «Այաքսի» կազմում նա 1994/95 թթ. դարձել է չեմպիոնների գավաթակիր: Վերջին շրջանում նա հանդես էր գալիս ֆինական «Լահտիում», որից հեռացել էր անցյալ տարվա վերջին: Լիտմանենը Ֆինլանդիայի ազգային հավաքականի կազմում 93 խաղ է անցկացրել: Այժմ էլ նա հրավիրվել է հավաքական՝ մասնակցելու փետրվարին Կիպրոսում կայանալիք մրցաշարին:

Առաջին հնդկացին «Ֆորմուլա-1»-ում

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցարշավի աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ բոլիդի ղեկին հնդիկ մարզիկ կնստի: «Զորդանը» պայմանագիր է կնքել Ներեյն Կարտիկեյանի հետ: 28-ամյա մարզիկը վերջին 3 տարիներին փորձարկող վարորդ էր աշխատել «Զորդան», «Յագուար» եւ «Մինարդի» թիմերում: Երկու տարի «Մինարդին» նրան առաջարկել է դառնալ հիմնական վարորդ, սակայն Կարտիկեյանը հնարավորություն չի ունեցել անհրաժեշտ մուտքավճարը վճարելու:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Տնտեսություն

Դրամավարկային տեղեկատու

Հունվարի 27-ից փետրվարի 3-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան նվազել է 653 մլն դրամով եւ փետրվարի 3-ին կազմել 116 մլրդ 508 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) աճել են 4 մլրդ 652 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները նվազել են 5 մլրդ 305 մլն դրամով:

Հունվարի 21-27-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է 3 մլրդ 320 մլն դրամով եւ հունվարի 27-ին կազմել 270 մլրդ 533 մլն դրամ (ընդգրկված են 20 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 448 մլն դրամով, կազմելով 84 մլրդ 276 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները աճել են 427 մլն դրամով եւ կազմել 30 մլրդ 144 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 79 մլն դրամով եւ կազմել 15 մլրդ 230 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 4 մլրդ 117 մլն դրամով եւ կազմել 140 մլրդ 882 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 74 մլրդ 275 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 2 մլրդ 918 մլն դրամով), ժամկետայինները՝ 66 մլրդ 608 մլն դրամ (նվազումը՝ 1 մլրդ 199 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հունվարի 27-ից փետրվարի 3-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել են 500 մլն դրամի 20-շաբաթյա ՊՊ՝ 4,2676 տոկոս տարեկան եկամտաբերությամբ եւ 1 մլրդ դրամի 19-շաբաթյա ՊՊ՝ 4,1896 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը ներգրավել է 2 մլրդ 200 մլն դրամի ավանդ՝ տարեկան 1,75 տոկոս տոկոսադրույքով եւ մարել 400 մլն դրամի ավանդ՝ տարեկան 1,75 տոկոս տոկոսադրույքով:

Նշված ժամանակահատվածում մարվել են 670,319,205 դրամի հակադարձ ռեպո-համաձայնագրեր՝ 4,5 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Արտարժույթի շուկա

Հունվարի 27-ից փետրվարի 3-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեւավորվել է 0,61 տոկոսով՝ 481,07 դրամից հասնելով 478,13 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 53,438 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 483,82 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը գնել է 9 մլն 700 հազ. ԱՄՆ դոլար՝ 476,72 դրամ փոխարժեքով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ
«ՌԱԴԻՈԼՈՒՐ»
լրատվական-վերլուծական ծրագիր
ամեն օր՝ ուղիղ եթերում
ժամը 6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00,
15.00 (հայերեն եւ ռուսերեն),17.00, 18.00, 22.00, 23.00
Օդերաչիվ լրատվություն՝
On-line ռեժիմով
www.armradio.am

ARMENTEL
ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ
ARMENIA TELEPHONE COMPANY

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտել» ՀՁ ՓԲԸ հայտարարում է մրցույթ Ազատության 24/1 մասնաճյուղի մուտքի եւ ելքի հսկման համակարգի մատակարարման եւ տեղադրման համար:

Այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին՝ պետք է գրանցված լինեն պետական ռեգիստրում եւ ունենան համապատասխան լիցենզիա:

Մրցույթի առաջարկները կգնահատի մրցութային հանձնաժողովը: Հանձնաժողովը որոշումներ կընդունի ձայների պարզ մեծամասնությամբ: Հաղթողին որոշելու կարգը (գնահատման չափանիշները) մանրամասն նկարագրված է կանոնակարգում՝ մրցույթի հրավերում:

Առաջարկի հետ մասնակիցները պետք է ներկայացնեն բանկի կողմից թողարկված երաշխավորագիր (մասնակցության համար): Մասնակցության երաշխավորագրի մանրամասները նշված են մրցույթի հրավերի համապատասխան կետում:

Մրցույթի անցկացման պայմանները եւ մրցութային լոտի մանրամասն նկարագրերը շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ 2005 թ. փետրվարի 8-ից մինչեւ մարտի 9-ը հետեւյալ հասցեով. «Արմենտել» ՀՁ ՓԲԸ, Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ՝ 28-70-66:

Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը՝ 2005 թ. մարտի 9-ին, ժամը 15.00-ն:

Մրցույթի հայտերի բացման հատուկ նիստը տեղի կունենա 2005 թ.-ի մարտի 14-ին, ժամը 12:00-ին «Արմենտել» ՀՁ ՓԲԸ, 375014 Երեւան, Ահարոնյան 2, 6-րդ հարկ, 602 սենյակում, իսկ մրցույթի հայտերն ամփոփելու նիստը՝ 2005 թ. մարտի 28-ին, ժամը 15:00-ին, նույն հասցեով:

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը փետրվարի 4-ի նիստում կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքները թողեց անփոփոխ. կնքվող ռեպո-համաձայնագրերի տոկոսադրույքը՝ տարեկան 4,5, տրամադրվող լոմբարդային վարկերինը՝ 16, իսկ ներգրավվող ավանդներինը՝ 1,75 տոկոս:

***

ԿԲ մամուլի ծառայությունը հրապարակում է հունվարի 8-20-ն ընկած ժամանակահատվածում ձեւավորված մակրոտնտեսական իրավիճակի եւ ֆինանսական շուկայի միտումների նկարագիրը.

Մակրոտնտեսական իրավիճակ. Ըստ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների, հունվարի 10-20-ը գրանցվել է -0.14% գնաճ:

Հունվարի 8-20-ն ընկած ժամանակահատվածում բյուջեի միջին օրական հարկային եկամուտները կազմել են մոտ 1 մլրդ դրամ:

Դրամավարկային քաղաքականություն Հաշվետու ժամանակահատվածում փողի բազան նվազել է 17 մլրդ 68 մլն դրամով՝ կազմելով 116 մլրդ 717 մլն դրամ: Փողի բազայի նվազումն ուղեկցվել է ՁԱԱ-ի 94 մլն դրամ եւ ՁՆԱ-ի 16 մլրդ 975 մլն դրամ նվազմամբ:

ՁԱԱ-ի նվազումը պայմանավորված է եղել արտաքին պարտքի եւ արտաքին պարտքի տոկոսագումարի վճարմամբ՝ համապատասխանաբար 60 եւ 88 մլն դրամ գումարների չափով: Այլ ակտիվներն աճել են 54 մլն դրամով:

ՁՆԱ-ի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել կառավարության եւ բանկերի պարտավորությունների նվազումով: Կառավարության պարտավորության նվազումը կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 27 մլրդ 48 մլն դրամ ծախսման, 35 մլրդ 980 մլն դրամ կառավարության դեպոզիտների աճի եւ ԿԲ արժեթղթերի պորտֆելի 35 մլն դրամ գումարի չափով նվազման արդյունքի է:

Բանկերի պարտավորությունների 7 մլրդ 625 մլն դրամով նվազումը պայմանավորված է եղել 9 մլրդ 150 մլն դրամ գումարի չափով ավանդի ներգրավմամբ, որին զուգահեռ մարվել է 4 մլրդ 700 մլն դրամ գումարի չափով ավանդ, ինչպես նաեւ 2 մլրդ 18 մլն դրամ հակադարձ ռեպո գործարքի կնքմամբ եւ 1 մլրդ 157 մլն դրամ ռեպո գործառնության մարմամբ: Զուտ այլ ակտիվները նվազել են 382 մլն դրամով:

Հունվարի 14-ին նախորդած շաբաթվա ընթացքում փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) նվազել է 2 մլրդ 194 մլն դրամով եւ կազմել 281 մլրդ 444 մլն դրամ: Շրջանառության մեջ եղած կանխիկը նվազել է 4 մլրդ 905 մլն դրամով, իսկ ավանդներն աճել են 2 մլրդ 711 մլն դրամով: Ցպահանջ արտարժութային ավանդներն աճել են 1 մլրդ 671 մլն դրամով, իսկ ցպահանջ դրամային ավանդները նվազել են 914 մլն դրամով: Ժամկետային արտարժութային ավանդներն աճել են 2 մլրդ 108 մլն դրամով եւ կազմել 68 մլրդ 107 մլն դրամ: Պայմանավորված վերոգրյալով՝ դրամային զանգվածը նվազել է 5 մլրդ 973 մլն դրամով եւ հունվարի 14-ին կազմել 136 մլրդ 70 մլն դրամ:

Ֆինանսական շուկայի միտումները Այդ ժամանակաշրջանում թղթակցային հաշիվների միջին մակարդակը կազմել է 25,939 մլն դրամ, իսկ պարտադիր պահուստավորումը՝ 16,966 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ներքին արժութային շուկայում, ՊՊ առաջնային եւ երկրորդային շուկաներում դիտվել են հետեւյալ միտումները:

Ներքին արժութային շուկա Արտարժութային շուկայում առեւտրային բանկերի կողմից իրականացված գործառնություններ համախառն ծավալը կազմել է 98 մլն ԱՄՆ դոլար, որից 51 մլն ԱՄՆ դոլարի առք եւ 47 մլն ԱՄՆ դոլարի վաճառք՝ համապատասխանաբար 494.64 եւ 497.13 դրամ միջին կշռված փոխարժեքներով:

Արտարժույթի շուկայում ձեւավորված ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ չնչին արժեզրկվել է՝ 493.37 դրամից մեկ ԱՄՆ դոլարի դիմաց հասնելով մինչեւ 493.43 դրամի:

ՊՊ առաջնային շուկա Տեղի է ունեցել ՊՊ-երի 1 թողարկում: Տեղաբաշխվել է 26-շաբաթյա պարտատոմս՝ 1 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որի նկատմամբ պահանջարկը կազմել է 1 մլրդ 343 մլն դրամ (134.31%)՝ արդյունքում ձեւավորելով 4.34% միջին կշռված եկամտաբերություն:

ՊՊ երկրորդային շուկա Իրականացվել է 1 մլրդ 669 մլն դրամի գործարք՝ 4.05% միջին կշռված եկամտաբերությամբ: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 910 մլն դրամի գործարք՝ 3.71%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 759 մլն դրամի գործարք՝ 4.45%-ով:

Միջբանկային ռեպո գործառնություններ Միջբանկային շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է 1 մլրդ 417 մլն դրամ՝ 4.37% միջին կշռված տոկոսադրույքով: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 306 մլն դրամ ծավալով ռեպո գործարք՝ 3.90%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 1 մլրդ 111 մլն դրամ ծավալով գործարք՝ 4.50%-ով:

Հաջորդ երկշաբաթյա ժամանակահատվածի ծրագրավորում Հունվարի 21-ից փետրվարի 3-ն ընկած ժամանակահատվածում փողի բազայի ցուցանիշը կկազմի 119 մլրդ 461 մլն դրամ:

Ըստ ծրագրավորման, կիրականացվի արտաքին պարտքի տոկոսագումարի վճարում՝ 26 մլն դրամ գումարի չափով, ինչպես նաեւ անդամակցության գումարի վճարում՝ 1 մլրդ 50 մլն դրամ գումարի չափով: Այս ընթացքում ակնկալվում է նաեւ 970 մլն դրամի չափով հոլանդական կառավարության կողմից տրամադրվող դրամաշնորհի ստացում: Վերոհիշյալ հոսքերը կհանգեցնեն ՁԱԱ-ի ցուցանիշի 105 մլն դրամի նվազմանը:

Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը, ըստ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության բյուջետային հարցերի հանձնաժողովի տվյալների, կածի 230 մլն դրամով՝ պայմանավորված կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 2 մլրդ 97 մլն դրամ գումարի ծախսմամբ, ինչպես նաեւ կառավարության դեպոզիտների 1 մլրդ 867 մլն դրամ գումարի չափ աճով: Բանկերի պարտավորությունները կաճեն 2 մլրդ 620 մլն դրամով եւ կկազմեն 7 մլրդ 852 մլն դրամ՝ պայմանավորված 4 մլրդ 450 մլն դրամ ավանդի եւ 670 մլն դրամ հակադարձ ռեպո գործարքի մարմամբ: Ակնկալվում է նաեւ 2 մլրդ 500 մլն դրամ գումարի չափով ավանդի ներգրավում:

Վերոհիշյալ փոփոխությունները կհանգեցնեն ՁՆԱ-ի 2 մլրդ 849 մլն դրամի աճին:

Միաժամանակ կառավարության կողմից ծախսերի թերակատարման դեպքում եւ դրամի կտրուկ արժեւավորման պարագայում ԿԲ-ը հանդես կգա արտարժույթի առքի գործառնությամբ: Այսպիսով, հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաեւ մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եւ ֆինանսական շուկաներում առկա միտումները, ԿԲ խորհուրդը որոշեց տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ բանկերից ներգրավված ավանդների համար՝ 1.75%, ռեպո համաձայնագրերի համար՝ 4.5%, լոմբարդային վարկերի համար՝ 16%:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ Կենտրոնական բանկը 8.02.2005թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	474.05	469.30	478.80
EUR	1	ԵՎՐՈ	608.87	605.20	612.50
RUR	1	Ռուս. ռուբլի	16.86	15.80	17.90

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO
www.azg.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում Արմինե Վարդանյանի դիմումը՝ **Լորիս Կոլյայի Վանյանին** (ծնված 1964 թ., բնակվել է ք. Աբովյան, III միկրոշրջան, 21բ շենք, թիվ 12 բնակարանում), մահացած ճանաչելու պահանջի մասին:

«ԳԳ եւ ՌԳ» ՍՊԸ-ն
իրականացնում է
անշարժ եւ շարժական գույքի գնահատում:
Լիցենզիա՝ ԱԳ N 0517
Հասցեն՝ ք. Երեւան,
Կորյունի 19ա V հարկ
Հեռ.՝ 52-06-90, 52-95-11
(09) 50-40-22

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-63

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 7. 02. 2005 Գինը՝ 100 դրամ